2.- Ափրիկեցի խափշիկ տղայ մը: Ծակատը ճակատի միացած:

Այս նկարին մէջ տեսնուող դեղին աղջիկը եւ խափշիկ տղան՝ բնութեան օրէնքներուն բոլորովին հակառակ ըլլալով ստեղծուելիք Արեւմտեան Աշխարհին, նոր խառնածին ցեղին տիպարներն են:

Այս նկարը՝

Զանցի մը տասնեակ տարիներ առաջ, աշխարհի ամենէն քաղաքակիրթ երկիրը եղող, բայց այսօր հրեական աշխարհակալ կայսրութեան խամաճիկին վերածուած Ջուիցերիոյ մէջ, «Swissair» ընկերութեան կողմէ աշխարհի ամէն կողմերը կը բաշխուի՝ իբր ապագայ «հանդիպում»ներու խորհրդանիշ:



2001 թուականի Ապրիլ 22-ին,
 Կիրակի օրը, ժամը 12-ին,
 Կլենտլլի

VERDUGO HILLS COUNTRY CLUB-ում
 (400 W. Glenoaks Blvd., Glendale)

Տեղի կ'ունենայ Լոս Անձելլեսի

«ԳԻՒՄՐԻ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 ՀԱՇՈՒԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ
 «ԳԻՒՄՐԻ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
 ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 86-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Արևմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի որոշումով, Երեքշաբթի, Ապրիլ 24-ին, Մեծ Եղեռնի 86-րդ Տարեդարձին առթիւ, առաւօտեան ժամը 10:30-ին հանդիսաւոր Սուրբ Պատարագ պիտի մատուցուի եւ ապա Հոգեհանգստեան Պաշտօն կատարուի Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցոյ մէջ, որուն հասցէն է.

17231 Sherman Way, Van Nuys, tel. (818) 344-4860

Ապրիլ 24-ի արարողութեան պիտի մասնակցին Արևմտեան Թեմի Հարաւային Գալիֆորնիոյ հետեւեալ եկեղեցիները.-

Ս. Յովհաննու Կարապետ՝ Հալիվուտ, Ս. Յակոբ, Լոս Անձելլոս, Ս. Սարգիս Իսթ Լոս Անձելլոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ Փասատինա, Ս. Պետրոս՝ Վէն Նայս, Ս. Գէորգ՝ Կլենտլլ, Հայց. Եկեղեցի Լա Վըրնի եւ Ս. Աստուածածին՝ Գոսթա Մեսա:

Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցի, միասնաբար աղօթելու եւ իրենց յարգանքը մատուցանելու մեր քիւրաւոր նահատակներու անմեռ յիշատակին:

Ո Գ Ե Կ Ո Չ ՈՒ Մ

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 86 ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ
 ՀՍԿՈՒՄԻ ԵՒ ԱՂՕԹ-ՐԻ ԵՐԵԿՈՅ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
 ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ
 (Կրօնական Յանձնախումբ)

Կլենտլլի Ս. Գիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ մէջ.

Երեքշաբթի, 24 Ապրիլ, 2001, երեկոյեան ժամը 7-9

Ժամը 7-ին՝ Ս. Ժամ (խորհրդածութիւն, նահատակուածներէն օրինակներ, աղօթք. Ս. Գիրքէն Հատուածներու ընթերցում):

Ժամը 8-ին՝ Ս. Պատարագ

Ժամը 8:30-ին՝ Թափօր, Հոգեհանգստեան պաշտօն, եւ յորդոր՝
 Նահատակաց յուշարձանին առջեւ:

**4. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՒԹԱՖԵԱՆ
ՅՆՈՐԵԼՈ՞ՒՆ ՊԱՏՃԱՌԱԻ ԹՐՔԱՄՈԼ ԵՂԱԾ
Է ԹԷ՞ ԱՍՈՐ ՀԱԿԱՌԱԿՆ Է ՃԻՇԴԸ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷՑ ՈՌԻՐԷՆԵԱՆ]**

Մեսրոպ Մուրաֆեան Պոլսոյ մէջ, դեռ պատրիարք չընտրուած, իբր վարդապետ, յետոյ իբր եպիսկոպոս՝ շատ խստապահանջ կրօնական մ'ըլլալու համբաւ ունէր:

Եկեղեցիներու մէջ, արարողութիւններուն ներկայ եղող և գլուխն լաչակով չծածկող կանանց, իր քարոզներուն մէջ, կը պախարակէր և եկեղեցիէն հեռանալ կը ստիպէր անոնց:

Կնունքներու և նման արարողութիւններու ընթացքին, կրօնական պատշաճութիւնները չգիտցող անձերը կը յանդիմանէր:

Այդ պատճառաւ, շատ մը անձերու կողմէ, չէր սիրուած:

Մենք, Մեսրոպ Մուրաֆեանին այս խստապահանջութիւնները, օրէ օր իր աւանդութիւններէն հեռացող հայ ժողովուրդին համար օգտակար կը նկատէինք, կը գնահատէինք նոյնիսկ:

4. Պոլսոյ Պատրիարք Գարեգին Գազանճեանին վախճանումէն յետոյ, երբ նոր Պատրիարք մը ընտրելու թուականը մօտեցաւ, երկու առաջնակարգ թեկնածուներ նկատուեցան՝

Ա. ... Ծահան Արք. Սվաճեան, Բ. ... Մեսրոպ Արք. Մուրաֆեան:

Այդ շրջանին, մենք պիտի խոստովանինք, որ կրօնական ըլլալէ աւելի վաճառականի յատկութիւններ ունեցող Ծահան Սվաճեանին տեղ, կը նախընտրէինք Մեսրոպ Մուրաֆեանին ընտրութիւնը՝ իբր Պատրիարք: Նկատելով, որ Մուրաֆեան շատ աւելի հայ կրօնականի վայել կեցուածք ունէր:

Ծատ զարմանալի երեւոյթ է, որ այդ օրերուն, թուրքերը կը կասկածէին Մուրաֆեանին և անոր Պատրիարք ընտրուելուն կը հակառակէին: Եւ կամ՝ այդպէս կը ձեւացնէին:

Մեսրոպ Մուրաֆեան թուրքերուն այս կասկածները փարատելու համար, առաջնակարգ թուրք պետական ղեկավարներուն այցելութեան գնաց, և անոնց հետ առանձին տեսակցութիւններ ունեցաւ:

Բնական է՝ սրբազանին թուրքերուն հետ ի՞նչ խօսած ըլլալը չենք կրնար գիտնալ:

Բայց միջոց մը ետք տեսանք, թէ թուրքերը իր մասին լեզունին փոխած են:

Եւ ի վերջոյ անոնք՝ Մ. Մուրաֆեանին Պատրիարք ընտրուելուն համամտութիւն յայտնեցին:

Կ'ուզենք, որ սա պարագան եւս յստակ ըլլայ, թէ՛ առանց թուրքերուն հաւանութեան, հայ կրօնական մը Պոլսոյ Պատրիարք չի կրնար ընտրուիլ: Եւ, իբր թէ, Պատրիարքին ընտրութիւնը ազատ կ'ըլլայ, մինչդեռ, անոր ընտրութիւնը ձեւակերպութիւն մըն է: Իսկ իրականութիւնը այն՝ որ Պոլսոյ Պատրիարքը թուրքերուն կողմէ կը նշանակուի:

Եւ աղուէս թուրքերը ո՞վ գիտէ, Մուրաֆեանին մէջ ի՞նչ «յատկութիւններ» տեսան, որ ընդունեցին անոր Պատրիարք ընտրուիլը:

**4. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՒԹԱՖԵԱՆ
ՅՆՈՐԵԼՈ՞ՒՆ ՊԱՏՃԱՌԱԻ ԹՐՔԱՄՈԼ ԵՂԱԾ
Է ԹԷ՞ ԱՍՈՐ ՀԱԿԱՌԱԿՆ Է ՃԻՇԴԸ**

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷՄ ՈՌՈՐԷՆՆԵԱՆ]

Աթոռը, իշխանությունը, մարդկային շատ մը տկարությունները մեջտեղ հանելու տեսակետով՝ իսկական փորձաքար մըն է:

Անձ կայ, որ աթոռին և իշխանության վայել է:

Եւ անձ ալ կայ, այս «աթոռ»ը, իշխանությունը չի մարսեր, հիւանդ կ'ըլլայ: Աթոռի, իշխանության հիւանդություն է ասոր անունը:

Մութաֆեանին պատրիարք դառնալէ ետք, գաւազանը ձեռքը նկարները տեսանք: Նկատեցինք, թէ անոր նայուածքը փոխուած է:

Մեծամոլութեան, չարութեան, աւելի ճիշդ՝ ցաւագարութեան նշոյլներ կային անոր նայուածքին մէջ:

Եւ միջոց մը ետք, իրականությունները մեջտեղ ելան:

Եւ Մետրոպ Մութաֆեան, Պատմութեան մէջ ոչ մէկ հայ Պատրիարքին չըրածը ըրաւ:

22-5-1999 թ.ին, իր շքախումբով, 1453-ին Պոլիսը գրաւած Ֆաթիհ Սուլթան Մեհմեդին դամբարանը [Turbe]ն այցելեց և հոն աղօթեց, և Ֆաթիհին շնորհակալութիւն յայտնեց, Պոլսոյ Պատրիարքութիւնը հիմնած ըլլալուն համար:

Այս՝ Մետրոպ Մութաֆեանին առաջին քայլերէն մէկն էր՝ դէպի թրքասիրութիւն, աւելի ճիշդ՝ դէպի արտառոցութիւն:

Այս թուականէն յետոյ, մէկը միւսին ետեւէն շարունակուեցան՝ անոր անմիտ և թրքավայել արարքները:

27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան նախընթած օրերն էին: Համայն հայութիւնը պատրաստութեան մէջ էր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան համար:

Եւ այդ օրերուն, Մութաֆեան, Ներսէս Արքեպս. Պոզապալեանին հետ, միասին դիմում կը կատարեն Հայաստանի կրօնական Գործերու նախարարին, թէ՛ Հայաստանի կառավարութիւնը կը միջամտէ կաթողիկոսական ընտրութիւններուն: Եւ զանգատ կը յայտնեն ըսելով, որ կարգ մը պետական անձնատրութիւններ՝ կ'աշխատին Գարեգին Ներսիսեանին Ա. Հ. կաթողիկոս ընտրել:

Ասկէ բացի՝ Մետրոպ Մութաֆեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի ներկայութեան կը սպառնայ ըսելով, որ եթէ Գարեգին Ներսիսեան Կաթողիկոս ընտրուի, ինք պիտի չճանչնայ այս ընտրութիւնը, և իբր Պոլսոյ Պատրիարք՝ իր անկախութիւնը պիտի հռչակէ և պիտի բաժնուի էջմիածինէն:

Այս տօնքիշօթական սպառնալիքներուն հետեւող օրը, Գարեգին Ներսիսեան Ամենայն Հայոց Կաթողիկոս կ'ընտրուի: Բայց, նոյն ժամերուն, «27 Հոկտեմբեր 1999»ի ողբերգութիւնը կը կատարուի:

Մետրոպ Մութաֆեան կը շշմի և կ'ընկճուի այս ցաւալի դէպքերուն ազդեցութեամբ: Եւ այս հոգեվիճակով Պոլիս կը վերադառնայ:

Բայց հայուն թշնամիները տեղեակ են անոր կատարած սպառնալիքներուն...:

Քանի մը շաբաթներ վերջ, Հայաստանի մօտ ամերիկեան դեսպանը Պոլիս՝ Պատրիարքարան կ'այցելէ, և Պատրիարքին հետ առանձին խօսակցութիւն մը կ'ունենայ:

Այս այցելութենէն յետոյ, Սրբազանը Երեւանի մէջ իր կատարած սպառնալիքները գործադրել կը սկսի:

Առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսին գիտակցութեան Վատիկան կ'երթայ, և Պապը Պոլիս կը հրաւիրէ:

Եւ 2000-ի ամրան էջմիածնի մէջ կայացած եկեղեցական ժողովին չ'երթար՝ դէպի Կեսարիա իր կատարելիք ուխտագնացութիւնը պատրուակելով:

Յետոյ, քննադատել կը սկսի, Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր իրաւասութեան սահմաններուն մէջ առած որոշումները:

Կը քննադատէ Կաթողիկոսին հայկական կառավարութեան հետ ստորագ-

**Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՒԹԱՖԵԱՆ
ՅՆՈՐԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌԱԻ ԹՐՔԱՄՈԼ ԵՂԱԾ
Է ԹԷ՞ ԱՍՈՐ ՀԱԿԱՌԱԿՆ Է ՃԻՇԴԸ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷՉ ՈՈՒՐԷՆԵԱՆ]**

րած գործակցութեան համաձայնութիւնը:

Կը քննադատէ Կաթողիկոսին իր աշխատակազմին մէջ կատարած փոփոխութիւնները:

Մինչ այդ, Ամերիկայի խորհրդարանին մէջ, հայկական ցեղասպանութեան ընդունուելու հարցը մէջտեղ կ'ելլէ:

Եւ այդ օրերուն, Մեսրոպ Մութաֆեան

նին Ամերիկեան խորհրդարանին մէջ հայկական ցեղասպանութեան ընդունման բանաձեւին արգելք ըլլալու նպատակով կատարած անարգ դիմումները, իր թըրքամոլութեան և կամ, աւելի ճիշդ՝ իր հոգեկան այլասերումի անհերքելի ապացոյցներն են:

Թուրքիոյ մէջ Մութաֆեան, իբր կրօնական, փոխանակ հեռու կենալու այս քաղաքական հարցերէն, եռանդուն պաշտպան կը ներկայանայ թրքական տեսակետին, և կը պախարակէ հայկական ցեղասպանութեան հարցին մէջ օտար պետութիւններուն հայանպաստ միջամտութիւնը:

Եւ այդ թուականէն ետք, ան, իր իսկապէս թրքահաճոյ կեցուածքով կ'աշխատի ապացուցանել, որ ինք կը գերազանցէ թուրքը:

Ալ ամէն օր, թրքական թերթերուն մէջ կը հրատարակուին, Պատրիարքին շարան-շարան նկարները՝ թուրք պետական երեսելիներուն հետ: Կա՛մ Պատրիարքը կ'այցելէ թուրք պետական անձնատրութիւններուն, կա՛մ թուրքերը կ'այցելեն Պատրիարքարան:

Եւ բնական է, որ թրքական թերթերը, Մութաֆեանը իրենց գրութիւններով «երկինքին եօթներորդ յարկը» կը բարձրացնեն, փայլուն գովասանքներով զինք ունեցուցած:

Բայց, այս թոհուրոհին մէջ, ամենէն զաւելտականը և նոյն ատեն ամենէն ցաւալի երեսոյթը՝ Մեսրոպ Սրբազանին թուրք պետական և քաղաքական իր երեսելի բարեկամներուն համար սարքած երկու հարիւր հոգինոց «IFTAR» ի ճաշկերոյթն է, որուն մասին 18-12-2000 թուակիր Պոլսոյ «Մարմարա» թերթին մէջ սապէս գրուած է՝

«ՅԱՅՅՆԵՆՔ, ՈՐ ԾԱԲԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ, ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ԳՐԵԹԷ ԲՈԼՈՐ ԿԱՅԱՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐԹԵՐԸ ՄԵԾԱՇՈՒՆԴ ԿԵՐՊՈՎ ԱՐՉԱԳԱՆԳ ՀԱՆԴԻՍԱԾԱՆ ԱՅՍ ԾԱՇԿԵՐՈՅԹԻՆ»:

* * *

Թերես մտածէք, թէ Պատրիարքին այս ըրած շողոքորթութիւնները, ունեցած տիրահաճոյ ընթացքը թուրքերուն հանդէպ՝ իր համայնքին, պոլսահայութեան օգտին համար է:

Այո, այս մէկը, տեսակետով մը, ճիշդ կրնայ ըլլալ. բայց պայմանաւ, որ այս պատրիարքը միայն իր համայնքին հոգերով զբաղէր և չխառնուէր և չմիջամըտէր Հայաստանի և Սփիւռքի հայութեան պահանջատիրական պայքարին, և չունենար հայ ազգին իրաւունքները ուրացող ընթացք, ի նպաստ թուրքերուն:

Այս մասին, 7 Սեպտեմբեր 1999-ին, «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ սապէս արտայայտուած էինք՝ 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան նախընթաց օրերուն:

«Նայեցէք Սրբազան՝ դուք և ձեր մանկլաւիկները ինչ որ կ'ուզէք ըրէք Պոլսոյ մէջ: Որչափ որ կրնաք քամակ ծռեցէք, շողոքորթութիւն ըրէք Պոլսոյ մէջ, թուրքերուն: Բայց, Պոլսոյ մէջ մնացէք. Պոլսէն դուրս մի ելլէք: Ոտք մի կոխէք երբեք Սուրբ Էջմիածին, և Չեր թրքասիրութեամբ՝ մի աղտոտէք այս սուրբ վայրը:

* * *

4. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՒԹԱՖԵԱՆ ՅՆՈՐԵԼՈ՞ՒՆ ՊԱՏՃԱՌԱԻ ԹՐՔԱՄՈԼ ԵՂԱԾ Է ԹԷ՞ ԱՍՈՐ ՀԱԿԱՌԱԿՆ Է ՃԻՇԴԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷՎ ՈՌԻՐԷՆԵԱՆ]

* * *

Բայց այս հոգեւորականին թրջասիրութեամբ ապականած հոգին և մարմինը, կոխեցին Էջմիածնի Սուրբ հողը:

Եւ Մութաֆեան Հայաստանի մէջ այն օրերուն, հայկական կառավարութեան դէմ կատարած իր անվայել ամբաստանութիւններով, 27 Հոկտեմբեր 1999-ի չարագուշակ «մունետիկ»ը եղաւ:

Բայց ինք, հակառակ կատարուած ողբերգութեան ցաւալի հետեւանքներուն, իր մէջ որեւէ խղճի խայթ չունեցաւ, և Պոլիս վերադառնալէ յետոյ ինքնագիտակցութեան չեկաւ, և շարունակեց ազգավնաս գործունէութիւնը Էջմիածնի և Հայ Դատի դէմ:

Բայց վերջերս, Մութաֆեանին կատարած մէկ ուրիշ հայավնաս գործունէութեան ալ տեղեակ եղանք: Եւ ան, այս անգամ, իրեն գործակից ունի, դժբախտաբար, Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդ Խաժակ Պարսամեանը:

Բոլորին ծանօթ է, որ տարիներէ ի վեր Հայաստանեայց Եկեղեցին, Հայաստանը և Սփիւռքը, միասնաբար կը պատրաստուին տօնելու 1700-ամեակը Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն ընդունման, [ըլլալով առաջինը աշխարհի մէջ] որ կատարուեցաւ 301 թ.ին:

Այս տօնակատարութեան նպատակն է նաե՛ւ, հայութեան մէջ խորացնել և ամրապնդել հայկական միասնութեան ոգին:

Եւ այս հեռանկարով Սփիւռքի հայութիւնը կը հրաւիրեն, որ այցելեն Հայաստան և Ս. Էջմիածին:

Բայց Պոլսոյ Պատրիարքը, կարծես խափանելու համար 1700-ամեակի համազգային նշման աշխատանքները և ձեւով մը արգելակելու համար Սփիւռքի հայութեան դէպի Հայաստան այցելութիւնը, ինքն ալ իր կողմէ, նոյն թուականներուն, թրջական "Pacha-Tours" ընկերութեան միջոցաւ, ամերիկահայերուն համար դէպի Թուրքիա ճամբորդութիւն մը կը կազմակերպէ:

Բայց շատ աղուէսօրէն և շատ փայլուն, բայց խաբուսիկ խօսքերով:

Նայեցէք թրջական "Pacha-Tours" ընկերութեան այս ճամբորդութեան տուած անունը.

"In The Footsteps Of St. Gregory The Illuminator"- [Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին ոտքի հետքերով] From Geasarea To Etchmiadzin 4 to 18 June 2001, [Կեսարիայէն դէպի Էջմիածին, 4 Յունիսէն մինչեւ 18 Յունիս 2001]:

Մեսրոպ և Խաժակ սրբազանները իրենց Pacha-Tours-ի հետ գործակցութեամբ կազմակերպած այս շրջապտոյտը, «Սրբ. Գրիգոր Լուսաւորիչին ոտքի հետքերով Կեսարիայէն դէպի Էջմիածին» անուանած են պարզապէս հաւատացեալ հայ ժողովուրդը հրապուրելու համար:

Որովհետեւ, ոչ Կեսարիոյ մէջ և ոչ ալ թուրքերուն գրաւած Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն ոչ մէկ հետք չէ մնացած այսօր:

Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մնացած հետքերը կը գտնուին միայն այսօրուան Հայաստանի հողերուն վրայ: Խոր վիրապէն սկսեալ հայկական միւս պատմական բոլոր յուշարձանները Հայաստանի մէջ են:

Թուրքերուն գրաւած հայկական հողերուն վրայ ոչ միայն Ս. Գրիգոր Լուսաւորիչէն հետք չէ մնացած, այլ տասը հազարէ աւելի հայկական

(Օտրք՝ էջ 11)

10/12/140

եկեղեցիները, վանքերը, հայկական յուշարձանները, բոլորն ալ, թուրքերուն կողմէ քանդուած են:

Օտար ականատեսներ կը պատմեն, թէ Իսմէթ Ինէօնի ըսուած հրէշին հրամանով, հարիւրաւոր թուրք զինուորներ օրերով աշխատած են, որ ուժանակներով օդը հանեն հայկական վանքերը և եկեղեցիները:

Այդ օտարականը զինուորներուն հրամանատարին կը հարցնէ. «Ինչո՞ւ կը փլցնէք այս յուշարձանները, ի՞նչ վնաս ունին ձեզի»: Հրամանատարը կը պատասխանէ. «Ինէօնիւն հրաման եկաւ: Հայերէն հետք պէտք չէ մնայ»:

1950-ին Սեբաստիոյ մէջ զինուորական ծառայութիւն ընող մեր ընկերը պատմած էր մեզի. «Սեբաստիոյ մայր եկեղեցին որ Պոլսոյ ամենէն մեծ եկեղեցին եղող «Ս. Երրորդութիւն» եկեղեցիէն ալ աւելի մեծ և հոյակապ կառոյց մըն էր, շաբաթներէ ի վեր զինուորները կ'աշխատէին զայն փլցնելու համար, բայց չէին յաջողեր:

Իրենց հարցուցի. «Ինչո՞ւ կը փլցնէք այս եկեղեցին»: «Փլչելու վտանգ կայ» պատասխանեցին: «Ի՞նչ փլչելու վտանգէ կը խօսիք: Ես հոս զինուորութիւն կ'ընեմ, շաբաթներէ ի վեր ձեր աշխատանքներուն հետուէն կը հետեւիմ և կը նկատեմ, որ եկեղեցին դեռ կանգուն է: Չկրցա՞ք փլցնել» առարկեցի հաստատական...:

Ջարդարար թուրքերը մինչեւ 1915 և նաեւ մինչեւ 1923, այդ հողերուն տէրերը եղող հայերը ցեղասպանութեան ենթարկելէ և անոնց հայրենիքը գողնալէ ետք՝ հայերէն մնացած բոլոր յուշարձաններն ալ քանդեցին որ կարենան պատմութիւնն ալ բոլորովին խեղաթիւրել և ըսել. «ԱՅՍ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՀԱՅԵՐ ՉԵՆ ԱՊՐԱՍ»:

* * *

Եւ հայու անուն կրող մեր այս երկու կրօնականները՝ Մեսրոպ Մութաֆեան և Խաժակ պարսամեան, 1915-ին թուրքերուն ցեղասպանութեան ենթարկած նահատակ-ժողովուրդին շառաւիղները եղող Ամերիկայի հայերը՝ զանազան և զարմանազան նպատակներով Թուրքիա բերել կ'ուզեն, սուտ լրզունգներով և Աւետարանէն մէջբերումներ ընելով, և ամենէն հասարակ ծանուցումներուն մէջ կատարուած գովաբանութիւններով, այս ճամբորդութեան մասնակցի կը յանձնարարեն ամերիկահայերուն: Եւ Թուրքիա կատարուելիք այս ճամբորդութիւնը «Պատմական Ուխտագնացութիւն» կը կոչեն:

Իրականութեան մէջ, Յունիս 4-էն մինչեւ 18 Յունիս 2001՝ տասնհինգ օր տեւող այս ճամբորդութեան 10 օրը Թուրքիոյ մէջ կ'անցնի և միայն հինգը՝ Հայաստան:

Այս հինգ օրուան 2 օրն ալ, Թուրքիայէն Հայաստան երթ ու դարձով կ'անցնի: Կը մնայ միայն երեք օր՝ Հայաստանը տեսնելու համար:

Այս տեսակէտով մենք իրաւունք կ'ունենանք ըսելու, թէ այս ճամբորդութիւնը դէպի Թուրքիա՝ ուղեւորութիւն մըն է, և ոչ մէկ կապ ունի Հայաստանի կազմակերպած 1700-ամեակի հանդիսութեան հետ: Եւ պիտի ծառայէ միայն թուրքերուն գրպանները լեցնելու:

Եւ այս՝ այն օրերուն, երբ Հայաստան և իր ժողովուրդը անմիջականօրէն պէտքն ունին Սփիւռքի հայութեան նիւթական և մանաւանդ հոգեկան աջակցութեան:

Երկու հայ բարձրաստիճան կղերները ի՞նչ խիղճով Ամերիկայի հայերը և անոնց պապերուն նահատակուած հողերուն վրայ պտոյտի տանիլ կ'ուզեն, այն հողերուն՝ որոնք այսօր թրջականի վերածուած են: Եւ այն Թուրքիոյ մէջ ուր, 18 Յունուար 2001-ին, Ֆրանսական Ազգային ժողովին մէջ Հայկական Ճեղասպանութեան պաշտօնապէս ընդունուելուն պատճառաւ, թրջական հեռատեսիլները կատարի յարձակումներ կը գործեն հայոց դէմ, և ֆիլմերով և նկարներով կը պնդեն, թէ հայերն են որ թուրքերը ջարդած են:

Այսօր, Թուրքիա կոչուած այս ջարդարարներու երկիրը ապրող հայերէն շատ շատեր, և Թուրքիա պտոյտի գացող հայերը մանաւանդ, իրապէս որ հայկականութեան որեւէ «ջիղ» և մանաւանդ «արժանապատուութիւն» ըսուած բանը չունին իրենց հոգիներուն մէջ:

12/12/140

Ամերիկայի արեւելեան թեմի առաջնորդին իր թեմի ժողովուրդին ուղղած ծանուցում-գովազդը 7 էջերէ բաղկացած է: Ամբողջովին անգլերէն լեզուով գրուած յայտարարութեան առաջին երկու էջերը՝ դէպի Թուրքիա կազմակերպուած ճամբորդութեան գովաբանութեամբ լեցուն են:

Մնացեալ 5 էջերը կը բովանդակեն «Փաշա-Թուրզ» ընկերութեան գրասենեակին դէպի Թուրքիա կատարուելիք ճամբորդութեան մանրամասնութիւնները:

Pacha-Tours-ին գովազդին մէջ, կայ պաշտօնական հրաւեր-գրութիւնը Պոլսոյ Պատրիարքին որ, Նիւ Եորքի իր հոգեւոր եղբօր՝ Պարսամեանի նման, Թուրքիա կատարուելիք ճամբորդութիւնը կը գովաբանէ:

Մենք, դէպի Թուրքիա կատարուելիք նման զբօսապտոյտի մը կազմակերպման բուն նպատակը քողագերծելով ըսած էինք, թէ՛ «Էջմիածնի 1700-ամեակի հանդիսութիւնները խափանելու և Սփիւռքի հայութեան Հայաստան երթալուն արգելք ըլլալու համար է»:

Բայց ուրիշ պատճառներ ալ կա՞ն արդեօք:
Որովհետեւ թրքական «Փաշա-Թուրզ» ընկերութեան կազմակերպած այս շրջապտոյտին 15 օրուան գինը՝ Ամերիկայէն մեկնող ամէն մէկ հայու համար նուազագոյնը երեք հազար վեց հարիւր ամերիկեան տոլար է, որ գրեթէ քսանհինգ հազար Ֆրանս. ֆրանք կ'արժէ:

Մենք, այս օրերուն, Նիսի մէջ, Ֆրանսայէն դէպի Թուրքիա ճամբորդութեան ծանուցումներ տեսանք, որ 7 օրուան համար 2990 [450\$] ֆրանք կ'առաջարկեն: Իսկ երկու շաբաթ տեւելիք զբօսապտոյտի մը համար՝ ֆրանսայէն Թուրքիա, 15 օր՝ 900 տոլար: Ամերիկայէն՝ 3600 տոլար՝ 15 օր Թուրքիա:

Մենք համոզուած ենք, որ «Փաշա-Թուրզ»ի գինը բաւական չափազանցուած գումար մըն է: Եւ նաեւ կը կարծենք, թէ «Կեսարիայէն դէպի Էջմիածին» ան-

ԵՒ ՄԱՆԻՑ ԷՆ ԱՆԴԻՆ (Շար. էջ 8-էն)

- սկզբում գերմաներէն, այնուհետեւ ֆրանսերէն, Հարցրեց.*
 - Դուք էլ էք եկե՞լ ինձ ճապարհելու... Հապա ինչո՞ւ վարդեր չէք բերել...
 - Երիտասարդը չափազանց յուզուած պատասխանեց.- Ոչ, տիկին... Ես այս գնացքի ուղեւորներից եմ...*
 - Այդ ժամանակ, կոմսուհին դառնալով լէյտենանտին, ասաց.*
 - Ահ, Իշտվան, դուք ինձ այսպէս աւելի էք դուր գալիս:
 - Ներկաները ծիծաղեցին այս խօսքերից, իսկ կոմսուհին աւելացրեց.*
 - Շնորհակալ եմ վարդերի համար: Դուք կարող էք վերադառնալ զօրանոց և Հանգիստ լինել... վերջիվերջոյ ինձ Հետ նոյն գնացքում էք լինելու:— Այնուհետեւ կոմսուհին դիմեց անծանօթ երիտասարդին.— Իսկ կարո՞ղ եմ իմանալ, թէ ուր էք գնում:
 - Լոզան,— պատասխանեց երիտասարդը, առաջացնելով բոլորի քրքիշը:
 - Շնորհակալ եմ Իշտվան,— ասաց կոմսուհին,— դուք իսկական ասպետ էք, չէ՞ որ մինչեւ վերջ ուղեկցելու էք ինձ:
 - Քիչ աւելի ուշ ես կարողացայ պարզել, որ անծանօթ երիտասարդը ազգակցական ոչ մի կապ չունի լէյտենանտի, բնականաբար, և կոմսուհու Հետ: Նա գալիս է Կոստանդնուպոլսից, Թուրքահայտակ է, դաւանանքով՝ Հայ քրիստոնեայ, անունն է՝ Ռուբէն Զիլինկիրեան: Նա իսկապէս ուղեւորոււմ է Լոզան՝ տեղի համալսարանում*

0 /

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ցաւով լսեցինք լիբանանահայ ծանօթագրայիններէն՝ [վերջերս Մ.Նահանգներ հաստատուած] Պրն. Մելինոն Գօրուֆեանի մահը, որ պատահած է ԱՄՆ-ի մէջ:

«Նայիրի» իր ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալի այրիին, զաւակներուն, Ղորղորեան - Մանկոյեան ընտանիքներուն և իրենց հարազատներուն:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ցաւով կ'արձանագրենք անակնկալ և կանխահաս մահը՝ Ժպէյլի Թոչնոց Բոյնի խնամակալութեան անդամ Պրն. Գէորգ Հալաբեանի, որ պատահած է շաքաւ մը առաջ:

«Նայիրի» իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանիքին, հարազատներուն և մասնաւորաբար՝ Տէր և Տիկ. Մանուկ Հալաբեանին:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ցաւով լսեցինք Տիկ. Սիլվա Պատմանեանի [ծնեալ Տէմիրեան] մահը որ պատահած է Չորեքշ. 17 Յունուար 2001-ին:

«Նայիրի» իր ցաւակցութիւնները կը յայտնէ ողբացեալի ամուսնոյն՝ Պրն. Պետրոս Պատմանեանին և զաւակներուն, մօր, և յատկապէս՝ Տէր և Տիկ. Տօֆ. Նուրիճեան Տէմիրեանին:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ողբ. Մելինոն Գօրուֆեանի, Պրն. Գէորգ Հալաբեանի և Տիկ. Սիլվա Պատմանե-

18-12-2000 Փլովտիւ - Պուլկարիա

«Նայիրի» Շաքաւաբերքի

Յարգարժան խմբագրութեան

Աննկուն հայրենասէր ԸՆԿ. Ժիրայր Նայիրիի Հ.Հ. «Հրաչեայ Աճառեան» Համալսարանի Գիտական Խորհուրդին կողմէ «Փրօֆեսոր»ի կոչումով պարգեւատրուելուն, ինչպէս և Ռուսիոյ Բ. Աշխարհամարտի վերջնական նախագահութեան կողմէ իրեն «Յաղթանակ» շքանշան շնորհուելուն [Նացիզմի պարտութեան 55-ամեակին առթիւ] պատեհութեամբ, ջերմագին կը շնորհաւորենք զինք, իրեն մաղթելով քաջատողջութիւն և նորանոր յաջողութիւններ:

«ՆԱՅԻՐԻ»-ն կը կարդանք ուրախութեամբ և պարծանքով:

Յարգանքօ՞

ՄՈՎՍԷՍ ԵՒ ԱՂԱՒՆԻ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ և ընտանիքի անդամներ՝ Պօղոս, Զարուհի, Դոկտ. Յակոբ, Բժշկուհի Վանիա, Տօֆ. Երեւան և Տանիէլա:

եանի մահուանց, ինչպէս նաև Պրն. Սարգիս Սիպեանի մահուան քառասունգին առթիւ, Տէր և Տիկ. Մելինոն Սէֆերեան կը յայտնեն իրենց ցաւակցութիւնները ողբացեալի հարազատներուն և պարագաներուն և փոխան ցաւակցական այցելութեան 20,000լ.՝ կը նուիրեն «Նայիրի»ին:

լանուած այս ճամբորդութեան մէջ, կարգ մը անձեր բաւական շահեր ունին:
* * *

Խաժակ Սրբազանին (կը ցաւինք, որ իրեն պէս արժէքաւոր հոգեւորական մը նման հայավնաս գործի մէջ քաշուած է) դէպի Թուրքիա ճամբորդութեան համար հրապարակած ծանուցում-յայտարարութեան մէջ, մեր ուշադրութիւնը գրաւեց հետեւեալ պարագան- կարծէք, թէ ինքը ճամբորդական սպասարկութեան մը մէկ գործակալն ըլլար: Իր ծանուցում-յայտարարութեան մէջ կու տայ զբօսաշրջական երթուղիին շուրջ մանրամասնութիւններ: Եւ կը նշէ այցելելիք թրքական քաղաքներուն անունները.

ADANA-DIYARBAKIR-ISKENDERUN, GAZIANTEB և այլն:

Բայց ինչո՞ւ GAZIANTEB: Այս մեր գիտցած հայաշատ ANTEB քաղաքն է:

Ձանանք բացատրել: Կիլիկիոյ շուրջ գտնուող հայաշատ քաղաքներ եղող ANTEB, MARASH և URFA -ի մէջ, թուրքերը հայերուն դէմ ամենամեծ ու սուկալի ջարդերը կազմակերպեցին:

Թրքական այս վայրագութեանց շրջանին, նահատակուեցան հարիւր հազարաւոր անմեղ հայեր՝ ծեր, կին երեխայ...

Հարիւր հազարներով անմեղ հայերուն արիւնով շաղախուած այս քաղաքներուն մէջ, թուրքերը իրենց կատարած վայրագութիւնները հերոսութիւն նկատեցին և ANTEB-ը որակեցին GAZI ANTEB (Թաղթական Անթէպ), MARASH-ը՝ KAH-RAMAN MARASH (հերոս Մարաշ), URFAN-ը որակեցին SANLI URFA (շքեղ Ուրֆա):

Բայց այս քաղաքներուն անուններուն վրայ աւելցուած մակդիրները թուրքերուն կողմէ, զանոնք իրենց վայրագութեան խորհրդանիշը եղող նոր անուններով անուանելը՝ ոեւէ հայու համար աններելի է:

Իսկ եթէ, այս քաղաքները իրենց նոր անուններով կոչողը հայ կրօնական մըն է՝ իր ըրածը իրապէ՛ս սրբապղծութիւն է:

TURKO MANI

ECEVIT ERMENI SOYKIRIMI ICIN "HAYALI SOYKIRIM" DEMIS.

Hayallerin, yalanların ustası Ecevit tir.1950 senelerinde Yunanlılar için kardeslik siirleri yazan Ecevit, 1974 de Hocasi Kissinger' in emriyle Kibrisa hücum etti. Ve binlerce kibrisli yunanlinin ölümüne sebep oldu. Bütün Kibrisli Yunan halkını yasa bogdu.

Ve Kibris celladi Ecevit bu Kibris faciasinin ismini "Baris harekati" koydu. Kibris celladi Ecevit, biraz tarih oku ve öğren. Anatolyanın öz sahipleri Rumlar ve Ermeniler dir. Bugün Anatolya topraklarında bir tek Rum, bir tek Ermeni yok. ne oldu bu rumlara ve ermenilere ? Sana benzer yalancılar onları soykirimina uğrattı. **Յ. Զ.**

Ն Ա Խ Ա Գ Ա Հ Շ Ա Ր Լ Հ Ե Լ Ո Ւ ... (Ծար. էջ 7-էն)

մարզական- երիտասարդական կազմակերպութիւնները հակակշռի տակ պահելու իր տեսակէտին վրայ, Նախ. Շարլ Հելուին նախընտրութիւնը կ'երթար ապակեդրոնացման և սրտի սիրողական իրավիճակին պահպանման:

Նախագահը տուաւ իր եզրակացութիւնը, համոզումով և տրամաբանութեամբ.

- ԱՐԷՆՍՏԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՂԱՒԱՂԷ ՄԵՐ ԳԻՏՅԱԾ ՈՒ ՄԵՐ ԸՄԲՈՆԱԾ ՄԱՐԶԱԿԱՆ ՈԳԻՆ:

Մարզիկը ի՛նք պիտի սիրէ իր ասպարէզը, ի՛նք հաւատարիմ պիտի մնայ մրցապայքարի ազնի՛ւ հոգեբանութեան, ի՛նք պիտի նուաճէ յաջողութեան Դափնին: Գնահատութիւնը՝ վարիչներն են որ պիտի տան, մարզիկը ի՛նքն իր վիճակին չձգելու պայմանաւ:

Մարզիչ - մարզիկ - վարիչ գործակցութիւնը կը պահանջէ յարգա՛նք՝ անկեղծութեան ու վստահութեան հանդէպ:

Տարբեր չի կրնար ըլլալ և տարբեր պէտք չէ ըլլայ մարզիկին ուղին:»

Պէյրուք, Յունուար 2001

Հ Ա Ճ Ը Ն Ի 1920-Ի Հ Ե Ր Ո Ս Ա Մ Ա Ր Տ Ի 80-Ա Մ Ե Ա Կ Ը ... (Ծար. էջ 9-էն)

Օգոստոս 15-ին զինեալ ուժերու պարենատրման յատուկ յանձնախումբ մը ստեղծուեցաւ: Մասցու վերջին կենդանիները հաւաքեցին: Մինչեւ իսկ՝ ձիերը: Ողբերգական ու սրտաճմլիկ վիճակ սկսաւ տիրել: Ժողովուրդը դատապարտուած էր մահուան: Ասիկա կրնար զալ սովին ձեռքով կամ թուրքին սուրով: Վիճակը օրհասական էր: Քաջամարտիկները որքան ալ կորով ցոյց տային, յուսահատութիւնը երթալով կը ծանրանար ժողովուրդին վրայ: Փրկութեան վերջին յոյսերն ալ կը ցնդէին: Կոռուղները վճռած էին դիմադրել մինչեւ վերջին փամփուշտը: **(Ծար. 6)**

բժշկութիւնն ուսանելու:»

(Ծար. 3)

ՀԱՅՈՒՆ ԲՈ՛ՒՆ ԹՇՆԱՄԻՆ ՀԱ՞ՅՆ Է...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՈՌԻՔԷՆԵԱՆ)

Պէյրուք հրատարակուող թերթի մը մէջ կարդացի՞նք գրութիւն մը, որուն հեղինակը մեզի ծանօթ անձնաւորութիւն մըն է:

Տասը տարիներու տելոզութեամբ հաւատացի՞նք այս անձին և կարծեցի՞նք, թէ ան իսկական հայրենասէր մըն է...:

Յետոյ, «Կամուրջին տակէն շատ ջուրեր» անցան, և մենք մեր հաւատքը կորսնցուցի՞նք:

Եւ վերջերս, Պէյրուքի հայկական թերթերէն մէկուն մէջ, հրատարակուեցաւ իր ստորագրութեամբ գրութիւն մը, որուն բովանդակութիւնը մեզի անհաւատալի թուեցաւ:

Ահա այդ գրութիւնը՝

«Այսօր, Երեւանի հանրակացարաններէն մէկուն օտջիւ կայ յուշարձան մը, նուիրուած Մոնթէ Միլիոնեանին՝ խաչով և արծիւով: Ան սպաննուեցաւ փամփշտահար Մարգրիթի մէջ 1993-ին, իսկ այս յուշարձանը կեանքի կոչուած էր 1995-ին: Հերոսացած այս տղուն անուան դիմաց կան հարցականներ: Վնասկան խօսք ըսելու համար պէտք է գրուի բնական պատմութիւնը «Ասալա»ի, որ մարդ մեղքը չառնէ այս տղուն»:

Այս ի՞նչ դիւանագիտական արտայայտութիւն է: Այս ի՞նչ զգուշութիւն է: Աւելի ճիշդ՝ վախկոտութիւն է:

Մենք գիտենք, որ ինք լաւ տեղեակ է, Ասալա-յին տարած հերոսական պայքարին բոլոր մանրամասնութիւններուն:

Ան, շատ լաւ գիտէ, թէ Հայաստանի ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակին հիմերը խախտուեցան 1983-ին, Լիբանանի մէջ, ամերիկացի Մոնթէ Մելքոնեանին Բանակի կեդրոնին դէմ կատարած դաւադրական զինեալ յարձակումով:

Այս ողբերգութեան պատմութիւնը, Պէյրուքի բոլոր հայրենասէր հայերը գիտեն: Ի՞նչ է ուրեմն անոր, այս անհերքելի իրականութիւնները չգիտնալ ձեւացնելուն պատճառը:

Ան, ի՞նչ ըսել կ'ուզէ, սոյն գրութեան մէջ, երբ կ'ըսէ, «...որ մարդ մեղքը չառնէ այս տղուն»:

Այս կասկած ներշնչող արտայայտութիւնները երկդիմի, իրականութիւնները բացէ ի բաց ըսելու համարձակութիւնը չունեցող անձի մը արտայայտութիւններն են, կը կարծենք:

* * *

«ՆԱՅԻՐԻ»ի առաջին թիւերէն՝ 1995-էն սկսեալ, Մոնթէի Հայ Գաղտնի Բանակը խորտակող մը ըլլալուն մասին արտայայտուած էինք:

Եւ Հայաստանի մէջ, անոր հերոսացուած ըլլալուն լուրերը առնելէ յետոյ, «ՆԱՅԻՐԻ»ի 30 Մայիս 1998, 13 Յունիս 1998 և 27 Յունիս 1998-ի թիւերուն մէջ, «Վերջին շրջաններու հայկական պատմութեան ամենաքստմնելի խաբէութիւնը» վերտառութեամբ, Մոնթէի դաւադիր գործունէութիւնը անհերքելի փաստերով նկարագրել ջանացի՞նք:

ՀԱՅՈՒՆ ԲՈ՛ՒՆ ԹՇՆԱՄԻՆ ՀԱ՞ՅՆ Է...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒՐԷՆՆԱՆ)

Այսօր, հոգեկան շատ տխուր պարտականութիւն մը պիտի կատարենք, հրապարակելով նոյն անձին ձեռագիր մէկ գրութիւնը որ կ'ապացուցանէ, թէ ենթական ի՛նչ աստիճան ոխերիմ թշնամի մըն էր **Հ. Գ. Բանակին**:

Բայց, նոյն ատեն, այս ձեռագիր գրութիւնը կ'ապացուցանէ անոր անխիղճ կեցուածքը **Հ.Գ.Բ.ի** մարտիկներէն, 18 տարիներէ ի վեր Ֆրանսայի մէջ բանտարկուած հերոս Վարուժան Կարապետեանին հանդէպ:

Մայիս 1993-ին Արցախէն գրած այս նամակին մէջ Սոնթէ կ'արգիլէ կապ հաստատել և ի նպաստ աշխատանքներ տանիլ տասը տարիներէ ի վեր (այդ շրջանին) Ֆրանսայի մէջ կալանաւորուած հերոս Վարուժան Կարապետեանին հետ:

(Կու տանք մեր տրամադրութեան տակ եղող Սոնթէի ֆրանսերէն ձեռագիր բնագրին հայերէն թարգմանութիւնը).--

«Ասկէ յետոյ, Արցախի համար պաշտօնական աշխատանք մտաւ մնալու է, և ուրեմն, հեռու կենալ պէտք է դատապարտուած անձերէ, մանաւանդ՝ կոյր անարեւելիներէ:

Վարուժանը՝ կատաղի մէկ թշնամին է մեր կոխին, որ շատ անելի ըրաւ էվրէն-էն և Օզալ-էն, ջնջելու համար մեր պայքարը: Բոլորովին անընդունելի է լաւ և գէշը իրար խառնել: Շարունակել Կարապետեանին հետ հաղորդակցութեան մէջ ըլլալ, և խօսիլ իրեն ի նպաստ և Արցախին անունով:

Այս՝ իմ կարծիքս է, նաեւ այստեղի ուրիշներունը: Հեռացէ՛ք այս տխմարութենէն, որչափ շուտ, որ կրնաք:

Բարեւներս բոլորին՝ Սոնթէ»:

* * *

Սուտերով լեցուն այս գարշելի գրութիւնը անհերքելի ապացոյցն է՝ այս գործակալին Արեւմուտքին հրահանգներուն հաւատարիմ գործադրողը ըլլալու հանգամանքին: Զանի որ՝

1.- Հայկական Գաղտնի Բանակի հերոս Վարուժան Կարապետեանին գործունէութիւնը «կոյր ահաբեկչութիւն» որակելով, Սոնթէ «մաքուր մնալ պէտք է» կ'ըսէ:

Ուրեմն՝ թուրքերուն դէմ պայքարը դադրած է: Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան խօսքը չկայ այլևս, և Արեւմուտքին ծանօթ գործակալութեան հրահանգով հրահրուած է Արցախի հարցը, որ Հայաստանը մխրճուի այսօրուան անել և դժոխային վիճակին:

2.- Սոնթէ այս նամակին մէջ կ'ըսէ, թէ՝ «Վարուժան Կարապետեանը՝ էվրէն-էն և Օզալ-էն անելի ըրաւ մեր պայքարը ջնջելու համար»:

Ան ո՞ր պայքարին մասին կը խօսի արդեօք: Իր և նմաններուն պայքարը՝ Հայկական Գաղտնի Բանակին դէմ էր:

Հ.Գ.Բ.ը քանդելէ ետք, Սոնթէ և իր խամաճիկները, ոչ մէկ բան ըրին, ոչ մէկ գործունէութիւն ցուցուցին թուրքերուն դէմ:

Իրենց դաւադիր աշխատանքներուն պատճառաւ՝ **Հ. Գ. Բանակին** թուրքերուն դէմ տարած տասը տարուան հերոսական պայքարը վերջ գտաւ:

Եւ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան դատը, Արեւմտեան պետութիւններուն ուզած ձեւով, մոռացութեան ենթարկուեցաւ:

* * *

Եւ հիմա, Սոնթէի հերոս Վարուժանի հանդէպ թրջավայել կեցուածք ցուցաբերող նամակին ծանօթանալէ յետոյ, խոր յուզումով և սրտի անհուն գոհունակութեամբ կը հրապարակենք Վարուժան Կարապետեանին ձօնուած բանաստեղծութիւն մը, որուն հեղինակն է՝ Վարուժան Կարապետեանի ղեկավարին՝

ՀԱՅՈՒՆ ԲՈ՛ՒՆ ԹՇՆԱՄԻՆ ՀԱ՞ՅՆ Է...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒԲԵՆԵԱՆ)

ՆԱՄԻՆ ՀԱ՞ՅՆ Է...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒԲԵՆԵԱՆ)

հերոս նահատակ ղեկավար Յակոբ Յակոբեանին՝ «Մուճահեդ»-ին այրին և զէնքի ընկերը՝ Ծահնագ Յակոբեան:
«Մեր այս նորագոյն երդումն ազգիսը կը ձօնեմ սասունցի մեր հերոս ընկերոջ՝ Վարուժան Կարապետեանին...»



Յակոբ Յակոբեան

Յանուն Հայաստանի ամբողջական հողերուն,
Անմահական Արարատի զոյգ կատարներուն՝
Կ'երդնունք մնալ միշտ զինարբուն,
Որ հատուցենք արիւնը մեր հայրերուն,
Բազմամիլիոն և բազմատանջ նահատակներուն:
Յանուն մեր հին ու նոր նահատակներուն,
Անկատար մնացած անոնց իղձերուն՝
Կ'երդնունք մնալ միշտ աննկուն,
Որ յար ծածանենք մեր պապերուն
Բորք ու կարմիր դրօշը փայլուն,
Եւ կ'երդնունք ծոբել մեր երակներուն
Արիւնն ամբողջ շինջ ու զեղուն՝
Նորածիլ Հայաստանի բազիններուն»:

Հ.Ա.Հ.Գ.Բ.

«Նայիրեան ջերմագին բարեկերպ՝
Ծահնագ Յակոբեան
[այրին և զէնքի ընկերը նահատակ-ղեկավար ընկերոջ] Օգոստոս 1990»:
Ծ.- Արտագրուած է թնագրէն. «Ն.»:

Ի՞նչ յուզիչ, բայց նոյն ատեն ի՞նչ սրտապնդիչ է Ծահնագ Յակոբեանին բացաստեղծութիւնը:

Այս գրութեան ամէն մէկ տողը, մեր ուղեղին մէջ կը մխրճուի՝ «Արարատով», «Մեր ամբողջական հողերով» և «Մեր անկատար մնացած իղձերով»:

Եւ մենք ալ անոր կը ձայնակցինք՝
«Կ'երդնունք մնալ միշտ աննկուն»

Յակոբ Յակոբեանին անմահ յիշատակին:



Յակոբ Յակոբեանին նահատակուած տեղւոյն վրայ ծաղկեպսակ կը զետեղէ փոքրիկն Սեւակ Յակոբեանը:

Շահնապ Յակոբեանին բացատրական գրութիւնը [արտագրուած իր ձեռագիր բնագիրէն].

«Մոյն յուսանկարը կը ձօնեմ Սասունցի մեր հերոս ընկերոջ՝ Վարուժան Կարապետեանին»:

«Չաւակա՛ Սեւակ Յակոբեանը [այդ ժամանակ 17 ամսու] 28 Մայիս 1988-ին [մէկ ամիս ետք իր հօր նահատակութենէն], ծաղկեպսակ կը զետեղէ ճիշդ այն տեղը [Աթէ՛նք, Փալէօ-Ֆալիրօ շրջան] ուր դաւադիր գնդակներով սպաննուեցաւ ընկեր Մուճահեդը»:

«Նայիրեան ջերմագին բարեկերպ՝
Ծահնագ Յակոբեան
[այրին և զէնքի ընկերը նահատակ-ղեկավար ընկերոջ] Օգոստ. 1990»: ՍԵՒԱԿ:

ՀԱՅՈՒՆ ԲՈ՛ՒՆ ԹՇՆԱՄԻՆ ՀԱ՞ՅՆ Է...

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ)

ՄԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՂԹԱՆԸ՝
«ԱՍՏՈՒԱԾ ԽԵԼՔ ՏԱՅ ՀԱՅ ԱԶԳԻՆ»
 ՍՓԻՒՌԷԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅԵՐ՝
 ԴՈՒՔ, ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԼՈՒՔ ԵՒ ՉԷՔ ՀԱԿԱԶԴԵՐ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՈՌԻԲԷՆԵԱՆ]

Սփիւռքահայեր՝

70 տարիներ շարունակ կեցաք կողքին ձեր վերածնած ազգային պետութեան, որ կը կոչուէր՝ Սովետական Հայաստան, և արեւմտեան պետութիւններուն շեփորահարներուն և անոնցմէ մէկը եղող Լ.Յ.Դ.ին չհետեւեցաք:

Դիմադրեցիք անոնց սպառնալիքներուն և դէմ դրիք անոնց յարձակումներուն, շատ անգամ՝ ձեր կեանքի գնով Ծատ զոհեր տուիք, շատ տառապեցաք, բայց չվհատեցաք, և հաւատարիմ մնացիք Մայր Հայաստանին և Սուրբ Էջմիածնին:

1991-ին Արեւմտեան Պետութիւնները, իրենց հայ գործակալներուն միջոցաւ, քանդեցին մեր լուսաւոր և բարգաւաճ Հայաստանը: Եւ ստեղծեցին իբր թէ ազատ և անկախ Հայաստան մը:

Այսօր, տասը տարիներ յետոյ, բոլորս ալ գիտենք, թէ Հայաստանը ի՞նչ վիճակի ենթարկուած է:

Իրականութեան մէջ ներկայ Հայաստանը, 1918-1920-ի Ա. հանրապետութեան գրեթէ նոյն պայմաններուն և վիճակին մէջ է:

1918-1920-ին, Դաշնակցութիւնը, Արեւմտեան պետութիւններուն դրդումով, թշնամացած էին Սովետներուն հետ: Ամբողջ յոյսերնին Արեւմտեան պետութիւններուն վրայ դրած էին:

...Անոնց այդ շրջանի ղեկավարները խաբուեցան, և հայ ժողովուրդի մէկ հատուածն ալ մոլորեցուցին Արեւմտեան պետութիւններուն «Ծովէ ծով Հայաստան»ի խոստումով:

Մանաւանդ՝ Ամերիկայի Նախագահ Վիլսոնին Մեծ Հայաստանի քարտէսը ցուցնող նկարը, հայերը ուրախութենէ խենթացուցած էր:

Ի՞նչ խաբկանք:

Եւ այս յոյսով և հաւատքով, այդ ուղեկորոյս ղեկավարները, մինչև վերջին վայրկեանը, պայքարեցան Սովետներուն դէմ: Եւ անոնք, 17 Փետրուար 1921-ի ապստամբութեամբ ալ ապացուցեցին, թէ ո՞ր աստիճան կոյր, ո՞ր աստիճան իրականութիւնները չտեսնող և հայ Ազգը դէպի անդունդ առաջնորդող անպատասխանատուներ էին:

Եւ այսօր, ի՞նչ է վիճակը Հայաստանի մէջ:

Արեւմտեան պետութիւնները, իրենց դահիճներուն ձեռքերով, կատարել տուին 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութիւնը:

Եւ այս թուականէն յետոյ պետական Հայաստանը, 1918-1920-ի Ա. Հարապետութեան նման, գրեթէ բոլորովին ինկած է Արեւմտեան պետութիւններուն գիրկը:

Եւ դուք, Սփիւռքի հայրենասէր հայեր, ինչո՞ւ կը լուք և չէք հակազդեր հոն կատարուած ու շարունակուող ողբերգութիւններուն:

* * *

27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն քանի մը շաբաթներ յետոյ, երբ տեսանք, թէ Հայաստանի «Ազգային հեռատեսիլ»ը վերածուած է գովադրական և կանկադերական ամերիկեան բարձր «քաղաքակրթութեան» խօսափողի մը, այլեւս հանդուրժողութիւնը չունեցանք դիտելու այս օտարացած հեռատեսիլը: ...Բայց, քանի մը օր առաջ տեղեկացանք, թէ 15 Փետրուար 2001-ի Հինգշաբթի օրը, պիտի սկսի 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան դահիճներուն դատավարութիւնը:

ՄԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՂԹԱՆԸ՝
«ԱՍՏՈՒԱԾ ԽԵԼԸ ՏԱՅ ՀԱՅ ԱԶԳԻՆ»
 ՍՓԻՒՌԷԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅԵՐ՝
 ԴՈՒՔ, ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԼՈՒՔ ԵՒ ՉԷՔ ՀԱԿԱԶԴԵՐ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՈՌԻԲԷՆԵԱՆ]

Եւ ուզեցինք գիտնալ, թէ ի՞նչ պիտի ըսէ այս օտարին ծառայող Հայկական Ազգային «հեռուստատեսիլ»ը, սկսող դատավարութեան մասին:

Եւ Հինգշաբթի օրը, ժամը 17-ին, Երեւանէն տրուած լուրերը դիտեցինք:

Եւ դիտելէ յետոյ, կրկին համոզուեցանք, որ մենք չէինք սխալած այս օտարացած հեռատեսիլին մասին մեր ախտաճանաչումին մէջ:

Նախ, խօսնակը 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութիւնը անուանեց՝ «27 Հոկտեմբերի գործին դատավարութիւնը»:

Արդէն, խօսնակին առաջին նախադասութենէն յայտնի եղաւ, որ այս դատավարութիւնը իսկական խեղկատակութիւն մըն էր:

Եւ անկէ յետոյ, քանի մը վայրկեան, ցուցադրեցին դատավարութեան սրահը, և այս կարճ միջոցին նուազագոյնը տասն անգամ տուին դահիճ Յունացեանին անունը:

Այս դատավարութեան մասին տրուած լուրերուն մէջ, մեզի համար ամենէն կարեւորը հետեւեալ բացատրութիւնն էր.— Նահատակ Վազգէն Սարգսեանին ընտանիքը դատավարութեան չէին եկած, և ըսած էին թէ՝ «մենք մարդասպաններուն հետ նոյն սրահը չենք ուզեր գտնուիլ»:

Եթէ մտածենք, պիտի տեսնենք, որ այս խօսքին իմաստը շատ խորն է...:

Բայց՝ հասկցողին համար:

* * *

Եւ դատավարութեան բացումի լուրէն անմիջապէս ետք, իբր կարեւոր եղելութիւն ցոյց տուին Պարոյր Հայրիկեանը. եւ ան խօսեցաւ շատ երկար...: Ջինք մտիկ ընելէ ետք, մենք կրկին ու կրկին համոզուեցանք, թէ 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան բուն պատասխանատուները, Արեւմտեան պետութիւններուն սայլին լծուած ներկայ Հայաստանի որոշ իշխանաւորներն են:

Աչքերնուս չէինք հաւատար, երբ 27 Հոկտեմբեր 1999-ի դատավարութեան լուրերէն անմիջապէս ետք, հեռատեսիլէն երեւցաւ սիոնիզմի մունետիկ Պարոյր Հայրիկեանը:

Եւ ինչէ՞ր ըսաւ:

Իրապէս ալ ըսածները՝ Հայ Ազգին թշնամին միայն կրնար ըսել.

Իբր թէ «Դիմում կատարած են չեղեալ համարել տալու համար 1920-ին, Լեւոնի և Աթաթիւրքի միջև ստորագրուած համաձայնութիւնը, որ Կարսը թուրքերուն կու տար»:

Սուտ, շատ մեծ սուտ:

Կարսը թուրքերուն տուող համաձայնագիրը, 2 Դեկտեմբեր 1920-ին, Ալեքսանդր Խատիսեանն էր որ Ալեքսանդրապոլի մէջ ստորագրեց, Հայ Ազգին երեսը մրոտող և նուաստացուցիչ այս դաշնագիրը, այդ օրուան Վարչապետ Սիմոն Վրացեանի հրահանգով: Եւ ճիշդ՝ Հայաստանին Խորհրդայնացման օրը:

Դաշնակցական Կարօ Սասունցի այս մասին հետեւեալը գրած է՝ «Հայաստանի կառավարութիւնը և Հ.Յ.Դաշնակցութիւնը բոլոր հնարաւորութիւնները ունէին խուսափելու այս դաշնագիրը ստորագրելու պարտաւորութենէն»:

Բայց Պարոյր Հայրիկեանի սուտերը այսքանով ալ չաւարտեցան:

Ան շարունակեց զրպարտել. «17 Փետրուար 1921-ին, Հ.Յ.Դաշնակցութիւնը ազատագրեց Հայաստանը պոլշեիկներէն և Հայաստանին ազատութիւնը հռչակեց»:

Խօսքը կը վերաբերէր այն ցաւալի ապստամբութեան, որ հազարաւոր հայե-

ՄԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՂԹԱՆԸ՝
«ԱՍՏՈՒԱԾ ԽԵԼՔ ՏԱՅ ՀԱՅ ԱԶԳԻՆ»
 ՍՓԻՒՌԷԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅԵՐ՝
 ԴՈՒՔ, ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԼՈՒՔ ԵՒ ՉԷՔ ՀԱԿԱԶԴԵՐ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՈՌԻԲԷՆԵԱՆ]

րուն մահուան պատճառ եղաւ:
 Ծանօթ է որ, իբր թէ ծայրայեղ ազգայնական, բայց իրականութեան մէջ հայկական ազգային բարձրագոյն շահերուն ինչ ըլլալէն անտեղեակ մտաւորական և պերճախօս Նժդեհի ղեկավարութեամբ Հայաստանի մէջ կատարուած այս ապստամբութեան օրերուն, մեծ թիւով հայեր, «համայնավար է» ըսելով՝ Նժդեհին զինեալներուն կողմէ, թրջավայել

վայրագութեամբ ժայռերէն վար նետուելով սպաննուեցան:
 Հայ Ազգին շատ սուղ արժած այս Տօնքիշողական ապստամբութեան օրերուն, Դաշնակ ղեկավարները նոյնիսկ թուրքերուն դիմեցին և անոնցմէ օգնութիւն խնդրեցին, որ կարենան համայնավարներուն դէմ պայքարիլ:
 ...Բնական է՝ միջոց մը ետք, Հայաստանի նոր իշխանութիւնները յաջողեցան չէզոքացնել այս խռովարարները:
 Եւ դաւադիր ղեկավարները, Հայաստանի պետական գանձն ալ միասին առնելով, Ջանգեզուրէն դէպի Պարսկաստան փախուստ տուին:

* * *

Կատաղի հակահամայնավար մը եղող Պարոյր Հայրիկեանը, 15 Փետրուար 2001-ի Հինգշաբթի օրը հեռատեսիլէն կատարած ելոյթին ընթացքին, իր խօսքերովը ինքզինքը դիմակազերծեց:

Ան, մէկ կողմէն Փետրուար 1921-ի ապստամբութեամբ, հակասովետական պայքարին փառաբանութիւնը ըրաւ, նոյն ատեն ալ Լեւոնին Աթաթուրքին հետ համաձայնութիւն կնքելուն դէմ արտայայտուեցաւ:

Արդեօք, Աշխարհի մէջ, որևէ ուրիշ կառավարութիւն ի՞նչ պիտի ըներ, եթէ 1918-1920 Հայաստանի կառավարութեան Սովետներուն դէմ տարած պայքարին նման, ուրիշ պետութիւն մը իրեն դէմ թշնամական վերաբերում ցուցաբերէր:

1918թ.-ներուն սովետական ամենաբարձր ղեկավարութեան շարքերուն մէջ, Լեւոնին շատ մօտ եղող և անոր վրայ մեծ ազդեցութիւն ունեցող ազգասէր հայ համայնավար ղեկավարներ կային:

Ասոնք տեսնելով Հ.Յ.Դ.ի կառավարութեան ցուցաբերած անտրամաբանական հակասովետ կեցուածքը, դիմած էին անոնց ու թելադրած, որ հայկական ազգային շահերուն շատ վնասակար եղող իրենց հակասովետ թշնամութեան վերջ տան:

Բայց այն ատենուան հայ ղեկավարներուն աչքերը Արեւմտեան պետութիւններուն խոստումներով այն աստիճան շլացած էին [աւելի ճիշդը՝ դարձեր էին վարձկանները արեւմտեան պետութիւններուն] որ անոնք շարունակեցին իրենց հակասովետ պայքարը:

Ուստի բնական է, որ այս պայմաններուն մէջ Սովետները, ինքզինքնին համայնավար, Արեւմուտքին թշնամի ձեւացնող և սովետներուն շատ ջերմ բարեկամական արտայայտութիւններ շուայող թուրքերուն պիտի մօտենային: Մանաւանդ որ այդ տարիներուն, Արեւմտեան 14 տէրութիւններ յարձակումի անցած էին նորաստեղծ սովետական կարգերուն դէմ, ցարական զօրքին մնացուկներն ալ իրենց հետ ունենալով, որ տապալէն Սովետներու վարչակարգը:

Եւ այդպէս ալ եղաւ: Սովետները, ի տես հայերուն թշնամութեան և Արեւմուտքին յարելուն, սովետ. այն ատենուան շահերուն ստիպողութեան տակ, ժամանակաւոր գործակցութիւն հաստատեցին Զեմալական թուրքերուն հետ:

Եւ դաշնակցական իշխանութիւններուն կոյրգկուրայն Արեւմտեան պետութիւններուն ծառայութեան լծուած ըլլալուն պատճառաւ, ոչ միայն կորսնցուցինք Կարսը, այլեւ՝ գրեթէ ամբողջ Արեւմտեան Հայաստանը:

Հ.Յ.Դ.ի այդ շրջանի ղեկավարները, Պարոյր Հայրիկեանի նման սիոնականատիպ-ամերիկացի դաւադիրի մը ձաբուտուեցնելով, իրենց պատմական պատասխանատուութենէն չեն կրնար խուսափիլ:

* * *

ՄԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՂԹԱՆԸ՝
«ԱՍՏՈՒԱԾ ԽԵԼԸ ՏԱՅ ՀԱՅ ԱԶԳԻՆ»
 ՍՓԻՒՌԷԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅԵՐ՝
 ԴՈՒՔ, ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԼՈՒՔ ԵՒ ՉԷՔ ՀԱԿԱԶԴԵՐ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՈՌԻԲԷՆԵԱՆ]

Պ. Հ. ին լեզուագարութիւնները այսքանով ալ չաւարտեցան: Իրականութեան մէջ, անոր մինչև այդ վայրկեանը ըսածները, նախաբան մըն էին միայն:

Անոր բուն նպատակը՝ այս առիթէն օգտուելով, Կարէն Տեմիրճեանին և Վազգէն Սարգսեանին վրայ յարձակիլ էր:

Եւ ան ըսաւ թէ՛

«Կարէն Տեմիրճեանը հեռացաւ համայնավարութենէն»:

«Վազգէն Սարգսեանն ալ հեռացաւ կոմսոմոլէն»-ի՞նչ մեծ յանցանք-:

Եւ յետոյ, ան, Կարէն Տեմիրճեանը ամբաստանեց, և սապէս ըսաւ՝

«Կարէն Տեմիրճեանը 1988-ին ըսած է, թէ Պարոյր Հայրիկեանը Հայաստանի ազատութիւնը ուզելուն համար զինք մեռցնել պէտք է»:

Այս ամբաստանութիւնը, պարզապէս, թրջավայել զրպարտութիւն է:

Բայց այսօր, իրականութիւն մը կայ.- Պարոյր Հայրիկեանը այսօր ողջ է, և իր յայտարարութիւններով կը շարունակէ դաւել ճշմարտութեան և մեր ազգային շահերուն դէմ:

Բայց Կարէն Տեմիրճեանը՝ Պարոյր Հայրիկեանին խնկարկած Արեւմուտքին հետախուզութեան գործակալներուն ձեռամբ նահատակուած է:

Հայաստանի օտարացած Ազգային հեռատեսիլին 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան դատավարութեան լուրերը տալէ անմիջապէս յետոյ, Պարոյր Հայրիկեանը երկար ու բարակ խօսեցնելուն նպատակն էր.- Այս դատավարութեան պատճառաւ, ժողովուրդին մէջ, Կարէն Տեմիրճեանին և Վազգէն Սարգսեանին ի նպաստ ստեղծուելիք վերջիշումներուն արգելք ըլլալ, և Պ.Հ. ձաբոտութեանը միջոցով, այս նահատակներուն յիշատակը մրոտել:

Օտարացած, «Ազգային» կոչուելու անարժան հեռատեսիլին կատարածը՝ թրջավայել ռազմավարութիւն մըն է:

Թուրքերն ալ, այս օրերուն, իրենց թերթերով և հեռուստեսիլներով, նոյն ռազմավարութիւնը կ'օգտագործեն:

Ֆրանսական պետութեան հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունելէն յետոյ, թուրքերը ամէն տեսակի սուտերով և զրպարտութիւններով ապացուցանել կը ջանան, թէ թուրքերը՝ հայերը ցեղասպանութեան չեն ենթարկած, այլ ընդհակառակը՝ հայերը սպանդի ենթարկած են թուրքերը:

Եւ թրջական «թելեվիզիոն»ները, իրենց այս ձաբոտութեանը, շատ յաճախ, Պոլսոյ մէջ ապրող հայերուն բերնովը կրկնել կու տան:

Շատ ցաւալի է տեսնել՝ ցեղասպանութեան ենթարկուած Ազգի մը Պոլսոյ մէջ մնացած խլեակներուն, մարդկութենէ հեռու և գրեթէ ստրկացած կերպարը:

Այս հայերը, թուրքերուն իրենց ստրկեցուցած սուտերը և զրպարտութիւնները, թրջական «թելեվիզիոն»էն իրար ետեւէ թութակի պէս կը կրկնեն:

Մէկ տարբերութեամբ՝ որ Պոլսոյ մէջ այս դաւաճանական խօսքերը ընող հայերը, իսկական պատանդներ են:

(Շարք՝ էջ 11)

21

«ԱՍՏՈՒԱԾ ԽԵԼԸ ՏԱՅ ՆԱՅ ԱԶԳԻՆ»... (Ծար. էջ 2-էն)

Մինչդեռ Հայաստանի մէջ, Ազգային հեռատեսիլէն տարբեր սուտեր ըսողն և տարբեր զրպարտութիւններ կատարողը՝ սիոնիստական համաշխարհային կազմակերպութեան մէկ հնարքը եղող՝ «Մարդկային իրաւանց կազմակերպութեան» Հայաստանի մասնաճիւղին ղեկավար Պարոյր Հայրիկեանն է:

CEZASIZ KALAN KATILLER DEVLETI TURKIYE

FRANSA, ERMENI SOYKIRIMINI KABUL ETTI DIYE BIRBIRINIZE GEÇTINIZ.
ZIVANADAN ÇIKMIS DELILER GIBI BAGIRIP ÇAGIRIYORSUNUZ.
BUNA DERLER SUÇLULUK KOMPLEKSI.
ÇUNKU SIZ ÇOK IYI BILIYORSUNUZ ISLEDIGINIZ SUÇUN KORKUNÇLUGHNU.
BUNUN İÇİN KORKUYORSUNUZ.
CELAL BAYAR ERMENİLER İÇİN "YA BİZ KALACAKTIK" YA DA ERMENİLER.
MECBURDUK ERMENİLERİ TEMİZLEMENEYEMİSTİ.
ANLIYORSUNUZ DEGILMI?
BUGUNKI "TURKIYE" DEDIGINIZ DEVLET ERMENİLERİN SOYKIRIMI
SAYESİNDE MEYDANA GELDİ.
ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATTINIZ.
VE ONLARIN VATANINI ÇALDINIZ.
İSTE BUNUN HESABINI VERECEKSİNİZ.
İSTE BUNUN CEZASINI ÇEKECEKSİNİZ.

Յ. Զ.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

**Գ Է Ո Ր Գ Մ Ե Լ Ի Տ Ի Ն Ե Ց Ի
Գ Ր Ա Կ Ա Ն Մ Ր Ց Ա Ն Ա Կ**

Գ.Մ.Գ. Մրցանակի Դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2001ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Գ.Մ.Գ. Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական որեւէ նոր, անտիպ կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր, առ ի գնահատում և հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական և Հայ Մշակոյթի այլ կալուածներուն վերաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասած ըլլան ամեմառւշը մինչեւ 31 Մայիս 2001:

Առաջուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած և երեք օրինակով:

Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան:

Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը կազմեն՝ Գերշ. Տ. Արտաւազ Արք. Թրքոնեան, Գերշ. Տ. Զարեհ Արք. Ազնաւորեան, տեարք Հրաչ Տասնապետեան [ատենապետ], Պօղոս Սնապեան [ատենադպիր], Գէորգ Գանտահարեան, Տոֆ. Արմենակ Նդիպեան, Պեպօ Սիմոնեան:

Ծ Ա Ն Օ Թ... Դատակազմին ղրկուած գործերը հեղինակին չեն վերադարձուիր:

Դատակազմին հասցէն...
Armenian Catholicosate of Cilicia
P.O. Box 70317
Antilias - Lebanon
E-Mail: cathcil@inco.com.lb
Fax: +961- 4 - 419724

Գ Ի Ի Ա Ն Գ . Մ . Գ . Մ . Դ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի

«ՀԱՅԱՍՏԱՆ ԼՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՁ ԶՈՒՆԻ...»... (Ծար. էջ 1-էն)

պահանջ պիտի չներկայացնենք» խոստումին, և յաջորդ օրն իսկ ինքզինքն ցեղասպան կը յայտարարէ:

Աւելին՝ Մեծ Եղեռնին զոհերուն ժառանգորդները սփռահայերը չեն միայն: Արեւմտահայաստանէն խոյս տալով Արեւելեան Հայաստան ապաստանած հայերէրաղկացած Հ.Հ.ի ներկայ բնակչութեան յիսուն առ հարիւրը, նոյնպէս զոհերու ժառանգորդներ են, ուստի՝ նոյնպէս պահանջատէր:

Եթէ Սփիւռքը միայն տէր պիտի կենայ իր բռնագրաւուած հողի դատին ու նիւթա-բարոյական հատուցում պահանջէ Յափշտակիչէն, հասցա ինչով կ'արդարանայ «Մէկ

հայրենիք, ժողովուրդ, եկեղեցի և դատ» լուրնգը, ու Երեւանի մէջ կայացուած և դեռ տեղի ունենալիք համահայկական համագումարները: Դատի, Հողի և Իրաւունքի տիրութենէն հրաժարող նախագահը չէ հաշուած կ'երեւի, որ իրաւատիրութիւն մը մերժելը, անկէ հրաժարիլը եթէ իր ձեռքն է, յետագային այդ ուրացուած իրաւունքին վերստին տէր ներկայացալը իր ձեռքը չի կրնար ըլլալ այլեւս: Եւ իր երջանիկ դահիճները

ՀԲԸՄ  ՀԵԸ

ԱՆԴՐԱՆԻԿ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

Դաշնամուրի Համերգ
Ելոյթ կ'ունենայ
ՇԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Հինգշաբթի 1 եւ Ուրբաթ 2 Մարտ 2001, Երեկոյեան ժամը 8:30-ից
ՀԲԸՄ-Տեմիրճեան Կեդրոն, Նագգաշ (04-523043/4)

Մարտ 1: Արժրուցի, Խաչատուրեան, Կոմիտաս
Միրզոյեան, Գարամանուկ, Թերզեան, Ա. Յովհաննէս
Մարտ 2: Chopin, Erik Satie, Beethoven

Սակ՝ Լ.Ո. 15,000 եւ 35,000

MESSAGE À MON PÈRE

Aujourd'hui papa, 15 Fevrier 2001, tu entre dans l'Histoire de l'Humanité pour ton anniverssaire. Je t'apporte le plus beau cadeau de ma vie : La Reconnaissance du génocide 1915 par la France.

Pour honorer les martyrs, ton nom a été cité en exemple par l'Assemblée Nationale.

Voici le billet le plus précieux du monde obtenu après 85 ans d'espoir, preuve de ma présence en ce jour de gloire.

Aujourd'hui papa, 15 Fevrier tout Paris honore les Arméniens, tout les Monuments, Mairie, Invalides, Champs Elysée sont décorés de drapeaux aux couleurs arméniennes.

Aujourd'hui miracle, tu est présent papa en même temps à Paris qu'à l'école, tu peux franchir debout avec honneur ce 21ème siècle. Donnez-moi la force de te suivre longtemps...

Salue et embrasse de ma part toutes les personnes qui t'entourent - professeurs, élèves, aides dévoués, et ton amie la plus précieuse - Julia Ghazarian

Nice

SHAMIRAM SEVRAG

LA "TRAVIATA" DE G. VERDI AU CASINO DU LIBAN
SUCCÈS SANS PRÉCÉDENT DE L'ENSEMBLE
ACADÉMIQUE DE L'OPÉRA D'ERÉVAN-AU PUPITRE:
L'INCONTOURNABLE CHEF D'ORCHESTRE
OHAN DOURIAN

L'Ensemble académique de l'Opéra d'Erévan s'est produit durant trois soirées au Casino du Liban devant une salle comble, avec au programme Traviata, l'un des opéras les plus populaires du compositeur G. Verdi, et qui marque l'histoire de l'Art Musical.

La venue de l'Opéra arménien au pays des Cédres n'était pas chose aisée. Hier encore impensable, le déplacement des 150 membres de la Troupe a été rendu possible grâce aux efforts conjugués des responsables, le tout placé, comme il se doit dans la mouvance de l'An 301 de notre ère, date historique de l'adoption du Christianisme comme religion d'Etat d'Arménie.

L'événement est capital pour lui assurer une solennité haut en couleur. Partout, en Arménie comme dans les pays de la Diaspora, d'intenses préparatifs sont en cours pour être exact à ce rendez-vous historique. Dans le sillage des préparatifs s'insère aussi le centenaire du décès du grand compositeur Verdi, symbole du génie italien. Nous n'allons pas reprendre à l'usage des intéressés le thème maintes fois ressassé de l'histoire de Violetta, une jeune courtisane, modèle de raffinement et d'élégance. Atteinte d'un mal incurable, se sachant condamnée, elle s'adonne aux plaisirs de la vie. Son ami Alfredo, éperdûment amoureux s'installe en désespoir de cause à Paris, où il apprend sa mort. Drame d'amour qui, au XIX^e siècle, secouait déjà la société de l'époque romantique.



Gégham Grigorian, le ténor devenu une véritable tête d'affiche, dans le rôle d'Alfredo.



La soprano Anahit Mékhitarianian, la Diva de l'Opéra d'Erévan

A travers ce large éventail de vedettes internationalement reconnues, la soprano Anahit Mékhitarianian, dans le rôle si sensible de Violetta, toujours égale à elle-même, a vite séduit son public qui l'entendait pour la première fois à Beyrouth, capitale culturelle du monde arabe et européen. Il faut dire aussi que la capitale libanaise est également un passage obligé pour tout artiste à la recherche d'une consécration internationale.

Dans la répartition des rôles Gégham Grigorian [ténor] que de nombreux mélomanes avaient eu l'heureuse occasion de l'écouter au Festival de Beiteddine en 1999, maintient toujours le cap. Mais cette fois une subite indisposition l'em-



Le ténor Ruben Nouridjanian, Sociétaire de l'Opéra d'Erévan depuis 1999.



Scène saisissante des deux vedettes Hasmig Hatsakortsian et Gégham Grigorian, de l'Ensemble Académique de l'Opéra d'Erévan, très applaudies au Casino du Liban.

pêcha de tenir son rôle. Il est remplacé par Ruben Nouridjanian, Sociétaire de l'Opéra d'Erévan qui fait le plein de sa voix. Il est aussi à féliciter dans le rôle d'Alfredo.

Le maestro Ohan Dourian, toujours vif et alerte comme nous l'avions connu à l'Opéra d'Erévan, se reposant dans sa loge, il y a de cela quelques années, a su maintenir sa fougue habituelle face aux musiciens bien préparés pour la circonstance.

L'Ambassade d'Arménie, en la personne de Armand Navasartian, diplomate chevronné et le "We Group" sont à féliciter pour la réussite de cette belle et formidable performance.

A. A.

պիտի գիտնան լաւապէս օգտուիլ իրենց...գոհի սեփական կամֆով իսկ իր իրաւատիրութեանն հրաժարած ըլլալէն:

Հուսկ՝ եթէ Հայաստան Ամենայն Հայոց Մայր հայրենիք չէ, ոչ ալ Դատի պահանջատէր, ալ ի՛նչ լ կարեւորութիւն ունի, թէ Թուրքիա իր գործած ցեղասպանութիւնը կ'ընդունի՞ կամ ոչ:

**ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԾՆՆԴԵԱՆ 116-ԱՄԵԱԿԻ ՆՇՄԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ...**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ
ՄՐՏԻ ԽՕՍ-ՔԸ**

Ե.Խ... Երեւանի «Ռուրէն Սեւակ»ի անուան դպրոցի մէջ, հանդիսատրապէս նշուեցաւ նահա-տակ-հերոս գրողի ճննդեան 116-րդ տարելիցը, Հայաստանի Կրթական Նախարարութեան ներկայա-ցուցիչին, մտաւորական ընտրանիին ու հոծ հասարակութեան ներկայութեան:

Ստորեւ կը ներկայացնենք Ֆրանսոյի Նիս քաղաքի մէջ Ռուրէն Սեւակի անուան յիշատակի տան հիմնադիր, կորովի և բազմաշնորհ հրապարակագիր Յովհաննէս Զիլինկիրեանի սրտի խօսքը, որ փոխանցուած է հանդիսութեան մասնակիցներուն և հայրենաբնակ մեր ժողովուրդին ընդհանրապէս, հայրենի մտաւորականի մը կողմէ:

*Սիրելի Հայրենակիցներ,
Եղբայրներ և Քոյրեր.*

Երեւանի Ռուրէն Սեւակի անուան Վարժարանին մէջ, այսօր կը յիշատակուի բա-նաստեղծ Ռուրէն Սեւակի ծննդեան Հարիւր տասնվեցերորդ տարեդարձը:

Այս պատճառաւ, Ռուրէն Սեւակի Հարազատներուն անունով, սրտանց շնորհակա-լութիւն կը յայտնենք ձեր ներկայութեան և նաեւ Հանդիսութեան կազմակերպիչնե-րուն:

Այսօրուան Հանդիսութեան՝ պիտի ծանուցուի նաեւ, Ռուրէն Սեւակին գաղափա-րականը և նահատակութեան պատմութիւնը Հայ ժողովուրդին մէջ տարածելու նպա-տակով, Ապրիլ 2000 թուականին յայտարարուած մրցոյթին արդիւնքները:

Բայց, այստեղ, Հարցում մը կը ծնի մեր մէջ:

Իրականութեան մէջ, ինչի՞ կը ծառայէ երկու Հազարամեայ և փառապանծ Հայկա-կան մշակոյթը:

Արդեօ՞ք, Հայկական մշակոյթը կը ծառայէ միայն, այս մշակոյթէն օգտուող կարգ մը դրագէտ և բանաստեղծներուն անձնական փառաբանութեան:

Եւ կամ թէ այս մշակոյթը ծառայելու է միայն և միայն, այս մշակոյթին իսկական տէրը եղող Հայ ազգին բարգաւաճման և յաւերժացման:

Մանաւանդ, երբ նկատի առնենք, թէ Հայ ազգը 150 տարիներէ ի վեր և նոյնիսկ մինչեւ այսօր, ամէն օր քիչ մը աւելի, քայքայման ճամբուն մէջ է:

Եւ մենք կը Հաւատանք, թէ Հայ ազգին ենթարկուած դժբախտութիւններուն առաջ-նակարգ պատճառներէն մէկը՝ Հայ մտաւորականութեան մեծամասնութեան Հայ ազգին ցաւերուն Հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնն է:

Հայ մտաւորականութեան կարեւոր մէկ Հատուածը, Հայ մշակոյթը գործածած է իր անձնական իդձերը, իր ներքին մղումները գոհացնելու Համար:

Անոնք, այս ձեւով եղած են՝ Հայ ազգին, Հայկական մշակոյթին Հարստահարիչները, և Հայ ազգին մշակութային ժառանգութիւնը մսխողները:

Ռուրէն Սեւակին, ասկէ գրեթէ 90 տարիներ առաջ գրածները կարդալ և իբր սրտցաւ Հայ անոր իրաւունք չտալ՝ անկարելի է:

Նայեցէք, թէ ի՞նչ կ'ըսէ Ռուրէն Սեւակ, «Այլասերում» անունը կրող իր գրութեան մէջ.

աչջ.

«Չէ՞ք տեսներ արդէն, թէ ինչպէս շատ մը գրագէտներ, լիրք քաջութիւնը ունին յայտարարելու՝ թէ իրենք ժողովուրդին համար չէ, որ կը գրեն:

Որբուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտբուխ բարբառի մըն է ծարաւ, իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն, ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն որպէսզի մարդ չհասկնայ»:

1910-թ.ներուն արդէն, Ռուբէն Սեւակին մտասեւեռումն էր գրել.

«Միայն հայ ժողովուրդին օգտին համար, և մանաւանդ՝ անոր հասկցած ձեւով»:
Եւ այս նպատակին համար ալ, ան նախատեսած էր.

«Հայ մտաւորականութեան վերածնունդը»:

Դժբախտաբար, Թուրք դաճիճները արգելք եղան այս վերածնունդին...:

★ ★ ★

Ռուբէն Սեւակի անուան մշակութային Հիմնարկը, 1985-էն ի վեր, իր կարելիութեան սահմաններուն մէջ կ'աշխատի՝ վառ պահելու համար Ռուբէն Սեւակին յիշատակը և անոր գաղափարները:

Այս նպատակով է, որ 1986-ին, Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ, ստեղծուեցաւ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆԸ:

1994-ին, Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.ի հովանաւորութեամբ, Պէյրութի մէջ բացուեց կատարուեցաւ Ռուբէն Սեւակի անուան մատենադարանին:

Եւ 1995-էն ի վեր ալ, Ռուբէն Սեւակի Հարազատները, հովանաւորելու կը ջանան՝ Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոց-վարժարանը:

Ռուբէն Սեւակի գաղափարները տարածելու աշխատանքներուն մաս կազմած է նաեւ, 1985-ին ստեղծուած Ռուբէն Սեւակի անուան մրցանակը:

Այս մրցանակը յատկացուեցաւ՝ Ռուբէն Սեւակը ծանօթացնելու և անոր գաղափարները տարածելու աշխատող Հայ մշակոյթի վաստակաւոր ներկայացուցիչներուն: Որոնց մաս կը կազմեն՝ Անդրանիկ Մառուկեանը, Ալեքսանտր Թոփչեանը, Անահիտ Թոփչեանը, Գէորգ Գապառաճեանը, Ժիրայր Նայիրին, Պէպօ Սիմոնեանը, Վարդան Ապտօն, Ճուլիա Ղազարեանը, Վահան Նաւասարդեանը և Հայաստանեայց եկեղեցւոյ Համալսարանական ուսանողներու միութիւնը (ՀԵ ՀՈՄ-Անթիլիաս):

★ ★ ★

Ապրիլ 2000թ.ին յայտարարուած մրցոյթին՝ մինչեւ 26 Օգոստոս 2000 թուականը եղող ժամանակամիջոցը շատ կարճ ըլլալուն պատճառաւ է թերեւս, որ ներկայացուած աշխատասիրութիւններուն մէջ, մրցոյթին պայման ըլլալով պահանջուած «Ռուբէն Սեւակի գաղափարականը և նահատակութեան պատմութիւնը» իբր առաջնակարգ բնաբան [Thema] չեն առնուած:

Այս տեսակէտով այս մրցոյթին առաջին, երկրորդ և երրորդ մրցանակները վերապահուած են՝ մինչեւ 31-12-2001 թուականը ներկայացուելիք և միայն Ռուբէն Սեւակի գաղափարականը և նահատակութեան պատմութիւնը իբր բնաբան առնող բանիմաց և լայնածաւալ աշխատասիրութիւններուն:

Այս մրցոյթին արդիւնքները պիտի ծանուցուին 24 Ապրիլ 2002-ին, եղեւնի տարեդարձին օրը:

Ուրեմն այստեղ, ծանուցանելու հաճոյքը ունինք, 2000 թուականի Ռուբէն Սեւակի անուան մրցոյթին դափնեկիրները՝

4.- Չորրորդ մրցանակ- Սերգէյ Գալոյեան- «Ռուբէն Սեւակ Տրուբադորը»:

5.- Հինգերորդ մրցանակ- Հոփսիմէ Պետրոսեան- «Հայ Քնարերգութեան շերմակ Զիաւորը»:

ԲԻԸ 142

**ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԶՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ
ԱԲԷԼ ՔԶՆՅ. ՕՂԼՈՒԳԵԱՆ**

Բարեկամ մը, համացանցին միջոցաւ իմ ուշադրութեանս յանձնեց գեղեցիկ առակ մը: Առակները յաճախ իրենց պարզ յօրինուածքին մէջ կեանքի մեծ նշմարտութիւններ կը բովանդակեն: Ի դէպ, պէտք է նկատի ունենալ, որ Յիսուս ալ իր ուսուցումներուն պատկառելի մէկ մասը, որ աւանդուած է Աւետարաններուն մէջ, Իր Խօսքին բարոյական միջուկը՝ առակներով արտայայտած է Իր ունկնդիրներուն:

Առակը, որուն պիտի անդրադառնամ, և որ «Ինչպէս իրաց դրութիւնն է» խորագիրը կը կրէ, առիթ կու տայ խորհրդածելու նաեւ մեր Անկախութեան օրուան մասին, հրամցնելով մեզի ուսանելի դաս մը՝ ի շահեկանութիւն:

Կը պատահի, որ մարդ մը շերամի բոժոժ մը կը գտնէ: Կը հասնի օրը, երբ շերամը բոժոժին մէջ կը վերածուի անուշիկ թիթեռնիկի մը: Մարդը կը նկատէ, որ այդ բոժոժին վրայ փոքրիկ ծակ մը բացուած էր, և ուր որ է թիթեռնիկը պիտի կարենար հետըզհետէ այդ անցքը լայնցնել ու դուրս թռչիլ բոժոժէն՝ կապոյտ երկինքին տակ, դաշտերու ծաղիկներուն վրայ:

Բոժոժին մէջ, ուրեմն, թիթեռնիկը կը պայքարի ու կը պայքարի շատ երկար, ուժ կու տայ իր մարմնին, որպէսզի բոժոժին վրան բացուած ճեղքը լայնցնէ ու դուրս նորոպրի անկէ. բայց ի՛նչ տարօրինակ բան կը թուի մարդուն, կը կարծէ, թէ թիթեռնիկը անկարող է այդ բոժոժէն վերցնելու իր ազատութիւնը:

Մարդը կը գրայ թիթեռնիկին վրայ, և որպէսզի օգնէ թիթեռին, կ'առնէ մկրատ մը ու կը ճեղքէ բոժոժին մնացած մասը: Այսպիսով, թիթեռը շատ դիւրութեամբ դուրս կու գայ բոժոժէն: Սակայն, ի՛նչ զարմանալի բան, ան կ'ունենայ ուրած մարմին մը և կծկուած, խեղճուկ թւերով՝ անկարող թռչելու կապոյտ երկինքին տակ, դաշտերու ծաղիկներուն վրայ:

Մարդը կը շարունակէ դիտել թիթեռնիկը, յուսալով, որ ուր որ է անոր թւերը պիտի մեծնան ու ընդլայնին, որպէսզի անոնք կարենան շալկել մարմինը, որ ժամանակով աւելի՛ պիտի նրբանար: Սակայն ոչի՛նչ կը պատահի: Իրականութեան մէջ, թիթեռը իր մնացած կեանքը ստիպուած կ'ըլլայ սողալով անցնելու՝ այդ նոյն ուրած մարմնով և կծկուած խեղճուկ թւերով: Ան երբեք չկրցաւ թռչիլ ու զուարթացնել բնութիւնը՝ ժպտացող կապոյտ երկինքին տակ, դաշտերու բուրումնաւէտ ծաղիկներուն վրայ:

Ինչ որ այս ազնիւ մարդը չկրցաւ հասկնալ, և ինչ որ ան առանց գիտակցելու իր անապարանքին մէջ ըրաւ, թէ բոժոժի այդ փոքրիկ բացուածքէն թիթեռնիկին դուրս ելլելու համար մղած երկարատեւ պայքարը՝ Աստուծոյ խորհրդաւոր, իսկ բնութեան մասնաւոր՝ մէկ տնօրինումն էր. անհրաժեշտութիւն մը, որ ան շնորհիւ իր տուած ճիգին՝ դէպի իր թւերը հոսեցնէ իր մարմինին հեղուկը. որպէսզի երբ դուրս գայ բոժոժէն՝ պատրաստ ըլլայ թռչելու:

Երբեմն պայքարը ուղղակի անհրաժեշտութիւն մըն է մեր կեանքին մէջ: Եթէ Աստուած թոյլ տար մեզի, որ մեր կեանքը առանց խոչընդոտներու և դժուարութիւններու ընթանար, պիտի անդամալուծէր մեզ: Զօրեղ պիտի չլլայինք այնպէս, որքան որ պիտի կարենայինք ըլլալ և երբեք պիտի չկարենայինք թռչիլ:

Զօրութիւն խնդրեցի, և Աստուած դժուարութիւններ տուաւ զօրանալու համար: Իմաստութիւն խնդրեցի, և Աստուած բարդութիւններ տուաւ լուծելու համար:

Առատութիւն խնդրեցի, և Աստուած խելք և մկաններու ուժ տուաւ որ աշխատիմ՝ առատութիւն և նոխրութիւն ստեղծելու համար: (Ծարք էջ 10)

6.- Վեցերորդ մրցանակ- Արմենուհի Բուրմանեան- «Ռուբէն Սեւակ»:

Այս մրցանակակիրներէն զատ, Հետեւեալ աշխատասիրութիւնները յիշատակութեան արժանի նկատուած են.

- Յասմիկ Յովհաննիսեան՝ «Ու ինքնայրումն այդ անմահութեան խորհուրդն ունի», Գայանէ Աթանէսեան՝ «Ռուբէն Սեւակ», Արաքսիա Յովհաննիսեան՝ «Զրոյց ժամանակի մէջ», Վարդուկ Դպրուհի՝ «Հայ Տրուբադուրը», Նուշանիկ Ոսկանեան՝ «Ռուբէն Սեւակ», Էմմա Յարութիւնեան՝ «Մահ չիմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է», և նաեւ Ռուբէն Սեւակին գաղափարականը շատ տարբեր ձեւով մեկնաբանող ուսումնասիրութիւն մը՝ Արամ Ալեքսանեան - «Ռուբէն Սեւակի գրական ժառանգութեան իմացարանութիւնը»:



Մրտանց կը շնորհակտորենք Ռուբէն Սեւակի անուան մրցոյթին մրցանակակիրները, և նաեւ յիշատակութեան արժանի նկատուած ուսումնասիրութիւններուն Հեղինակները:

Մենք, շնորհակալութեան պարտք ունինք, հանդէպ բոլոր անոնց, որոնց Հեղինակած ուսումնասիրութիւնները՝ պիտի ծառայեն Ռուբէն Սեւակի կեանքը, գործը և նաեւ անոր անձնագոհութեան ոգին հայ ժողովուրդին մէջ տարածելուն:

Այստեղ կ'ուզենք, խորին յարգանքով խոնարհիլ, Սովետական շրջանի հայ մշակոյթի ներկայացուցիչներուն առջեւ, որոնք, 1920-էն սկսեալ, Ռուբէն Սեւակը Հայաստանի մէջ ծանօթացնելու նպատակով ուսումնասիրութիւններ և նաեւ գիրքեր հրատարակած են:

Այս հրատարակութիւններէն, մենք մեր քով ունինք միայն Հետեւեալ գիրքերը՝

1.- 1955-ին, Երեւանի մէջ, Եղիշէ Պետրոսեանի Հեղինակութեամբ հրատարակուած՝ «Ռուբէն Սեւակ-Երկեր» վերտառութեամբ գիրքը:

2.- 1959-ին, Երեւանի մէջ, Գէորգ Հատիտեանի Հեղինակութեամբ հրատարակուած՝ «Ռուբէն Սեւակ» վերտառութեամբ գիրքը:

3.- 1965-ին, Երեւանի մէջ, Եղուարդ Զրբաշեանի Հեղինակութեամբ հրատարակուած՝ «Ռուբէն Սեւակ» վերտառութեամբ գիրքը:

4.- 1972-ին, Երեւանի մէջ, Վլատիմիր Կիրակոսեանի Հեղինակութեամբ հրատարակուած՝ «Ռուբէն Սեւակ-Կեանքը և ստեղծագործութիւնը» վերտառութեամբ գիրքը:

Մենք, այս Հեղինակներէն միայն, 1978-ին, Երեւանի մէջ, Վլատիմիր Կիրակոսեանը ճանչնալու հաճոյքը ունեցանք:

Եւ եթէ, Վլատիմիր Կիրակոսեանը այսօր, այս սրահին մէջ է, կրկին մեր շնորհակալութիւնները կը յայտնենք իրեն:

Եւ այս առթիւ հաճոյքը ունինք ծանուցանելու, թէ Վլատիմիր Կիրակոսեանը, Ռուբէն Սեւակի անուան մշակութային հիմնարկի կողմէ՝ «Վերածնունդ»ի մրցանակով պարգեւատրուած է:

Այստեղ կ'ուզենք նաեւ, մեր խոր գնահատանքը յայտնել, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան վարժարանի անխոնջ տնօրէնուհի՝ Տիկին Շուլիա Ղազարեանին, և իր ժրջան գործակիցներուն որոնք, Ռուբէն Սեւակին գաղափարները նոր սերունդներուն փոխանցելու համար, բացառիկ և գիտակից աշխատանք կը տանին:

Ձրանսայի Նիս քաղաքի մէջ,
Ռուբէն Սեւակի Անուան Յիշատակի Տան Հիմնադիր՝
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՆԵՐԸ...**

**ԱՐԵՒՍՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ)**

27-10-1999-ի ողբերգությունն անմիջապես յետոյ, 2-նոյեմբեր 1999-ին, «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ այսպէս արտայայտուած էինք.

«Ովքե՞ր են նահատակներ Վազգէն Սարգիսեանը, Կարէն Տեմիրճեանը և անոնց ընկերները սպաննել տուող բուն դատաւորները:

Ովքե՞ր էին 24 Ապրիլ 1915-ին Ազգի մը «Ուղեղները» սպաննելով, ազգը առանց առաջնորդի ու անգլուխ «խրտուխլակ»ի վերածել յետոյ, հա,

Սիոնիստներուն հիմնած Իրօքիաու Կուսակցութիւնն էր 24 Ապրիլ 1915-ին պատասխանատուները:

Սիոնիստ Իրօքիաու Կուսակցութեան «24 Ապրիլ 1915-ի ուղեղներու» դահիճներուն փորձառու ժառանգորդներն են որ, գլխաւորութեամբ մերօրեայ Արեւմուտի ծանօթ հետախուզական սպասարկութեան, կազմակերպեցին Վազգէն Սարգիսեանի և Կարէն Տեմիրճեանի հաշուեյարդարը:

Անոնք վարժութիւնը ունին, «24 Ապրիլ 1915»ի փորձառութեամբ, սպանութիւններ կատարելու:

Անոնք են Ճոն Ֆ. Քենետին սպաննել տուողները: Անոնք են Ռոպերտ Քենետին, Մարքին Լուսեր Բիւնը, Սալվատոր Ալլիետէն, Յակոբ Յակոբեանը և դեռ ուրիշ քիւրատր դեկավարներուն սպանութեանց բուն դատաւորները:

Անոնք են, իրենց ունեցած անհուն նիւթական կարելիութիւններուն շնորհիւ, ամբողջ աշխարհի մէջ կատարուած շատ դատաւորութիւններուն պատասխանատուները, իրենց վրայ հովանի ունենալով Սի. Այ. Էյ. ք»:

* * *

27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն յետոյ, մէկուկէս տարիներ անցան: Այս մէկուկէս տարուան ընթացքին Արեւմտ. պետութիւնները, իրենց ենթակայ կազմակերպութիւնները, արեւմտեան աշխարհակալ լրատուութեան «բանբեր»ները՝ այսօրուան Հայաստանի «Իշխանաւոր»ներուն մասին որեւէ քննադատութիւն չըրին, անոնց մասին, որեւէ ձեւով, աննպաստ արտայայտութիւններ չունեցան:

Մէկուկէս տարիէ ի վեր, Արեւմտեան աշխարհին մէջ, 27 Հոկտեմբեր 1999-ին կատարուած ողբերգութեան մասին, որեւէ ձեւով անդրադարձումներ չեղան:

Այս խնդրին ներքին ծալքերուն մասին, արեւմտեան տեղեկատուական աշխարհակալ կազմակերպութիւններուն կողմէ, որեւէ քննութիւն չկատարուեցաւ, և որեւէ տեղեկագրութիւն չհրատարակուեցաւ:

Մինչդեռ, 27 Հոկտեմբեր 1999-ին, Հայաստանի Ազգային Ժողովին մէջ կատարուածը, պատմութեան մէջ նմանը չեղող ողբերգութիւն մըն էր:

Խորհրդարան ըսուած ազգի մը ամենա«Սուրբ» վայրին մէջ, դահիճները հայկական պետութեան անփոխարինելի (այդ օրերու) ղեկավարները սպաննեցին:

Եւ արեւմտեան պետութիւնները, այսքան բացառիկ եղելութեան մը դէմ, լուսմնացին միջեւ այսօր:

Բայց այս՝ իրենց «օրէնք»ն է: Իրենք, եթէ ուզեն, մրջիւնը ուղտի կը վերածեն: Եւ կամ՝ հակառակը կ'ընեն՝ ուղտը մրջիւնի կը վերածեն: Եւ այդպէս ալ ըրին:

**27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ...
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)**

Հայաստանի մեջ կատարուած ողբերգութիւնը, անցնշան դէպքի մը պէս, մո-
նացութեան ենթարկուեցաւ:

Բայց, ի՞նչ կ'ուզէիք որ ընէին, երբ այս ողբերգութեան բուն պատասխանա-
տուները իրենք են:

Բնական է, որ ամենալաւ ձեւը, այս մասին չարտայայտուիլն է:

Չէ՞ որ, մարդկային յիշողութիւնը, «ժամանակ» ըսուած հիւանդութեամբ
վարակուած է: Եւ «ժամանակ»ը, ամէն բան կը մոռցնէ:

Արեւմտեան պետութիւնները յաջողեցան իրենց ծրագիրներուն մէջ: Հայաս-
տանի Պետութիւնը, 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն ետք, բոլորովին
արեւմտեան պետութիւններուն ծիրին ենթարկուիլ սկսան:

Եւ մէկուկէս տարի յետոյ՝ այսօր, 27-10-1999-ի ողբերգութեան մէջ մեծ
պատասխանատուութիւն ունեցող Ռ. Քոչարեանը՝ Ֆրանսայի Հանր. Նախագահ
Ժագ Ծիրաքի կողմէ մեծ պատիւներով ընդունուեցաւ:

* * *

Բայց ի՞նչ է, կատարուած այս սադրանքներուն յետին նպատակը:

Այս՝ այն մշտնջենական պայքարն է, որ կը մղուի, դարերէ ի վեր, արեւմտ-
եան պետութիւններուն կողմէ, Ռուսիոյ դէմ:

Նպատակը՝ Ռուսիոյ և Միջին Ասիոյ հարստութիւնները ձեռք անցընել է: Եւ
Հայաստանը, այս պայքարին մէջ, ամէնակարեւոր յենակէտն է:

Հայաստանը այսօր, թրջական վտանգին պատճառաւ, ռուսական պաշտպա-
նութեան պէտք ունի:

Բայց, արեւմտեան պետութիւնները, 1918-1920-ի տարիներուն եղածին
նման, եթէ Հայաստանը բոլորովին իրենց կողմը դարձնեն, Ռուսիան կը կորսըն-
ցընէ Կովկասը, և Միջին Ասիոյ հարստութիւնները Արեւմտեան պետութիւննե-
րուն ձեռքը կ'անցնին:

Ժագ Ծիրաքին վերջին շրջաններուն հայոց հանդէպ ցուցաբերած բարեա-
ցականութիւնը, Ֆրանսային, Հայաստանի ճամբով, Կովկասի մէջ տեղաւորուե-
լու ծրագրին մաս կը կազմէ:

Վերջին օրերուն յայտարարուեցաւ, թէ Ժագ Ծիրաք, Պատուոյ Լեգէոնի
[Legion D'Honneur] շքանշանով պատուած է Ռ. Քոչարեանը, և Ֆրանսայի Նա-
խագահը անձամբ անցուցած է շքանշանը Հ.Հ-ի Նախագահի կուրծքին:

Երբ, թերթերուն մէջ, այս լուրը կարդացինք, ինքնաբերաբար վերյիշեցինք
ասկէ 125 տարիներ առաջ պատահած շքանշանով պարգևատրումի մը պատ-
մութիւնը, որ հայ ազգին համար շատ ողբերգական հետեւանքներ ունեցած է:

1876-թ.ներուն էր: Այդ տարիներուն Ռուսերը, մինչեւ Պոլսոյ արուարձանը
եղող՝ Այի-Սթեֆանոս գիւղը (ներկայի Եշիլքէօյ) հասած էին:

Եւ այն ատենուան Պոլսոյ Պատրիարքը՝ Ն. Վարժապետեան, իր հակառուս
դիրքորոշման պատճառաւ, Սուլթան Ապտիլ Համիտի կողմէ ադամանադակու
Օսմանեան շքանշանով կը վարձատրուի:

Եւ այս շքանշանը, Սուլթանը անձամբ կ'անցընէր, Պատրիարքին կուրծքին:

Սուլթանին ընծայած այս «մեծ պատիւ»ին ազդեցութեամբ, ուրախութենէն
խելագարած Պատրիարքը սապէս կ'արտայայտուի. «ԵՐԱՆԻ՛, Թէ ՀԱՅ ԱԶԳԸ,
ՀՐԵԾՏԱԿԱՆՄԱՆ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏԻՆ ՅԱՐԳԸ ԳԻՏՆԱՐ»:

Բոլորս ալ գիտենք, թէ Սուլթան Ապտիլ Համիտ ի՞նչ տեսակ հրէշ մը եղած

**27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՆԵՐԸ...
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՈՈՒԲԷՆԵԱՆ]**

է հայ ազգին համար:

Արդեօ՞ք ժագ Ծիրաքին շքանշանը, Հայ Ազգին գլխուն, Ապտիլ Համիտին շքանշանին ողբերգությունները պիտի բերէ: Արդեօ՞ք, Հայ Ազգը, պիտի հեռանայ բոլորովին Ռուսիայէն, և պիտի իյնայ կրկին Արեւմտեան պետութիւններուն և Թուրքիոյ ծուղակը:

Աստուած պահէ Հայ Ազգը, այս տեսակ չիքքնասպանութիւն» է մը:

* * *

Բայց արեւմտեան պետութիւնները շատ լաւ գիտեն, Հայ Ազգին նկարագիրը և անոր տկարութիւնները: Անոնք շատ լաւ գիտեն, թէ հայերը որքա՞ն շուտ կը հաւատան փայլուն խոստումներու և անիրագործելի «Երագ»ներու: Եւ անոնք, մանաւանդ շատ լաւ գիտեն, հայ առաջնորդները սիրաշահելու, խաբելու և կաշառելու կերպը:

Հայոց վերջին դարու պատմութիւնը, կաշառուած հայ առաջնորդներով կը վխտայ:

Հայ Ազգին փայլուն բայց սին խօսքերու հաւատալուն և շոայլ գովասանքներով տարուելուն վերջին ապացոյցը, Ռ. Ջոչարեանի, ժագ Ծիրաքի հրաւերով, 12 Փետրուար 2001-ին Ֆրանսա կատարած այցելութիւնն է:

Այս այցելութեան առիթով, ֆրանսական իշխանութիւնները, հայերուն աչքերը շլացնելու համար, ամէն բան ըրին: Այդ օրերուն, Փարիզի գլխաւոր պողոտաները զարդարուեցան հայկական դրօշակներով:

Ծիրաք անձամբ դիմաւորեց Ջոչարեանը՝ *էնվալիտ* հրապարակը: Եւ անկէ յետոյ, Հ.Հ.ի Նախագահը հիւրասիրուեցաւ *էլիզէ* պալատին մէջ: Եւ ան, օրերով, պատիւներու արժանացաւ ֆրանսական իշխանութիւններու կողմէ:

Բայց, ֆրանսական իշխանութիւններուն կատարած հիւրասիրութիւնները, Հայ Ազգը փայփայելու և իրենց ի նպաստ տպաւորելու համար էին միայն:

Ֆրանսական հեռատեսիլներն ու մամուլը, Ռ.Ջ.ին շոայլուած այս հիւրասիրութեան գրեթէ չանդրադարձան:

Եւ խեղճ Ծամիրամ Սեւակը տեսական մեզի կը հեռաձայներ և կը հարցնէր թէ՛ «Ինչո՞ւ ֆրանսական թելիվիզիոնները, Ռ. Քոչարեանի այցելութեան մասին որեւէ լուր չեն տար»:

Որովհետեւ Ծամիրամ Սեւակը իր ձեռքին ունէր Հ.Հ.ի նախագահին Ֆրանսա այցելութեան ծրագիրը՝ «Այս պալատէն՝ միւս պալատ: Այս հիւրասրահէն՝ միւս ճաշասրահ»:

Եւ Ծամիրամ կը սպասէր, որ իր ազգին նախագահին այցելութեան մասին լուրեր տրուին հեռատեսիլէն:

Որովհետեւ, Ռ. Սեւակին դուստրը, չէր կրնար գիտնալ խաղցուածին թատրոնը ըլլալը:

Բայց Հայաստանի պետական «Ազգային» հեռատեսիլը, Ռ.Ջ.ի Ֆրանսա այցելութեան բոլոր մանրամասնութիւնները, առաջինէն մինչեւ վերջին վայրկեանը, ամենափոքր մանրամասնութիւններով ու օրերով տուաւ: Եւ ի՞նչ մեկնաբանութիւններով և ի՞նչ չափազանցուած գովաբանութիւններով:

Բնականաբար, Երեւանի այսօրուան իշխանաւորներուն նպատակը, Հայաստանի ժողովուրդին քով գերօ-ի իջած Ռ. Ջ.ի վարկը, Ֆրանսայի մէջ կատարուած այս շողշողուն հիւրասիրութեան լուրերով բարձրացնել էր: Ու նաեւ՝ ժողովուրդին հաւատացնել, թէ Ֆրանսայի Նախագահը շա՛տ կը գնահատէ իր հիւրը...: Բայց մենք կը կարծենք, թէ հայ ժողովուրդը, այնքան ալ միամիտ չէ, այս տեսակ «բեմադրութիւն»ներու հաւատալու համար:

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999_Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
 ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ...
 ԱՐԵՒՄՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
 ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ

ՅՈՎԶԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 (ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ)

Ընդհակառակը, ժողովուրդին մեջ անիրաւութեան դէմ ընդվզումի զգացումները աւելի կը սրուին, երբ կը տեսնեն որ իրենց հոս, թշուառութեան մէջ եղած միջոցին, իրենց նախագահը իշխանավայել կեանք մը կ'ապրի հոն:

Բայց մենք կը կարծենք, որ բուն յանցաւորները ղարաբաղցի աւատապետ մը նախագահ ընտրածներն են, որուն նախագահ դարձած առաջին օրերէն արդէն, յայտնի եղած էր անոր «արժէք»ը:

Հայաստանի ժողովուրդին հացի կարօտ եղած օրերուն, ան իր ընտանիքի անդամներով և 50 հոգինոց «շքախումբ»ով, արտասահման կը ճամբորդէր, իբր թէ միջազգային կազմակերպութիւններու համաժողովներուն մասնակցելու համար:

Ժընեւ, Տաւուս և զանազան օտար քաղաքներու մէջ, պալատաման պանդոկներ էին Հ.Հ.ի նախագահին ընտանիքին և իր շքախումբին իջեւանած վայրերը: Եւ այս ճամբորդութիւններուն ամէն մէկը՝ նուազագոյն 500,000 –(հինգ հարիւր հազար) տոլար կ'արժէր Հայաստանի արդէն պարապ պետական գանձին:

Բայց Ռ. Զ.ի աւատապետի մտայնութեան ամենէն ցայտուն ապացոյցը՝ իրեն ուղղուած հարցումի մը տուած պատասխանն է:

Հարցում՝ որ թէ՛ Հայաստանի ժողովուրդին և թէ՛ Հայաստանի այսօրուան վիճակով մտահոգ Սփիւռքի հայրենասէր հայերուն համար մահու և կենաց հարց է:

Հարց կը տրուի թէ՛ «ինչ միջոցներ առնել կը մտածէք արգելք ըլլալու համար Հայաստանի ժողովուրդին արտասահման գաղթելուն և այս պատճառով այլ Հայաստանին պարպուելուն»:

Ահա Զոչարեանին այս կենսական հարցումին տուած պատասխանը.

«Այս խնդիրը պէտք է չափազանցել: Իրականութեան մէջ այս արտագաղթը, ձեռով մը օգտակար է Հայաստանին: Նկատելով, որ այս արտագաղթողները Հայաստանի մէջ մնացող իրենց ընտանիքի անդամներուն դրամ կ'ուղարկեն: Եւ այս ուղարկուած դրամներէն շատ կ'օգտուի Հայաստանը»:

Մենք, Հայաստանի հանրապետութեան նախագահէ մը, այսքան անպատասխանատու և հայկական ազգային շահերուն ա՛յս աստիճանի հակառակ պատասխան մը չէինք կրնար սպասել, երեւակայե՛լ նոյնիսկ:

Այս արտագաղթողները, քանի մը տարի թերեւս, իրենց Հայաստան մնացած ընտանիքի անդամներուն դրամ կրնան ուղարկել: Բայց, միջոց մը ետք, Հայաստան մնացող անդամներուն մեծ մասը, կը մեկնին արտասահման, միանալու համար իրենց ընտանիքներուն:

Արտասահման մեկնողներէն վերադարձողներ կրնան ըլլալ: Բայց անոնց թիւը՝ հարիւրին տասը չ'անցնիր, և հարիւրին իննսունը չեն վերադառնար Հայաստան:

Այս է իրականութիւնը, և ասոնք են միջազգային Գաղթականական Հարցերու կազմակերպութեան պաշտօնական զեկոյցներուն մէջ նշուած թիւերը:

Եւ մտածենք, որ այսօր, միայն Գալիֆորնիա, մէկ միլիոնէն աւելի հայ մեկնած է Հայաստանէն, և ասոնց մեծամասնութիւնը վերադառնալ չեն խորհիր:

Ընդհակառակը՝ Հայաստան մնացած իրենց ընտանեկան պարագաներն ալ, եթէ միջոց գտնեն՝ պատրաստ են Գալիֆորնիա մեկնելու:

**27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ...
ԱՐԵՒՍՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ**

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՈՒԻԲԷՆԵԱՆ)

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԲՈՒՆ... (Ծար. էջ 2-էն)

Ա՛յս է Հայաստանի այսօրուան ցաւայի իրականութիւնը:
Այս անգիտակից նախագահին երեսին տրուած ապտակ մըն է կը կարծենք,
Հայաստանէն եկող և շատ ցաւայի ու սրտանմլիկ հետեւեալ լուրը:
Նոյնութեամբ տալու ջանանք սարսափելի եղելութիւնը: Հայկական «Արմէն-
փրէս» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ թէ՛ «ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՂԱԲԱՆ ԳԻՒՂԱՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ. 9-Ը ՏԱՐԵԿԱՆ ՏՂԵԿ ՄԸ ԻՆՔՁԻՆՔԸ ԿԱՄԵԼՈՎ
ԿԵԱՆՔԻՆ ՎԵՐՋ ՏՈՒԱԾ Է:
ԾՆՈՂՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԶԱԽԱԿԸ ԽՈՀԱՆՈՑԻՆ ԱՌԱՍՏԱՂԷՆ ԿԱՌՈՒԱԾ ԳՏԱԾ ԵՆ,
ԱՆՈՐ ԴՊՐՈՑԷՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԷՆ ԶԱՆԻ ՄԸ ԺԱՄ ԵՏԷ: ԶՈՀԻՆ ՄԱՐՄՆԻՆ ՎՐԱՅ
ԲՈՆՈՒԹԵԱՆ ՈՉ ՄԷԿ ՀԵՏԷ ՉԷ ԳՏՆՈՒԱԾ: ԿԸ ԿԱՐԾՈՒԻ, ԹԷ ԵՐԱՌԱՆ ԱՅՍ ՅՈՒ-
ՍԱՀՏԱԿԱՆ ԱՐԱՐԸԸ ԳՈՐԾԱԾ Է ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԾԱՏ ԴԺՈՒԱՐ ԱՊՐՈՒՍՏԻ ՊԱՅ-
ՄԱՆՆԵՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ: ԸՆՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԻ»:

* * *

Արդեօ՞ք Հ.Հ.ի նախագահը, Ազերիներուն պնդումին համեմատ, իրապէս
թրքական ծագում ունի, հայրը թուրք է և ունի եղբայր մը Պաքուի մէջ:
Եւ մտածել որ ան, Երեւանի մէջ, վերջերս իրեն հետ հարցազրոյց կատարող
թուրք լրագրող Մէհմէտ Ալի Պիրամտ-ին հետեւեալ յայտարարութիւնը կատարած է.
«ՄԵՆՔ. ԹՈՒՐԵՒԱՅԷՆ. ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԸ ԶՈՒՆԻՆՔ»:
Հայաստանի հանրապետութեան նախագահին այս ըսած խօսքերը կարդալէ
ետք, այլեւս մենք ալ համոզուած ենք որ ինք «թրքական ծագում ունի»:

DUNYANIN EN KORKUNÇ İRKÇİ DEVLETİ TÜRKİYE

“ONUNCU YIL MARSINI” BİLİRSİNİZ HERHALDE.
“ON YILDA ONBES MİLYON GENÇ YARATTIK HER YASTAN”
NASIL YARATIRSINIZ ? SİZ “ALLAH”MİSİNİZ ?
YOK CANIM... TÜRK USÛLÜ SAG OLSUN. ÇİNGENE ASILLI [FAKAT FARMASON
ÜSTADI AZAM] TALAT PASA ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATTI. SELANIKLI ?
MUSTAFA KEMAL RUMLARI, VE TALAT PASADAN SAG KALAN ERMENİLERİ TEMİ-
ZLEDİ. SONRA ? SONRA, FARMASON YUNANLI VENİZELOS SİZİNLE ANLASTI. VE,
YUNANISTANDA [BATI TRAKYA HARIÇ] NE KADAR KILIÇZORUYLA MÜSLÜMAN
OLMUS YUNAN İRKİNİN EN TEMİZ İNSANLARINI TÜRK DİYE MİLYONLARCASINI
SİZE GONDERDİ. SONRA, BULGARISTANDAN, HALIS MUHLIS BULGAR İRKİNDAN,
FAKAT KILIÇ ZORUYLA MÜSLLÜMAN OLMUS “POMIAK”LAR AKIN AKIN GELDİLER.
YUGOSLAVYADAN, HAKIKI SIRP İRKİNDAN, FAKAT KILIÇ ZORUYLA MÜSLÜMAN
OLMUS “BOSNIAK”LAR DA GELDİLER.
ANATOLIA DA İSE HAHAM KIZI YAHUDI, FAKAT KORKUNÇ TÜRKÇÜ HALİDE
EDİP, SOYKIRIM ARTIGI YUZBINLERCE ERMENİ ÇOCUGUNU SU KATILMAMIS TÜRKE
ÇEVİRDİ.
BUNA İLAVE EDİN, 1915-DE OLÜM KORKUSUYLA MÜSLÜMAN OLMUS ANA-
TOLYADAKI MİLYONLARCA ERMENİYİ.
[3000 SENELİK VATANINDA YASİYAN BİR MİLLETİ, NE KADAR DA KESSENİZ,
BITİREMEZSİNİZ], HESAP ORTADA.
İSTE BOYLE YARATTINIZ “ON YILDA ONBES MİLYON GENÇ. HER YASTAN” **Յ. Չ.**

**27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ...
ԱՐԵՒՍՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ)**

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԷ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԸ
ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ, 1700-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հովանադրութեամբ և Անթիլիասի 1700-ամեակի գրասենեակի կազմակերպութեամբ, յառաջիկայ 24-26 Մայիս 2001-ին, ազգային եղիշէ Մանուկեան ֆոլէճին մէջ, տեղի պիտի ունենայ միջազգային գիտաժողով մը, որուն գլխաւոր նիւթն է «Հայ եկեղեցւոյ նպաստը Միջին Արեւելքի Քրիստոնէական Վկայութեան»:

Հայ եկեղեցւոյ հոգեւոր, մշակութային, ընկերային, միջ-եկեղեցական ու այլ բնագաւառներէ ներս կատարած ներդրումին մասին և այլ յարակից նիւթերով հանդէս պիտի գան տարբեր երկիրներէ հրաւիրուած հայ թէ օտար բարձրաստիճան հոգեւորականներ ու համալսարանի դասախօսներ: Սոյն գիտաժողովին ներկայ պիտի գտնուին նաև եկեղեցիներու հոգեւոր պետեր, եկեղեցիներու ներկայացուցիչներ և հիւրեր:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է կապ պահել 1700-ամեակի գրասենեակի վարիչ-ֆարտուղար Նարեկ Ծ. Վրդ. Ալեքսէմէզեանին հետ, հետեւեալ հասցէին.

Armenian Catholicosate of Cilicia
P.O. Box 70317
Antilias - Lebanon
Tel: (+961-4) 410001, 410003
Cellular: (+961-3) 486943
Fax: (+961-4) 417971, 419724
E-Mail: nareg@inco.com.lb
E-Mail: cathcil@inco.com.lb

ՄԵԾ ՊԱՀՈՑ ՕՐԵՐԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

[ԱՆԹԻԼԻԱՍ]– Քառասնօրեայ պահեցողութեան օրերու առաջին Ուրբաթ 2 Մարտի առաւօտուն, Արեւազալի արարողութեան աւարտին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ խօսք ուղղեց ներկայ հաւատացեալներուն:

Վեհափառ Հայրապետը պահեցողութեան իմաստին մասին արտայայտուեցաւ, ապա հրաւիրեց մեր ժողովուրդի գաւակները հաւատարմութեամբ գալու Անթիլիաս, իրենց երգեցողութեամբ մասնակցելու արարողութեանց ու մանաւանդ հետեւելու Միաբան Հայրերուն կողմէ ամէն Զորեմբշաբթի և Ուրբաթ օրերուն տրուող հոգեւոր դասախօսութեանց:

Յայտնենք, որ Լիբանանի Թեմին մէջ եւս, Կիլիկեան Ս. Աբրոնի Միաբան Հայրեր ֆարոգախօսութիւններով պիտի արժեւորեն Մեծ Պահոց քառասնօրեայ այս ժամանակաշրջանը:

Նշենք նաեւ, որ Միաբան Հայրեր, յառաջիկայ օրերուն, հերթաբար պիտի մեկնին Բերիոյ թեմ, Հալէպի և Գամիշլիի մէջ եւս հոգեւոր դասախօսութիւններ տալու, հոգեւորապէս լեցնելու համար 1700-ամեակի ըջանակալից այս տարին:

Ս Տ Ա Յ Ա Ն Ք
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ
«ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՂՄՆ ԱՇԽԱՐՀԻ»
Հրատարակութիւն Թէքէեան Մշակութային Միութեան 1999

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
 ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ...
 ԱՐԵՒՍՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
 ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ]

«ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ»
ՄԵԾ ՊԱՀՔԻ ՀՈԳԵՒՈՐ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ՇԱՐՔ
(ԹԻՒ 3)
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տա-
 նարին մէջ տեղի պիտի ունենան Արեւազալի և Հսկումի ժամերգութիւններ,
 ԶՈՐԵՔՇԱՐԹԻ և ՈՒՐԲԱԹ օրերը: Մեծ Պահի շրջանին տեղի պիտի ունենայ
 «Մեր Հայրերը կը խօսին» հոգեւոր խորհրդածութեան երրորդ շարքը՝ 1700
 ամեակին առիւ:

Արեւազալի ժամերգութիւնը պիտի սկսի առաւօտեան ժամը 7:00-ին: Հսկումի
 ժամերգութիւնը երեկոյեան ժամը 5:00-ին: Հոգեւոր խորհրդածութիւնները տեղի
 պիտի ունենան Զորեքշաբթի օրերը առաւօտուն, Արեւազալի արարողութեան
 աւարտին, իսկ Ուրբաթ օրերը երեկոյեան, Հսկումի արարողութեանէն ետք:
Խորհրդածութիւնները պիտի կատարուին հետեւեալ կարգով...

Զորեքշաբթի, 7 Մարտ
 Տ. Շահան Ծ. Վրդ. Սարգիսեան - Վարդան Արեւելցի

Ուրբաթ, 9 Մարտ
 Տ. Փառէն Վրդ. Վարդանեան - Յովհաննէս Երզնկացի (Պլուզ)

Զորեքշաբթի, 14 Մարտ
 Տ. Գրիգոր Վրդ. Զիֆթեան - Գրիգոր Տաթևացի

Ուրբաթ, 16 Մարտ
 Տ. Վրոյր Վրդ. Տեմիրեան - Յովհաննէս Որոտնեցի

Զորեքշաբթի, 21 Մարտ (Միջին)
 Տ. Մաշտոց Արդ. Զօպանեան - Բարսեղ Մաշկեւորեցի

Ուրբաթ, 23 Մարտ
 Տ. Մասիս Արդ. Զօպույեան - Գրիգոր Սկեւռացի

Զորեքշաբթի, 4 Ապրիլ
 Տ. Սիփան Արդ. Քեչեան - Վարդան Այգեկցի

Ուրբաթ, 6 Ապրիլ
 Տ. Վարագ Արդ. Թովալեան - Դաւիթ Քոթայրեցի

Միտով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու Մեծ
 Պահի հոգեպարար արարողութիւններուն և լսելու միաբան հայրերու
 խորհրդածութիւնները:

ԳԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
 ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ...
 ԱՐԵՒՍՏԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
 ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՈՒՒԲԵՆԵԱՆ]

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Է Ո Ր Գ Մ Ե Լ Ի Տ Ի Ն Ե Ց Ի

Գ Ր Ա Կ Ա Ն Մ Ր Ց Ա Ն Ա Կ

Գ.Մ.Գ. Մրցանակի Դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2001ի հա-
 մար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Գ.Մ.Գ. Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական որեւէ
 նոր, անտիպ կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր, առ ի գնա-
 հատում և հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասի-
 րական և Հայ Մշակոյթի այլ կալուածներուն վերաբերող գործերը, հայերէն
 կամ օտար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասած ըլլան ամե-
 նաուշը մինչեւ 31 Մայիս 2001:

Առաջուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած և երեք օրինակով:
 Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատա-
 րակութեան:

Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը
 կազմեն՝ Գերշ. Տ. Արտաւազդ Արք. Թրքոբեան, Գերշ. Տ. Զարեհ Արք. Ազ-
 նաւորեան, տեաք Լրաչ Տասնապետեան [ատենապետ], Պօղոս Սնապեան
 [ատենադպիր], Գէորգ Գամտահարեան, Տոքթ. Արմենակ Եղիայեան, Պեպօ
 Սիմոնեան:

Մ Ա Ն Օ Թ... Դատակազմին ղրկուած գործերը հեղինակին չեն վերա-
 դարձուիր:

Դատակազմին հասցէն...
 Armenian Catholicosate of Cilicia
 P.O. Box 70317
 Antilias - Lebanon
 E-Mail: cathcil@inco.com.lb
 Fax: +961- 4 - 419724

Գ Ի Ի Ա Ն Գ . Մ . Գ . Մ . Դ Ա Տ Ա Կ Ա Զ Մ Ի

REBUS № 2

Rebus թիւ 1-ին պատասխանն է՝ Պարոյր Սեւակ: Ճիշտ և առաջին պատասխանողները եղան Արփի և
 Թալին Քէլիչեան արուեստագէտ քոյրերը, որոնց կը շնորհուրենք: «Ն.»

«ԱՍՏՈՒԱԾ ԷԾԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ԱՆԱՐԳՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»
«ԱՍՏՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ՋԱՐԴՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

(ՋՈՒՊՈՒՆՏՐԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՆՂԷՍ
27 ՄԱՅԻՍ 1909 ԼՈՋԱՆ)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Ռուբեն Սեւակի Մայիս 1909-ին Ջուիցերիական թերթ մը քաղելով գրած այս տողերը, մանաւանդ այսօր, շատ աւելի կը պատշաճին Ջուիցերիական կառավարութեան ընթացքին:

Որովհետեւ, 13 Մարտ 2001-ի երեքշաբթի օրը, Ջուիցերիական խորհրդարանը, իր կառավարութեան թելադրութեամբ, 70-ի դէլ 73 ձայնով մերժեց հայկական ցեղասպանութեան ճանաչումը:

Այո... մանաւանդ այսօր, Ջուիցերիական կառավարութեան համար՝ ԱՍՏՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ ՍՏԵՂԾԱԾ Է, ՈՐ ԹՈՒՐԶԵՐԸ ԱՆՈՆՑ ՋԱՐԴԵՆ:

Այո... այսօր Ջուիցերիական կառավարութեան համար՝ միլիոնաւոր հայերուն ջարդովը, 5000 տարուան Ազգի մը, իր հայրենի հողերուն վրայ բնաջնջովը, բնաւ կարելութիւն չունի:

Որովհետեւ, Ջուիցերիական կառավարութեան համար, հայկական ցեղասպանութիւնը, սպանդանոցներուն մէջ ամէն օր մորթուող բիրաւոր ոչխարներուն և եզներուն նման, կարելութեան զուրկ եղելութիւն մըն է:

* * *

«Ջուիցերիական արդարութիւն», «Ջուիցերիական մարդասիրութիւն», «Ջուիցերիական բարձր քաղաքակրթութիւն» – բոլորն ալ պարապ և սուտ խօսքեր էին ուրեմն:

Մինչդեռ, նոյն Ջուիցերիան, ասկէ հարիւր տարիներ առաջ, ոչ միայն 1915-ի եղեռնի օրերուն, այլ դեռ 1896-ին՝ Համիտեան ջարդերու օրերուն, ուր կարմիր Սուլթան Ապտիւլ Համիտ 300,000-է աւելի հայեր սպաննելով հայկական ցեղասպանութեան «ճամբան» բացած էր, այո, այո սարսափելի օրերուն, Ջուիցերիացիները, Հայ Ազգին օգնութեան ձեռք երկարեցին:

Այդ տարիներուն երեքուկէս միլիոն հաշուուող Ջուիցերիոյ ժողովուրդէն գրեթէ հինգ հարիւր հազար քաղաքացիներ, աղերսագիր ստորագրեցին և դիմեցին իրենց պետութեան և պահանջեցին, որ փրկեն հայերը թուրքերուն վայրագութենէն:

ANTHONY KRAFT-BONNARD անունով Ջուիցերիացի պատուելին, այն տարիներուն, չարչարուող Հայ Ազգին «պաշտպան հրեշտակը» եղած է:

Այս մեծ հայասէր պատուելին, Ջուիցերիոյ մէջ, այդ տարիներուն հայերուն ի նպաստ կատարուած բոլոր աշխատանքներուն կազմակերպիչը, մղիչ ուժն էր:

Պատուելի Զրաֆֆ Պոննարտ, 1896-էն մինչև 1915 և մինչև իր կեանքին վերջը, գերմարդկային աշխատանք տարաւ, կարելի եղած բոլոր միջոցներով, ցեղասպանութենէն փրկելու համար Հայ ժողովուրդը:

Նկատելով, որ Ջուիցերիան չէզոք պետութիւն մըն էր, 1915-ին Ջուիցերիոյ «միսիոնարները», Անաթոլիոյ մէջ, ներկայ էին և անոնք տեսան հայերուն դէմ կատարուած ցեղասպանութեան ողբերգութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով: Այս միսիոնարները բազմահազար հայ որբեր փրկեցին ստոյգ մահէ:



Ժօզէֆ Զիսեատիս՝ բանաձեւին հեղինակը:

«ԱՍՏՈՒԱԾ ԷԾԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ԱՆԱՐԳՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»
«ԱՍՏՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ՋԱՐԴՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

(ՋՈՒՒԾԵՐԻԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
27 ՄԱՅԻՍ 1909 ԼՈՋԱՆ)

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ]

Եւ անոնց տեղեկագրութիւնները՝ 1915-ի հայկական ողբերգութեան ամենէն քստմնելի բարբարոսութիւններուն ստոյգ վկայութիւններն են:

Զրաֆթ Պոննարտ-ին ղեկավարութեամբ զուիցերիական կազմակերպութիւնը, 1918-էն ետքն ալ, իր կարելին ըրաւ, ցեղասպանութենէն ողջ մնացած հայ որբերը փրկելու համար:

Անոր Լեմանի լիճին շուրջ՝ BEGNINS-ի մէջ հայ որբերուն համար հիմնած որբանոցը, հարիւրաւոր հայ պատանիներու ապաստանարան եղած է:

Այս որբանոցին մէջ ուսանած հայ որբերէն մէկ քանին դե՛ռ կ'ապրին ժընեւի մէջ, և մենք անոնց հետ տեսնուելու և իրենց կեանքի շատ տխուր պատմութիւնը լսելու կարելիութիւնը ունեցանք:

Եւ Ջուիցերիոյ հայ համայնքը միշտ երախտագիտութեամբ կը յիշատակէ մեծ հայրենասէր այս պատուելիին կատարած անմոռանալի աշխատանքը և ծառայութիւնը Հայ որբերուն և, ընդհանուր առմամբ, Հայ Ազգին:

* * *

13 Մարտ 2001-ին զուիցերիական խորհրդարանը, Լուկանօ-ի մէջ կայացած նիստին, քննեց հայկական ցեղասպանութեան ճանաչումը առաջադրող բանաձեւը, որ ներկայացուած էր երեսփոխան (ծագումով Յոյն) JOSEPH ZISYADIS-ի կողմէ:

Բանակցութիւններուն մէջ ամենէն կարեւոր դերը կատարեց, Ջուիցերիոյ Արտաքին Գործերու Նախարար՝ JOSEF DEISS-ին ելոյթը:

Ասոր ըսածները, գրեթէ ամբողջութեամբ, Թուրքիոյ Ա.Գ. Նախարար հրեայ Իսմայիլ Ճեմին տեսակէտներուն կրկնութիւնն էին: Այս վերջինը, կանխատեսելով 13 Մարտ 2001-ին զուիցերիական խորհրդարանին կողմէ հայկական ցեղասպանութեան ճանաչման վտանգը, 25 Յունուար 2001-ին, Պերնի մէջ, տեսակցութիւն մը ունեցած էր Ջուիցերիոյ Ա.Գ. Նախարար Ժօզէֆ Տէիսին հետ: Եւ երկու Ա.Գ. Նախարարները, Պերնի մէջ, գործակցութեան համաձայնագիր մը ստորագրած էին:

Բնական է՝ այս համաձայնագրին առեւտրական գործակցութեան բնոյթին ետին թաքնուած էր, հայկական ցեղասպանութեան մերժումին խոստումը, տրուած Ջուիցերիոյ կառավարութեան կողմէ:

Եւ հրեայ Իսմայիլ Ճեմ, այս խոստումը առնելու համար, ով գիտէ առեւտրական հրապուրիչ ի՞նչ առաջարկներ, և նաև հրեական ի՞նչ սպառնալիքներ կատարած էր իր զուիցերիացի պաշտօնակիցին:

Եւ Ժ. Տէիս, այս համաձայնագրին համակերպելով, 13 Մարտ 2001-ին Ջուիցերիոյ խորհրդարանին մէջ սապէս արտայայտուեցաւ՝ «Պէտք է մերժել այս բանաձեւը: Պէտք չէ խանգարել մթնոլորտը: Հարցը բանակցութիւններով պէտք է լուծել:

Եւ այս հարցը յանձնել պէտք է միջազգային մասնագէտ պատմաբաններուն»:

1915-ի հայկական ցեղասպանութիւնէն 86 տարիներ յետոյ հայերը, թուրքերուն հետ բանակցելով, ի՞նչ պիտի շահին:

Հայերուն դիմաց, այսօր, զօրաւոր Թուրքիա մը կայ: Եւ այսօր հայերը ի՞նչ ուժ ունին իրենց ձեռքին, որ թուրքերուն ընդունիլ տան իրենց արդար պահանջները:

Թուրքերը, մինչեւ այսօր, հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանան: Եւ ընդհակառակը՝ կը պնդեն, թէ հայերը թուրքերը ջարդած են: Եւ Կարսի և Էրզրումի

«ԱՍՏՈՒԱԾ ԷԾԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ԱՆԱՐԳՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»
«ԱՍՏՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ՋԱՐԴՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

(ԶՈՒՒԾԵՐԻԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
27 ՄԱՅԻՍ 1909 ԼՈՋԱՆ)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

մէջ հայերուն կողմէ «սպաննուած» թուրքերուն յիշատակին համար, յուշարձաններ կը կանգնեցնեն:

Այս կացութեան մէջ, թուրքերուն հետ բանակցիլը, հայերուն համար կանխաւ ստորագրուած «մահավճիռ» մըն է:

Բայց ամենէն ցաւալին՝ Ջուիցերոյ Ա.Գ. Նախարարին հայկական ցե-

ղասպանութեան «հարցը» մասնագէտ պատասխաններուն յանձնելու առաջարկն է:

Ո՛վ անգութ և անխիղճ զուիցերիացի Նախարար՝ 86 տարիներ առաջ զուիցերիացի միսիոնարներուն տուած սարսափազդու տեղեկագիրները գնա՛յ ու կարդա՛յ ձեր արխիւներուն մէջ: Անոնք, անհերքելի վկայութիւններն են, հայկական ցեղասպանութեան:

Բայց, աւելորդ է, այս բաները ըսելը ձեզի:

Որովհետեւ, «Դրամ-Աստուած»ն է, արդարութեան վրայ միշտ իշխողը:

* * *

Այստեղ կ'ուզենք, «Դրամ-Աստուած»ին ներկայացուցած ուժին մասին, հետեւեալ տեղեկութիւնները տալ:

Ասկէ երեք տարիներ առաջ էր: «CONGRES JUIVE MONDIAL» սիոնիստական կազմակերպութիւնը, Ջուիցերիոյ պետութենէն պահանջեց, որ «գերմանացիներուն կողմէ սպաննուած հրեաներուն զուիցերիական դրամատուներուն մէջ մնացած աւանդ-դրամները իրենց վերադարձուին»:

Ջուիցերիական պետութիւնը, շատ ինքնավստահ ոճով մը, հրեաներուն սապէս պատասխանեց.

«Ջուիցերիական դրամատուներուն մէջ, Գերմանիա սպաննուած հրեաներէն մնացած որեւէ հաշիւ և դրամ գոյութիւն չունի:

1945-ին, պատերազմէն յետոյ, Ջուիցերիոյ պետութիւնը, սպաննուած հրեաներէն մնացած դրամները հրեական կազմակերպութիւններուն վերադարձուցած է: Ջուիցերիական պետութիւնը ուէ մէկուն պարտք չունի»:

Հրեաներուն կողմէ զուիցերիացիներուն տրուած պատասխանը շատ կարճ և կտրուկ եղաւ.

«Եթէ, մէկ ամսուան ընթացքին, Գերմանիոյ մէջ սպաննուած հրեաներուն զուիցերիական դրամատուներուն մէջ մնացած հաշիւներուն համար Նիւ Եորքի մէջ մեզի հետ բանակցութեան չնստիք, զուիցերիական դրամատուներուն Ամերիկայի մասնաճիւղներուն մէջ հաշիւ ունեցող հրեաները, իրենց դրամները պիտի քաշեն, և անկէ յետոյ, հրեաները, այլեւս զուիցերիական դրամատուներուն հետ պիտի չաշխատին»:

Այս սպառնալիքը բաւարար եղաւ, որ Ջուիցերիա, հրեաներուն առջև, ծունկի գայ:

Եւ զուիցերիական դրամատուներն ու հրեական «Գոնկրէ Ժուիֆ Մոնտիալ»ը, շաբաթ մը յետոյ, բանակցութեան նստան:

Եւ այս բանակցութեան արդիւնքը այն եղաւ, որ հրեաները, զուիցերիական դրամատուներէն տասը միլիար տոլար հատուցում առնելէ ետք, իրենց սպառնալիքներուն վերջ տուին:

* * *

«ԱՍՏՈՒԱԾ ԷԾԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ԱՆԱՐԳՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»
 «ԱՍՏՈՒԱԾ ՀԱՅԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ՋԱՐԴՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

(ՋՈՒԻԾԵՐԻԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
 27 ՄԱՅԻՍ 1909 ԼՈՋԱՆ)

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ

13 Մարտ 2001-ի Երեքշաբթի օրը, Ջուիցերիոյ խորհրդարանին մէջ, հայկական ցեղասպանութեան ճանաչման համար բանաձեւ ներկայացնողը զուիցերիացի երեսփոխան JOSEPH ZISYADIS -ն էր: Ո՞վ է Ջիսեատիս: Իսկական Յոյն մըն է: Եւ մեզի համար ամենէն հետաքրքրականը՝ Պոլիս ծնած է: Յետոյ, իբր ուսանող, Ջուիցերիա եկած է: Եւ ուսումը աւարտելէ յետոյ Պոլիս չէ վերադարձած. և Ջուիցերիա հաստատուած է վերջնականապէս: Եւ այսօր, զուիցերիական PARTIE POPULISTE VAUDOISE ձախակողմեան ժողովրդական կուսակցութեան երեսփոխանն է և Լոզան կը բնակի:

Բայց ժօզէֆ Ջիսեատիսը միշտ կը յայտարարէ որ ինք, իր քաղաքական համոզումներով, կոմունիստ է:

Եւ այս պոլսեցի յոյն-համայնավար երեսփոխանն է, որ հայերուն համար արդարութիւն պահանջելով, իր բանաձեւը ներկայացուց Ջուիցերիոյ խորհրդարանին ամպիոնէն:

Բացառիկ իրատեսութեամբ մը ան պատմեց հայկական եղեռնի ողբերգութիւնը և շատ տպաւորեց ներկայ երեսփոխանները: (Շարք՝ 12 11)

“TULUMBACI” YAHUDI ISMAIL CEM

TURK DEVLETININ YAHUDI DIS ISLERI BAKANINA BIR ÇOK LÂKAB VERMEK MUMKUN. FAKAT EN YAKISANI “TULUMBACI” NIÇIN MI ? ÇUNKU SON ZAMANLARDA EN MUHIM VAZIFESI DUNYADAKI ERMENI SOYKIRIMI ATESINI SONDURMEK.

ÇAT AMERIKADA. ÇAT IRANDA. SONRA ITALYADA. DAHA SONRA FRANSADA. VE EN SONRA DA ISVIÇREDE.

GEÇEN SENE EKIM AYINDA. AMAN AMERIKAN SENATOSU ERMENI SOYKIRIMINI KABUL EDICEK KORKUSUYLA AMERIKADAYDE.

ORDAKI YAHUDI SOYDASLARININ YARDIMI ILE ATESI SONDURMEYE ÇALISTI.

ÇOK ZOR OLDU. FAKAT SON SANIYEDE SEKSI MANKEN B. CLINTON SAYESINDE MUFAK OLDU. SONRA ATES ITALYAYA SIÇRADI. VER ELINI ITALYA. “FAKAT GEÇ KALDI TATAR AGASI” ATES HER TARAFI SARMISTI. VE TURK BASIN YAYGARA SİRKETİ ATES PÜSKÜRDÜ ITALYAYA KARSİ. NE TEHDİTLER NE KÜFÜRLER AYIP. AYIP.

FAKAT EN MÜHİMİ FRANSADAKI ERMENI SOYKIRIMI ATESİYDİ. ISMAIL CEM VE KUMPANYASI ÇOK CALISTI. ÇOK UGRASTI. FAKAT BOSUNA. ATES ÇOKTAN BACAYE SARMISTI. VE BİZ TURK BASIN VE T. V. MAFIASININ BU KADAR KOPURMESINI GORMEMİSTİK.

NE YALANLAR. NE İFTİRALAR. VE SOYLIYENLER KİM ? İSTANBULLU ERMENİ ESİRLER. “YOK CANIM. TÜRKLER’ ERMENİLERE BİR SEY YAPMAMIS”. “ERMENİLER’ KESMİS TÜRKLERİ”, HOPPALA ! KİM İNANIR BU KUYRUKLU YALANLARA.

PARIS MEBUSU DEVECİYANIN DEDİĞİ GİBİ “ZAVALLI İSTANBUL ERMENİLERİ”

TULUMBACI ISMAIL CEMİN EN SON MARİFETİ İSVİÇRE YANGINI. FAKAT. O’ BU SEFER İSİ SİKİ TUTTU. DAHA 25 OCAK 2001 DE BERN’ DE İSVİÇRE DIS İSLERİ BAKANİ JOSEF DEISS İLE ANLADI. NE ANLAŞMASI ? ANLAYIN İSTE. TÜRK ZENGİNLERİNİN İSVİÇREDE O KADAR PARASI VAR Kİ.

FAKAT. HER SEYE RAGMEN ISMAIL CEM YİNE KORKUYORDU. ÇUNKİ İSVİÇRE MEBUSU İSTANBULLU JOSEF ZISYADISIN SAGI SOLU BELLİ OLMAZDI. 13 MART 2001 DE LUGANODA AZ KALDI KIYAMET KOPUYORDU. KOPTU. KOPACAKTI. FAKAT KİL PAYI KURTULDU. 70’E KARSİ 73 OYLA.

TEBRIKLER SELANIKLI ISMAIL CEM.

FAKAT BUNUN REVANSI VAR. VE TULUMBACI ISMAIL CEM KORMAKTA HAKLISIN JOSEF ZISYADIS’ TEN. O ÇOK ATESLİ DELİKANLI. ONUN ATESİNİ SONDURMEK ÇOK ZOR.

Յ. Չ.

ՏԻԵԶԵՐԱԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱՀԱՄԱԼՍԱՐԱՆ
[RAM, RA, ABRAM, IBRAIM] ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔԸ
ՀԱՅ-ԱՐԻԱԿԱՆ [ARAM]-ԲԱՌՆ Է

ՄԿՐՏԻԶ ԱՍԼԱՆԵԱՆ

1.- Ըստ «Գիրք Ծննդոց»ի [AB-RAM]-ը հրեաներու նախահայրն է, իսկ նրա կինը [SA-RA]-ն է: [AB-RAM]-նախաբառը կազմուած է [AB] ([RAM]-բառերից, որ նշանակում է [AB]-հայր [RAM]-ը, որը յետագայում իրար միանալով տուած է [AB-RAM] մէկ բառաձեւը: Եւ այս [ABRAM]M բառը տրոհուելով ստեղծած է [ABRAAM, ABRAHAM, ԱՐՂԱՄ, ԱՐԽԱՀԱՄ, ՀԱՅՐ ԱՐՐԱՄ,]-անուանաձեւերու: Արաբերէնում տեսնում ենք [IB-RAIM, IBRAHIM] տարբերակները, իսկ Ռուսերէնում [IBRAGIM, ABRAM] բառատեսակները: Իսկ հայերը [ABRAM]-բառը մէկ բառ ընդունելով նրանից առաջ կցում են հայերէն [ՀԱՅՐ]-բառը չիմանալով, որ արդէն [AB]- նշանակում է հայր: Բնաձայնահունչ [AB, ABA, BABA, PAP, PAPA, ABI, PAPY, ABAS, PATRE, PATRIOT] հայր բառերը Արաբերէնում [IB, ABU, IBN, EBNY, ԸՐՆԻ] տեսակներու, որտեղ [AB]-հայրը վերածուում է նաեւ գաւալի [ԱՊ, ԱՓ, ԱՓՈ]-ի: Վրացերէն [DEDA-մայր, MAMA-հայր]: Ռուսերէն [BABUSHKA-տատիկ]: Զմոռանանք, որ [ABRAM]-ի հօր անունը [T-ARA] է, իսկ եղբոր անունը [ARAN]- ԱՐԱՆ է:

2.- [ABRAM]-բառից առաջացել է [EBREM, EBREYEM, EVREY] բառերը և որից [EBRAY] բառը, որը և հիմքն է [EBRAYE]- ԵՐՐԱՅԵՐԷՆ կոչուած լեզուի, որը և բնական է, [ABRAM]-անունից առաջանալու: [Տես հայոց ՀԱՅԿ-հայոց լեզուի ծագումը]: Ուրեմն ԵՐՐԱՅԵՐԷՆ լեզուի անունն ծագումը գալիս է [ABRAM]- անունից [ABRAYE-EBRAYE] ԵՐՐԱՅԵՐԷՆ:

3.- Տեսնենք, թէ [ARAM]-ը ինչպէս է անցնում [RAM]-ի, [RA]-ի, [ABRAM]-ի և սրանից առաջացող ուրիշ բառերու: [RAIS] -գլխաւոր, տէր, [RAISA]- տիրուհի [OMAR, AMAR, MAR[MARHABA], MARON, MARUN, MARIA, MARTIR, RABY, RABUN, RABIE, BRAHMA, ARUS, RAMAZAN, RAMADINA, SARA, RATAN, RASHID, RAFIR, RAFFY, RAFAEL, RABINAD, RAQEL]- այս վերոյիշուած բառերու մէջ ԱՌԱՆՑՔԸ [RA, RAM, AR, MAR] բառահիմքերն են, որոնք ստացել են [MAR] -տուրք, [RABIN-RABIE]-տէր, գարուն, արեւ, [MAR-MABA]- քարեւ, Սուրբ, Աստուած, իմաստով: [RAFY, RAFYK, RAFAEL] -քարճր իմաստով: [ASH-RA-FIE]- քարճունք, քարճր: [RABINAT-DACOR] -ՌԱՐԻՆ- հայր ձեւը Հնդկաստանում: [SA-RA, S-ARA] երբայերէն [ՇԱՌԱ]- իշխանուհի, [ՇԱՌԻԷ]- արեւելք: Տես, [IZ-RA-EL], ՇԱՌՈՄ, ԻՇԱՌԱ, RAQEL, PARAQ] և շատ ու շատ [RAM, ARAM, RA] նոր բառաշինութիւններ: Ասեմ, որ [ARAM]-ը հակառակ կողմից ընթերցում է [MARA] որ սեմական լեզուին բնորոշ է գրութեամբ:

4.- [ABRAM]-բառը ինձ օգնեց յայտնաբերելու եգիպտական [BI-RA-MIDA]-բառի Ուխտակամ, ամբողջական ԱնՈՒԱՆԱԶԵԻԸ, որ այս է [ABI-ARAMI-DA], այսինքն [ABI]-հայր [ARAMI]- ԱՐԱՄԻ- [DA]-մահ, գերեզման, դամբարան, յուշար-



ձան: Եւ [BIRAMID]– քառաձեւը ստացել է ABI-ARAMID–քառից երկու կոշտ [B] և [R]– հնչումներու պատճառաւ, որովհետեւ երկու փափկահունչ [A]– հնչումները լեզուանոշողութիւնից դուրս են նետուում մայր քառից և ստացուում է [BI-RAMID-BIRAMIDA]– քառաձեւերը: Ճշմարտութիւնը այն է, որ ԹԱՂՈՒԱԾ ԱՆՁԻ ԱՆՈՒՆՈՎ է ԿՈՉԻՈՒՄ [BIRAMID]– ԲՈՒՐԳ անուանումը, որովհետեւ նրա մէջ քաղուած է ՀԱՅՐ–ԱՐԱՄ–ը, ՈՐԸ ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ՄՕՏ ՈՒՆԷՐ ԱՐԵՒԱՆՈՒՆ ԳԱՂԱՓԱՐ, ԻՆՉՊԷՍ [ARAM-SEZ, ARAM, RAM-SEZ]: Նախքան քաղուիլը եղած է [ABI ARAM]– ՀԱՅՐ ԱՐԱՄ–ը, իսկ [DI], IDA, DA.] –մահ քաղը ապացուցում է որ [BIRAMIDA]– քառագեղջ ձեւը մեզ հասած է ԼԵՉՈՒԱԺԱՄԱՆԱԿԱՏԱՐԱԾ-ՔԱՅԻՆ ՄԱՇՈՒԱԾ ԲԱՌԱՏԵՍ-ՔՈՎ [BIRAMID]:

5.– [ARAM]–քաղը չէր կարող եզրափակուիլ Հայաստան գալ և ստեղծել [ARAMAST, AHURAMAZT, ARAMANIA] անունները: Եւ շատ կարեւոր է գիտակցել, որ եզրափակումները չունեն ՏԻԵՉԵՐԱԻՄԱՍՏԱՆՇԱՆԱԳՐԵՐ, ՈՐՈՎՎԵՏԵԻ ՆՐԱՆՑ ՀՆԱԳՈՅՆ ԼԵՉՈՒԱՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԿԵՐԱԽՈՐՀՐԴԱՆԿԱՐԱՅԻՆ ԷՐ: Եզրափակումների նախաՀԱՅՐԸ [ARAM, ABIARAM]–ը իր ներկայութեամբ ապացուցում է ՀԱՅ–ԱՐԻԱԿԱՆ ԱՐԱՄԱՍՏ, ԱՐԱՄԱՉՏ, ԱՐԱՄԱՇՏ շրջանից ԱՐԵՒԸ, ՈՐՊԷՍ ԱՍՏՈՒԱԾ–ԵՐՐՈՐԳ ՄՏ-ՔԱՏԵՍԱԿԻ ՎԵՐԱՅԱՊԱՇՏ ՁԵՒԻՑ [ARAM]: Սա նաեւ ապացոյց է եզրափակուի ԱՐԵՒԱԿՐՕՆ-ՔԻ սկիզբը, իսկ միւս կողմից տեղեկացում է մեզ, որ ՀԱՅ–ԱՐԻԱԿԱՆ ՏԻԵՉԵՐԱԻՄԱՍՏԱՆՇԱՆԱԳՐԵՐԸ վաղուց ստեղծուած էին և [ԱՐԱՄ] նշանակում է ԱՐ–արեւ, Ա–արեւ, Մ–մշտնջենական շրջանից. ԱՍՏ–Ա–արեւը, Ս–սահմանում է, Տ–տիեզերքը շրջանը:

6.– Բոլորիս ոչ հաւատալի այս ճշմարիտ իրողութիւնները ԳԱԼԻՍ ԵՆ ՓԱՍՏԵԼՈՒ, ՈՐ ԿԵՌԽԱՉԱԾԻՆ ՀԱՅ–ԱՐԻԱԿԱՆ ՏԻԵՉԵՐԱԻՄԱՍՏԱՆՇԱՆԱԳՐԵՐ ՇԱՏ ԲԱՌԵՐԻՑ Է ԿԱԶՄՈՒԱԾ ՀՆԴԵՒՐՈԼԵՉՈՒԻ ԴԱՍԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ, ՈՐ ՆԱԽՈՐԴ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՉ, ՓԱՍՏԱԾ ԵՄ: ԶԿԱՅ ԲԱՆԱՍԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԱՌԱՆՑ ՀԱՅ–ԱՐԻԱԿԱՆ ՏԻԵՉԵՐԱԻՄԱՍՏԱՆՇԱՆԱԳՐԱԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԳԻՏԱՀՆՉՈՂՈՒԹԵԱՆ ուսմունքի:

«ԱՍՏՈՒԱԾ ԷՇԵՐԸ ՍՏԵՂԾԵՑ ԱՆԱՐԳՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ»... (Շար. էջ 2-

Եւ վերջաւորութեան՝ երեսփոխաններէն 70 հոգի, ծեղասպանութեան ճանաչման ի նպաստ քուէարկեցին:

Ի նպաստ քուէարկողները Սոցիալիստներն էին, մեծամասնութեամբ:

«Կանաճ»ներուն և "ECOLOGISTE"ներուն երեսփոխաններն ալ ի նպաստ քուէարկեցին:

Ի նպաստ քուէ տուին նաեւ, "Democrate Chretien" կուսակցութենէն շատ մը երեսփոխաններ:

Եւ ամենէն հետաքրքրականը՝ ծեղասպանութեան ճանաչման դէմ քուէ տրուող 73 երեսփոխաններէն ոչ մէկը, խորհրդարանին մէջ խօսք առնելով, թուրքերուն ի նպաստ ելոյթ չէ ունեցած:

Նոյնիսկ, հայկական ցեղասպանութեան ճանաչման դէմ քուէարկող երեսփոխաններէն Hans Fehr [UDC-ZH] սապէս արտայայտուած է՝

«ԱՆԿԱՐԵԼԻ Է ՈՒՐԱՆԱԼ՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»Ը»:

Այս եղելութիւնները և արտայայտութիւնները ահռելի ջղայնացուցած են թուրքերը:

* * *

Եւ միայն 3 քուէներու տարբերութեամբ չանցաւ բանաձեւը: Եւ այս ալ, մեծ յաջողութիւն էր ժողէֆ Զիսեատիսին համար:

Handwritten signature

«ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ»

Մ Ե Ծ Պ Ա Հ Ք Ի Հ Ո Գ Ե Ի Ո Ր
Խ Ո Ր Հ Ր Դ Ա Ծ Ո Ւ Թ Ե Ա Ն Շ Ա Ր Ք
(Թ Ի Ի 3)
Ա Ն Թ Ի Լ Ի Ա Ս Ի Մ Է Ջ

Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տա-
ճարին մէջ տեղի պիտի ունենան Արեւազալի և Հսկումի ժամերգութիւններ,
ԶՈՐԵՔՇԱԲԹԻ և ՈՒՐԲԱԹ օրերը: Մեծ Պահի շրջանին տեղի պիտի ունենայ
«Մեր Հայրերը կը խօսին» հոգեւոր խորհրդածութեան երրորդ շարքը՝ 1700
ամեակին առթիւ:

Արեւազալի ժամերգութիւնը պիտի սկսի առաւօտեան ժամը 7:00-ին: Հսկումի
ժամերգութիւնը երեկոյեան ժամը 5:00-ին: Հոգեւոր խորհրդածութիւնները տեղի
պիտի ունենան Զորեքշաբթի օրերը առաւօտուն, Արեւազալի արարողութեան
աւարտին, իսկ Ուրբաթ օրերը երեկոյեան, Հսկումի արարողութեան ետ:

Խորհրդածութիւնները պիտի կատարուին հետեւեալ կարգով.---

Զորեքշաբթի, 21 Մարտ (Միջին)

Տ. Մաշտոց Արղ. Զօպանեան - Բարսեղ Մաշկեւորեցի

Ուրբաթ, 23 Մարտ

Տ. Մասիս Արղ. Զօպույեան - Գրիգոր Սկեւոացի

Զորեքշաբթի, 4 Ապրիլ

Տ. Սիփան Արղ. Քեչեճեան - Վարդան Այգեկցի

Ուրբաթ, 6 Ապրիլ

Տ. Վարազ Արղ. Թոփալեան - Դաւիթ Քոբայրեցի

*Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը, ներկայ գտնուելու Մեծ
Պահի հոգեպարար արարողութիւններուն և լսելու միաբան հայրերու
խորհրդածութիւնները:*

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

**Գ Է Ո Ր Գ Մ Ե Լ Ի Տ Ի Ն Ե Ց Ի
Գ Ր Ա Կ Ա Ն Մ Ր Ց Ա Ն Ա Կ**

Գ.Մ.Գ. Մրցանակի Դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2001ի հա- մար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Գ.Մ.Գ. Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական որեւէ նոր, անտիպ կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր, առ ի գնա- հատում և հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասի- րական և Հայ Մշակոյթի այլ կալուածներուն վերաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասած ըլլան ամե- նաուշը մինչեւ 31 Մայիս 2001:

Առաջուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած և երեք օրինակով:

Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատա- րակութեամբ:

Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը կազմեն՝ Գերշ. Տ. Արտաւազդ Արք. Թրքոնեան, Գերշ. Տ. Զարեհ Արք. Ազ- նաւորեան, տեարք Հրաչ Տասնապետեան [ատենապետ], Պօղոս Սնապեան [ատենադպիր], Գէորգ Գանտահարեան, Տոբ. Արմենակ Եղիայեան, Պեպօ Սիմոնեան:

Ծ Ա Ն Օ Թ ... Դատակազմին ղրկուած գործերը հեղինակին չեն վերա- դարձուիր:

Դատակազմին հասցէն...
Armenian Catholicosate of Cilicia
P.O. Box 70317
Antilias - Lebanon
E-Mail: cathcil@inco.com.lb
Fax: +961-4 - 419724

Դ Ի Ի Ա Ն Գ . Մ . Գ . Մ . Դ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի

Որովհետեւ Ջուլիցերիոյ թրքական դեսպանը անձամբ, զուլիցերիացի երեսփո- խաններուն վրայ, ամէն տեսակի խոստումներով և նաեւ սպառնալիքներով, ճնշում բանեցուցած էր:

Այս եղելութիւնները Սոցիալիստ երեսփոխանները խորհրդարանին ամպիո- նէն բացայայտեցին և բողոքեցին թրքական մենատիրական և բիրտ միջամտու- թիւններուն դէմ:

Թուրքերը ժօզէֆ Ջիսեստիսը, իբր նախկին Պոլսեցի. «դաւաճան» հռչակե- ր են Թուրքիոյ մէջ: Բայց ան, թրքական այս կարգի սպառնալիքներէն վախցողը չէ: Եւ քուէարկութենէն յետոյ, սա յայտարարութիւնը կը կատարէ. «ԱՅՍ ԱՌԱ- ՋԻՆ ՓՈՐՉՆ Է: ԵՒ ՎԱՂԸ. ՎՍՏԱԸ ԵՄ. ՈՐ ՊԻՏԻ ՅԱՋՈՂԻՆԷ: ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ԱՆՊԱՅՄԱՆ ՊԻՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԷ»:

Մենք սրտանց կը շնորհատրեցք և մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք նախկին Պոլսեցի – Յոյն և ներկայիս Ջուլիցերիացի քաջարի երես- փոխանին:

Եւ վստահ ենք, որ բոլոր հայերն և մանաւանդ Ջուլիցերիոյ հայ համայնքն ալ, երախտապարտ են իրեն:

Շա՛տ ապրի ժօզէֆ Ջիսեստիսը. և շա՛տ ապրի Յոյն և Հայ եղբայրութիւնը:

«Լ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՆԵԼԻՔ ՉՈՒՆԻ ԱՅԼԵԻՍ»

[ԲՈՒԿՐԷՇՏ -ԱՊՐԻԼ- 1923 ՅՈՎԸ. ԶԱԶԱԶՆՈՒՆԻ]

ՉՈՆ՝ ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԴՈԿՏ. ՎԼԱՏԻՄԻՐ ԳԵՏՐՈՍԵԱՆԻՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

[ԿՐԷԺ ՈՌԻՔԷՆԵԱՆ]

Հայաստանի 1918-1920-ի Ա. Հանրապետության կառավարության Կարգապետը եղած Յովհաննէս Զազազնունիին կողմէ, Ապրիլ 1923-ին Լ.Յ.Դ.ի արտասահմանեան մարմիններու խորհրդաժողովին ներկայացուած «Լ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» վերտառութեամբ զեկուցագիրը, մենք կը հաւատանք, որ մինչեւ այսօր իր այժմէութիւնը չէ կորսնցուցած: Գուցէ անելի կարելորութիւն ստացած է: Յովհ. Զազազնունիին այս զեկուցագիրը Հայաստանի հայրենասէր ղեկավարներուն կողմէ, իբր անփոխարինելի «Աւետարան» ամէն ատեն ու ամէն տեղ ընթերցուիլը պայման է, որ անոնք չսայթաքին կուսակցութեան մը մեծամիտ խոստումներէն:

Բայց, հայրենասիրական ոգին իր մէջ վառ պահած Յ. Զազազնունիին կը թուի, թէ պէտք եղած ձեւով չէր ճանչցած այս կազմակերպութիւնը: Անելի ճիշդ՝ ան չէր կրցած հասկնալ թէ՛ Արեւմտեան պետութիւնները, իբր ռիսկիմ թշնամի Ռուս ազգին, Լ.Յ.Դ.ի ձեռամբ դեռ շատ ու շատ բաներ ունէին գործադրել տալիք Ռուսերուն դէմ:

Իրականութեան մէջ, Յովհ. Զազազնունիին իրաւունք ունէր «Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» ըսելու:

Հայ ազգը գողգոթաներ առաջնորդած կուսակցութիւն մը, այլեւս իրաւունք չունէր գոյատեւելու:

Եթէ անոր ղեկավարները 1920-էն յետոյ, Յ. Զազազնունիին նման իրենց ներսիդին հայրենասիրական փոքր «շունչ» մը պահած ըլլային, կամ ինքնահաշուեյարդար կը կատարէին և կամ, եթէ այդ քաջութիւնը չունէին, կը հեռանային քաղաքական կեանքէն, որ իրենց «մեղքերը» քաւեն:

Պատմութեան մէջ, ուրիշ պետութիւններու մօտ, հայրենիքը կորուստի սեմին բերած այս կազմակերպութեան նման դեռ վերապրող ուրիշ կուսակցութիւն մը գոյութիւն չունի և չի կրնար ունենալ:

Որովհետեւ ուրիշ պետութիւններու մօտ, հայրենիքը կործանման վտանգի մատնող կուսակցութիւնները և ղեկավարները կը պատժուին:

Օրինակը մեր մօտակայ, բարեկամ և կամ թշնամի պետութիւններէն առնենք:

1923-ին Յունաստանը, Անաթոլիոյ ողբերգութեան առաջնորդող Յոյն ղեկավարները կախաղան հանուեցան:

1920-ին, Օսմանեան Կայսրութիւնը կործանող "İttihat Ve Terakki" կուսակցութիւնը և ղեկավարները պատժուեցան:

Լ.Յ.Դ.ն, այս մարզին մէջ, բացառութիւն կը կազմէ:

Եւ ան, մինչեւ այսօր նոյն «պատճէշ»ին վրայ է, և իր սադրանքները կը շարունակէ, շնորհիւ արեւմտեան պետութիւններուն, և մանաւանդ՝ հայ ազգին տխմարութեան պատճառաւ:



«Լ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՆԵԼԻՔ
ՉՈՒՆԻ ԱՅԼԵԻՍ»

[ԲՈՒԿՐԷՇՏ - ԱՊՐԻԼ - 1923 ՅՈՎԸ. ԶԱՋԱԶՆՈՒՆԻ]

ԶՕՆ՝ ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԴՈԿՏ. ՎԼԱՏԻՄԻՐ ԳԵՏՐՈՍԵԱՆԻՆ

ՅՈՎԸԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ՎՐԷԺ ՈՌՈՒԲԷՆԵԱՆ]

* * *

Եթե ուշադրութիւն ըրած էք, նկատած պիտի ըլլաք, որ այս կուսակցութեան քաղաքական ուղեգիծը զինք «հովանաւորող» արեւմտեան պետութիւններուն քաղաքականութեան զուգահեռ ընթացած է միշտ:

1918-էն մինչեւ 1940-ները՝ ֆրանսական և անգլիական «հովանաւորող» ներուն ծիրին մէջն էին:

1941-ին, Հիթլերական Գերմանիոյ կողմէ Սովետական Միութեան վրայ սկսած յարձակումով, «երազներ» տեսնել սկսան:

Եւ ուղեգիծ փոխելով յարեցան Նացի քաղաքականութեան:

Բայց Ստալինի առաջնորդութեամբ Ս. Միութիւնը յաջողեցաւ ետ մղել գերմանական յառաջխաղացումը և 1945-ին խորտակեց Հիթլերի Գերմանիան:

Այդ տարիներուն Լ.Յ.Դ. շփոթութեան մէջ էին: Ինչ ընելիքնին չէին գիտեր:

Նոյնիսկ 1945-ներուն շրջան մը, Սովետական Հայաստանին համար՝ «մեր հայրենիքը» ըսելու չափ «գոյն» փոխեցին: Բայց այս շփոթութեան շրջանը շատ շուտ անցաւ:

1946-թ.ներէն սկսեալ Նախ. Թրումանին շղթայազերծած «Պաղ պատերազմ»ը այս շփոթութեան վերջ տուաւ:

Եւ կուսակցութիւնը, 1946-էն յետոյ, կրկին 1918-1920-ի Հայաստանի Ա. հանրապետութեան կառավարութեան հակասովետ քաղաքականութեան վերադարձաւ:

Նայեցէք, այդ տարիներուն հրատարակուած Լ.Յ.Դ.ի մամուլի էջերուն: Արեւմտեան պետութիւններուն հակասովետ քաղաքականութիւնը կը փայլի անոնց մէջ, իր բոլոր երանգներով:

Արեւմտեան պետութիւնները, որոշ ռազմավարութեամբ, երբեմն մեղմացուցած և կամ սաստկացուցած են իրենց հակասովետ քաղաքականութիւնը - կուսակցութեան ուղեգիծն ալ, մեծ արագութեամբ, յարմարած է այս փոփոխութեան:

Ես ի՞նչ եմ, կամ ո՞վ,

Եթէ չունենամ

Մարդկանց օգնելու բարի

ցանկութիւն:

Եթէ չունենամ

Մարդկաց օգնելու առաքելութիւն,

Կը դառնամ ոչինչ,

Կը դառամ փոշի,

Մի քարի կտոր, անպէտքացած իր,

Հողի մի բեկոր...

Սա Ներսէս Մեսրոպեան բանաստեղծի ու մարդու դաւանանքն է, մի ստեղծագործող, որը բանաստեղծ է ծնուել, բայց և անյաակնոտ է: Ես սիրում ես նրա պոեզիան, որովհետեւ ծնուածդ օրից հասկացել ես, որ բարին միշտ ճշմարիտ է, մինչդեռ չարը՝ յաակնոտ, թէեւ մարդակերպ սաստանան շատ յաճախ հակառակն է ուզում ապացուցել:

Յարգարժան Ներսէս Տ. Մեսրոպեան: Սովորաբար գրքի աշխարհ գալուց

ԻՐԱՆԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ՝
ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

որոշ ժամանակ անց, երբ թու՛մ է, թէ դրան բաականաչափ ժամանակ տրամադրելն, արդէն ձանձրալի է դառնում, հեղինակն առժամանակ մի կողմ է դնում այն, որպէսզի մենութեան ու անձկութեան պահերին նորից ձեռքն առնի: Ես չգիտեմ, թէ որքան յաճախ էք դուք անդրադառնում տարիներ առաջ լոյս տեսած ձեր գրքերին, հենց այնպէս թերթատում դրանց էջերը, բայց մի բան շատ կ'ուզէի իմանալ. ինչ զգացումներ են համակում ձեզ, երբ այսօր վերընթերցում էք 1981 թ. հրատարակած ձեր «Երեսնեան գիշերներ» ժողովածուն: Ինձ վրայ այդ բարալիկ ժողովածուն ցնցող էֆեկտ [շեշտում եմ էֆեկտ բառը] ունեցաւ: Բայց ես յատկապէս ձեզ, հայ բանաստեղծիդ եմ ցանկանում հարցնել, թէ ինչ կ'զգայիք այս պահին, եթէ մէկը ձեզ համար այսպիսի տողեր կարդար.

*Ձեմ ուզում թողնել երկիրն իմ հպարտ,
Այդ ո՞ր զաւակը կամքով ու սրտանց
Կը թողնի մօրը քաղցր ու հարազատ:
Բայց ես թողնում եմ լալով, խնդալով,
Թողնում՝ ակամայ:
Հալիս եմ քեզնից պոկուելու համար,
Խնդում քանի որ դու էլ ես խնդում,
Ու աչքերիս մէջ էլ արցունք չկայ:
Խնդում, քանի որ կեանքը համակ
Դարձել է խաղաղ, զուարթ, կենսուրախ
Մի համանուագ...*

Ակամայից դուրս յորդել ցանկացող արցունքների հետ, առաջին հերթին ինձ համակեց... ցափ, ափսոսանքի ու անչափ հարազատ մէկին կորցրած լինելու խառն զգացումը: Ես, որ ոտքից գլուխ հայաստանցի եմ և հպարտ, որ գիտակցական կեանքիս գրեթէ կէսն այնտեղ

եմ ապրել, Հայաստանը չեմ զգացել այնպէս խորը, ինչպէս դուք էք զգացել ու սիրել ութսունական թուականներին գրած ձեր բանաստեղծութիւններում.

*Հայաստա՛ն,
Դու ակունք իմ երգի
Դու արբունք իմ կեանքի
Ես քեզ միշտ
Հոգուս պէս եմ սիրել,
Իսկ թէ որ չլինէր Արարատը
Ու կապոյտ, ջիւղ Սեւան,
Ես ինչպէ՛ս կ'երգէի
Հայաստան.
Դու սկիզբ իմ կեանքի,
Ու վերջին վերջակէտ
Իմ երգի:*

Հենց այդ մասին էի ուզում հարցնել, այսօր վտանգուած է ձեր «հոգու չափ սիրելի Հայաստանի» ճակատագիրը, ի՞նչ էք անելու դուք, ինչպէ՞ս էք մխիթարելու ձեր վիրաւոր հարազատին: Այսօր, առաւել քան երբեւէ մեր պաշտելի Հայաստանը բոլորիս օգնութեան կարիքն ունի և ես հաւատացած եմ, որ դուք, ինչպէս Հայաստան աշխարհի ծաղկուն օրերին նրա գովքն էիք անում, այսօր էլ, երբ նա բզբտուած, դեռ անզօր է, միւս ազնիւ ստեղծագործողների նման ձեր գրիչը ի սպաս կը դնէք նրան սփոփելու, յուսավառելու, իսկ նրա զաւակներին՝ ապագային հանդէպ հաւատներշնչելու ազնիւ գործին, քանզի այսօր Հայաստանը յատկապէս ձեր նման բարի մարդու և հայրենասէր ստեղծագործողի կարիքն է զգում: Ուրեմն, թող Աստուած զօրավիգ լինի Ձեզ՝ ձեր ստեղծագործական գալիք ճանապարհին:

Լոս Անջելես ՍԵՐԺ ՍԻՄՈՆԵԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԸ ԿԱՐ... ԲԱՐԳԱԻԱԾ..... (Շար. էջ 2-էն)

Անկարելի է, այս մէկին հաւատալը, բայց... այսպէս եղաւ:

Եւ ամերիկացիներու դրամով սնուող բոլոր մակաբոյծները (ներառեալ՝ հայութեան մէջ գտնուող ծանօթ հատուածը) զրպարտութեան համազարկ բացին Սովետ Միութեան դէմ:

Եւ մարդկութեան դարերու ընթացքին երազած հաւասարութեան բարձր "Ideal"ները 1991-ին, Ս. Միութեան փլուզումով՝ անէացան:

Միոնիստ ամերիկացիներուն Սովետ վարչաձեւին դէմ կատարած զրպարտիչ քարոզչութեան սուտ ըլլալը ապացուցանելու համար, միայն սա փաստը նշեց.

Ս. Միութեան փլուզումէն յետոյ, Ռուսիոյ և ասոր դրացի գրեթէ բոլոր երկիրներուն, ներառեալ՝ Լեհաստանի մէջ կատարուած ընտրութիւններուն, նախկին համայնավար կուսակցութիւնները շահեցան [ոմանք տարբեր անուններու տակ]: Նոյնիսկ, դեռ մինչև այսօր, Ռուսիոյ մէջ, համայնավար կուսակցութիւնը մեծամասնութիւն կը կազմէ:

Հայաստանը, այս մարզին մէջ, բացառութիւն կը մնայ:

Իրականութիւնը այն է, որ Հայաստանի մէջ անգամ, այս կուսակցութիւնը իր տարբեր թելերով շահած էր ընտրութիւնները:

Բայց երկրին Արեւմտեան պետութիւններուն գործակալները դարձած որոշ իշխանաւորներ՝ փոխեցին ընտրութեանց արդիւնքները:

* * *

Այսօր, Աշխարհի իշխանութիւնը, մեծ մասամբ, կեդրոնացած է ձեռքին Ամերիկացիներուն, որոնք իրենց կամքը կը պարտադրեն աշխարհի բոլոր ժողովուրդներուն:

«Նոր Գաղութատէրները» իրենց ունեցած դրամական մեծ կարելիութիւններով կը շարունակեն, օրէ օր, շատ աւելի արդիական զէնքեր պատրաստել:

Եւ այս զէնքերուն զօրութեամբ, ամէն օր քիչ մ'աւելի, Աշխարհի հեռաւորագոյն անկիւններն անգամ, Ա.Մ.Ն.ի հակակշռին ենթարկուած են:

Եւ անոնք, իրենց կղզիացած Ամերիկեան հողամասէն, առանց հոս ու հոն զօրք ուղարկելու, կը ղեկավարեն բոլոր զինուորական գործողութիւնները:

Եւ ամենէն ցաւալին այն է, որ Ամերիկացիները, Աշխարհի վրայ իրենց տիրապետութիւնը տեսականացնելու համար, ամենէն անմարդկային և անխիղճ միջոցներուն կը դիմեն:

Այսօր, Ամերիկացիները իրենց զինուորական գերիշխանութեան միացուցած են Անգլիացիներուն բարբարոս-նազմավարութիւնը՝ «Բաժնէ, որ իշխես»:

Անոնք, դեռ երէկ, յաջողեցան Ս. Միութիւնը կործանել:

Այսօր, կը քանդեն Եուկոսլաւիան: Իսկ Ռուսիոյ կործանումը՝ թուրքերուն և գերմանացիներուն յանձնած են:

Ամերիկացիները, հիմա կը պատրաստուին, Չինաստանը քանդելու: Այս պատճառաւ՝ Թայվան կղզին զինեցին: (Վերջին րոպէի լուրն է)

Ամերիկացիները Ճաբոնիան զինելու կը պատրաստուին: Անոնք և իրենց «դաշնակիցները», Ճաբոնին արգիլած էին զինուորական ուժ ունենալ:

Այսօր Ճաբոնին զինուելու իրաւունք տուին: Որո՞ւ դէմ: Բնական է՝ Չինաստանի դէմ: Ամերիկացիները Ինտոնէզիոյ մէջ իսլամները դրդելով, ասկէ առաջ ըրածնուն մնան, համայնավարները մաքրագործել սկսան:

Ամերիկացիներուն 1945-էն ի վեր շարունակուող այս վայրագութիւնները մինչև ե՞րբ պիտի տեսնեն:

Մինչեւ որ... աշխարհի ժողովուրդները, այս իրականութիւնները տեսնելով, ինքնագիտակցութեան գան:

Այս հարցի մէջ, իսլամ ժողովուրդները, պատասխանատուութեան մեծ բաժին մը ունին:

Ամերիկացիները, իրենց կատարած սադրաքներով, իսլամ ժողովուրդները ամենայնտամնաց և անմարդկային ապրելակերպի կը մղեն, որ անոնք միշտ ստրուկ, ենթակայ մնան:

Ե՞րբ կրնան արթննալ իսլամ ժողովուրդները՝ երբ որ ABDEL NASSER-ի և HAFEZ EL ASSAD-ի մնան լուսամիտ ղեկավարներ ունենան:

**ՈՎՔԵՐ ԵՆ ԱՅՍ ՔԱՅՔԱՅՄԱՆ
«ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ»
ԲՈԼՈՐՍ ԱԼ ՅԱՆՑԱԻՈՐ ԵՆՔ**

**ՀԱՐԻԻՐՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ,
«ԾՈՎԷ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ» ԷՆ
ԻՆՉՊԷՍ ԱՅՍՕՐՈՒԱՆ «ԱԻԱՏԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ», ՀՈԳՈՒՈՎ ԵՒ ՄԱՐՄՆՈՎ ԳՐԵԹԷ ՓՃԱՑԱԾ
ՎԻՃԱԿԻՆ ՀԱՍԱՆՔ**

**ՈՐՈՎՀԵՏԵԻ՝
«ՂԵԿԻՆ ԳԼՈՒԽԸ ԿԸ ՆՍՏԵԾՆԵՆՔ ՄԵՐ Է՛Ն ԱՄՏԱԳԻՆ,
Է՛Ն ԱՅԼԱՍՄԵՐԱԾ, Է՛Ն ԱՆՊԷՏ ԾՆՈՒՆԴՆԵՐԸ»
1911-ՈՌՈՒԲԷՆ ՍԵՌԱԿ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ՎՐԷԺ ՈՌՈՒԲԷՆԵԱՆ]**

1985-թ. ներքին ի վեր, մեր գրութիւններուն հետեւողները նկատած են թերեւս, որ անոնց մէջ, Հայաստանի այսօրուան վիճակին ենթարկուելուն առաջնակարգ պատասխանատուները (շատերուն թըշնամութիւնը և հակակրանքը շահելու գնով) մատնանշած ենք:

1.- Առաջին պատասխանատուն՝ 1453-թ. ներուն հիմնուած Պոլսոյ «Հայոց Պատրիարքութիւն»ն է, որ հայերը հեռացուց Հայաստանի իր արմատներէ:

2.- Երկրորդ պատասխանատուն՝ հայկական կրօնական միասնականութիւնը պառակտող Մխիթար Սեբաստացիին «Կաթողիկէ» շարժումը:

3.- Երրորդ պատասխանատուն՝ 1890-ին հիմնուած Հ.Յ.Դ. կուսակցութիւնը որուն շատ մը ղեկավարները, սկսած 1905-թ. ներէն և մանաւանդ՝ «Պաղ պատերազմ»| տարիներուն, արեւմտեան պետութիւններուն գործակատարները եղած են:

Մեր խոր համոզումով, այս երեքը հայ ազգին բոլոր դժբախտութիւններուն մէջ մեծ պատասխանատուութիւն ունին, և Հայաստանի մէջ կատարուած և մինչեւ հիմա ալ շարունակուող ողբերգութիւնները, մեծ մասամբ, այս երրորդութեան գործած սխալներուն հետեւանքներն են:

* * *

Մեծապատիւ ազգասէր Դաշնակցական ղեկավարները այսօր կ'ընդվզին և կը բողբեն, երբ Հայաստանի պետութեան գիտակցութեամբ և համամտութեամբ, Լեւոն Տէր Պետրոսեանի գործընկերները եղող նախկին պետական հայ պաշտօնեաներ, Թուրք ցեղասպան պետութեան անպաշտօն ներկայացուցիչներուն հետ հաշտութեան բանակցութիւններ կը կատարեն:

Հայաստանի պետութիւնը թուրքերուն հետ այս բանակցութիւնները վարելու ստիպողը, երէկի (գուցէ և այսօրուան) իրենց բարեկամը և հովանաւորողը եղող ամերիկացիներն են:

Եւ այս՝ նորութիւն մը չէ, 1991-ին ծնունդ առած իբր թէ ազատ և անկախ Հայաստանի պետութեան համար:

1991-էն սկսեալ, Խորհրդային Հայաստանը ներսէն փլցնող Լեւոն Տէր Պետրոսեանը, ամերիկացիներուն հրամանով թուրքերուն մօտեցաւ և Հայաստանի նախագահի մը համար ամենէն նուաստացուցիչ շողոքորթութիւնները կատարեց, թուրքերուն հետ բարեկամանալու համար:

Եւ այն տարիներուն թուրքերը, Լեւոնին բնաւ երես չտուին:
Բայց, երբ 2000 թուականին Արեւմտեան պետութիւններուն մէջ հայերը սիրաշահելու համար (աւելի ճիշդ՝ հայերը քնացնելու համար) հայկական ցեղասպանութիւնը ճանչնալու հոսանքը սկսաւ, Թուրքերը շատ գղջացին, որ Լ. Տ. Պ.ին յարգը չեն գիտցած:

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՅՍ ՔԱՅՔԱՅՄԱՆ
«ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ»
ԲՈԼՈՐՍ ԱԼ ՅԱՆՑԱԻՈՐ ԵՆՔ

ՀԱՐԻԻՐՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ,
«ԾՈՎԷ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ»ԷՆ
ԻՆՉՊԷ՛Ս ԱՅՍՕՐՈՒԱՆ «ԱԻԱՏԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ», ՀՈԳՈՒՈԿ ԵՒ ՄԱՐՄՆՈՎ ԳՐԵԹԷ ՓՃԱՑԱԾ
ՎԻՃԱԿԻՆ ՀԱՍԱՆՔ

ՈՐՈՎԼԵՏԵԻ՛
«ՂԵԿԻՆ ԳԼՈՒԽԸ ԿԸ ՆՍՏԵԾՆԵՆՔ ՄԵՐ Է՛Ն ԱՄՏԱԳԻՆ,
Է՛Ն ԱՅԼԱՍԵՐԱԾ, Է՛Ն ԱՆՊԷՏ ԾՆՈՒՆԴՆԵՐԸ»
1911-ՈՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ՎՐԷԺ ՈՌՈՒԲԷՆԵԱՆ]

Որովհետև Լեւոնը պատրաստ էր, թուրքերուն հետ բարեկամանալու համար, անոնց գրեթէ բոլոր պայմանները ընդունելու:

Մեծայարգ Հ.Յ.Դ.ի ծանօթ ղեկավարերը որոնք, 70 տարիներ շարունակ, աշխատեցան Ս. Հայաստանը վիցնելու, չէի՞ն գիտեր, որ եթէ Բ. Հանրապետութիւնը կործանէր, 1920-ի իրենց իշխանութեան շրջանին եղածին նման, Հայաստանը թուրքերուն գիրկը պիտի իյնար:

Ուրեմն, ինչի՞ կը ծառայէ իրենց այսօրուան վրդովումը: Առաջուրնէ մտածել պէտք էր: Այս և ասոր նման սխալներն էին, որ հարիւր տարիներու ընթացքին, անպատասխանատու արարքներով, այսօրուան քառսը պատրաստուեցաւ:

* * *

Անժխտելի իրականութիւն է, որ 1300 թուականներէն յետոյ, պետականութեան գրկուած հայ ազգը մինչեւ այսօր «Հայ» պահողը, գոնէ մեծ չափով, Հայ Եկեղեցին եղած է:

Բայց, նոյն Հայ Եկեղեցիին առաջնորդներէն մէկը եղող Պուրսայի Յովակիմ Եպիսկոպոսը, Օսմանեան Սուլթան Ֆաթիհ Մեհմետին հրամանով, 1453-թ. ներէն սկսեալ, Պոլսոյ հայկական պատրիարքութիւնը հիմնած էր:

Եւ Յովակիմ Եպիսկոպոս, իր այս անպատասխանատու կեցուածքովը, հայ ազգին ճակատագիրը, ձեւով մը թուրքերուն ձեռքը յանձնած եղաւ:

Պոլսոյ Պատրիարքներուն մէջ, շատ ազգասէր Պատրիարքներ գտնուած են: Բայց անոնց մէջ թուրքերուն ճնշումով գլուխ խոնարհած և կամակատար դարձած Պատրիարքներուն թիւը շատ անելի մեծ եղած է:

Մեր համոզումով, այս անարգ Պատրիարքներուն մաս կը կազմեն՝ Ներսէս

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİĞİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
OLAY - 2

KAYSERİLİ BİR ERMENİ GENCİNİN ANLATTIKLARI

"ERMENİ GENCİNİN TÜRKÇE OLARAK ANLATTIKLARINI, KENDİ SÖZLERİNE SADIK KALARAK
VERMİYE ÇALISACAYIZ"

1915-TEN EVEL TALAS ÇOK MAMUR BİR SEHIRMIS.ÇOK SAYIDA ERMENİ YASARMIS TALASTA. RUM DA VARMIS AMA, RUMLAR ERMENİLER KADAR DEGILMIS. YUKARI MAHALLE HEP ERMENİ İMİS.

26 TANE MAHALLE FIRINI ÇALISIRMIS.

GÜLBENKYANIN AİLESİ TALASLIDIR.

(MESHUR MİLYARDER KALUST GÜLBENKYAN = MISTER YÜZDE BES).

GENÇ GÜLBENKYAN AVRUPAYA GİTMİS OKUMAYA. SONRADAN MİLYONER OLMUS, VE İSTEMİS Kİ TALASTA KENDİ ADINA BİR KİLİSE İNSA EDİLSİN."ÇOK GÜZEL BİR KİLİSE OLSUN, HARCANAN PARA MEVZUBAHİS DE GİL" DEMİS. VE ÇOK GÜZEL BİR KİLİSE YAPMISLAR. ÇOK SAĞLAM DASLAR KULLANMISLAR. VE İKİ TASI ÜST ÜSTE KOYDUKTAN SONRA, ARASINA KURSUN DÖKMÜSLER.BU KİLİSENİN İSTİSNAI BİR ÇANI VARMIS. ÇALDİĞI ZAMAN KAYSERİDEN DUYULURMUS. ÇAN, TUNÇ VE ALTIN KARISIMI İMİS. SİMDİ BU ÇANI ERCİYAS DAGINA KOYDULAR.

SİSLİ HAVALARDA YOLUNU SASIRAN KAYAKÇILAR OLURSA, TİPİLİ HAVALARDA O CANIN SESİNE GELSİN, BULSUN, KAYBOLMASIN DİYE.

BU KİLİSENİN BOYASINI YAPAN NAKKAS [RESSAM] BU KİLİSENİN RESİMLERİNİ ÇİZERKEN, 105 SARİ LİRALIK SARAP İÇMİS, OKADAR GÜZEL MOTİFLER İŞLEMİS...

SONRADAN 1950 SENELERİNDE KAYSERİYE BİR VALİ GELİYOR "NAZMI TOKER" İSMİNDE. "ERMENİ ESERİ KALMIYACAK" DİYE BU KİLİSEYİ DİNAMİTLE YIKTIRIYOR. KURSUN DÖKÜLDÜĞÜ İÇİN, KAZMAYLA YIKAMIYORLAR.

VE SİMDİ BAHÇE OLARAK KULLANILIYOR. AĞAÇLAR DİKİLİ.

BASKA HIÇ BİR KİLİSE ESERİ, TASI FALAN KALMAMIS VAZİYETTE. OLAY BU...

YALNIZ, DEDEM ÖLMEDEN, GÜLBENKYAN AİLESİNİN ÜSTÜ ERMENİCE YAZILI MEZAR TASINI ALMIS EVE GETİRMİS.

BU KİLİSEDEN KALAN YEGANE HATIRA: GÜLBENKYAN AİLESİNİN MEZAR TASI.

[DEVAMI VAR]

**ՈՎԲԵՐ ԵՆ ԱՅՍ ՔԱՅՔԱՅՄԱՆ
«ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ»
ԲՈԼՈՐՍ ԱԼ ՅԱՆՑԱԻՈՐ ԵՆՔ**

**ՀԱՐԻԻՐՑԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ,
«ԾՈՎԷ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ» ԷՆ
ԻՆՉՊԷ՛Ս ԱՅՍՕՐՈՒԱՆ «ԱԻԱՏԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ», ՀՈԳՈՒՈՎ ԵՒ ՄԱՐՄՆՈՎ ԳՐԵԹԷ ՓՃԱՑԱԾ
ՎԻՃԱԿԻՆ ՀԱՍԱՆՔ**

ՈՐՈՎԼԵՏԵԻ՝

**«ՂԵԿԻՆ ԳԼՈՒԽԸ ԿԸ ՆՍՏԵՑՆԵՆՔ ՄԵՐ Է՛Ն ԱՄՏԱԳԻՆ,
Է՛Ն ԱՅԼԱՍՍԵՐԱԾ, Է՛Ն ԱՆՊԷՏ ԾՆՈՒՆԴՆԵՐԸ»
1911-ՈՌՈՒԲԷՆ ՍԵՌԱԿ**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ՎՐԷԺ ՈՌՈՒԲԷՆԵԱՆ]**

Վարժապետեանը, Մաղաքիա Օրմանեանը և Ծնորհք Գալուստեանը:

Բայց ասոնցմէ ոչ մէկը՝ այսօրուան Պոլսոյ Պատրիարքը եղող, հոգեկան հիւանդի տպաւորութիւն ձգող Մեսրոպ Մուֆաֆեանին չի կրնար հաւասարիլ:

Այս թրքասեր հոգեւորականին ազգավնաս արարքներուն մասին, 1999-էն սկսեալ, «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ շատ երկար արտայայտուած եմ:

27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան չարագուշակ մունետիկը եղող Պոլսոյ Պատրիարք Մուֆաֆեանը, Ս. Էջմիածնի նոր Գահակալի ընտրութեան նախընթաց օրերուն՝ «Եթէ Գաբգին Ներսիսեանը կաթողիկոս ընտրուի՝ ես Պոլսոյ մէջ անկախութիւնս կը հռչակեմ» ըսելով սպառնացած էր:

Բայց, 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան գրեթէ նոյն ժամերուն, իր չուզած

Գաբգին Ներսիսեանը կաթողիկոս ընտրուեցաւ...:

Եւ Պոլիս վերադառնալէն յետոյ, Մուֆաֆեան իր սպառնալիքը գործադրել սկսաւ:

Եւ նորընտիր կաթողիկոսին տուած որոշումները քննադատող յայտարարութիւններ ըրաւ, և Էջմիածնի կաթողիկոսին հեղինակութիւնը անտեսող գործունեութիւն ցուցաբերեց:

Պոլսոյ Պատրիարքին այս թրքահաճոյ կեցուածքը մեզ շատ չի զարմացներ:

Պոլսոյ մէջ թուրքերուն կամակատարը եղող Պատրիարքէ մը ուրիշ բան չէինք կրնար սպասել:

Բայց խոստովանիմ, որ ինձի շատ ցաւ պատճառողը, 27 Հոկտեմբեր 1999-ի օրերուն Էջմիածնի մէջ իր ցուցաբերած իմաստուն կեցուածքով մեր մէջ մեծ յոյսեր ստեղծած Անթիլիասի Գահակալին, այս թրքասեր Պոլսոյ Պատրիարքը՝ Անթիլիաս՝ «Միւռնօրհնութեան» հրաւիրած ըլլալն է:

Այն տպաւորութիւնը ունիմ, որ թուրքերուն հաճելի թուելու համար առիթ չփախցնող Պատրիարքին տրուած հրաւերը, կարծես թէ իր հակաէջմիածնական ընթացքը քաջալերող ազդակ եղաւ, եթէ նոյն իսկ այդ չէր հրաւերին նպատակը, այլ՝ պատշաճութիւն յարգել:

Այս տպաւորութիւնը շեշտուեցաւ երբ, իբր «œcuménique» ժողովին նախագահ, Վեհ.ը այս «ըմբոստ» Պատրիարքը



ժընեւի եկեղեցա-կրօնական ժողովին՝ կողք-կողքի

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՅՍ ՔԱՅՔԱՅՄԱՆ
«ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ»
ԲՈԼՈՐՍ ԱԼ ՅԱՆՑԱԻՈՐ ԵՆՔ

ՀԱՐԻԻՐՅԻՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ,
«ԾՈՎԷ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ»ԷՆ
ԻՆՉՊԷ՛Ս ԱՅՍՕՐՈՒԱՆ «ԱԻԱՏԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ», ՀՈԳՈՒՈՎ ԵՒ ՄԱՐՄՆՈՎ ԳՐԵԹԷ ՓՃԱՑԱԾ
ՎԻՃԱԿԻՆ ՀԱՍԱՆՔ

ՈՐՈՎՀԵՏԵԻ՛
«ՂԵԿԻՆ ԳԼՈՒԽԸ ԿԸ ՆՍՏԵԾՆԵՆՔ ՄԵՐ Է՛Ն ԱՄՏԱԳԻՆ,
Է՛Ն ԱՅԼԱՍՄԵՐԱԾ, Է՛Ն ԱՆՊԷՏ ԾՆՈՒՆԴՆԵՐԸ»
1911-ՈՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ՎՐԷԺ ՈՌՈՒԲԷՆԵԱՆ]

Ժընեւ կայսցած ժողովից հրաւիրեց:
Մեր վրայ լաւ տպաւորութիւն չձգեց ժընեւի ժողովէն վերցուած նկար մը, ուր
նախագահի կողքին կը տեսնուէր Սուրաֆեան Սրբազանը և Մխիթարեան Կա-
թողիկէ հոգեւորական մը, որուն միաբանութեան հիմնադրութիւնը, ինչպէս
նշեցիցք մեր յօդուածի սկիզբին, Հայ եկեղեցիի երկփեղկման մէջ դեր ունեցաւ:

* * *

Սխալ ենթադրութիւններու դուռ չբանալու համար ըսենք, որ այս տողերուն
նպատակը ոչ թէ «հին վէրքեր» գրգռել է, այլ՝ «հին սխալներ»ու կրկնութիւնը
կանխել: Մեր մտահոգութիւնը, մաղթանքն է՝ հայ եկեղեցիին միասնութիւնը
պահուած և զօրացած տեսնել: Պառակտումէ ու անմիաբանութենէ շատ տու-
ժեցիցք, դե՛ռ ալ անոնցմէ կը վնասուի Ազգը:

Կը կարծենք, որ հայկական եկեղեցին այցելող բոլոր հայերը (Շարք՝ էջ 10)

ՐՈՎԻ ԹՐՔԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԵՐՈՒՆ (ԻԲՐ ԹԷ) ՉԳԻՏՅԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԴԷՊՔ - Բ.

ԿԵՍԱՐԱՑԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ
(Հայ երիտասարդին թրքերէն ըլլալով պատմածները՝ իր խօսքերուն հաւատարիմ
մնալով տալու պիտի ջանանք)


1915-էն առաջ «Թալաս»ը շատ բարգաւաճ քաղաք մըն է եղեր:
Ծառ մեծ թիւով հայեր կ'ապրին եղեր Թալասի մէջ: Յոյներ ալ կան եղեր, բայց յոյներ՝
հայերուն չափ չեն եղեր: Վերի թաղամասը, բոլորովին հայ են եղեր:
26 հատ փուներ կ'աշխատին եղեր Թալասի թաղամասերուն մէջ:
Կիւլպէնկեանին ընտանիքը Թալասցի է (հռչակաւոր միլիտանտէր Գալուստ Կիւլպէնկեան:
«Պարոն հարիրին հինգ»):
Երիտասարդ Կիւլպէնկեանը երոպա կ'երթայ՝ ուսանելու: Յետոյ կը հարստանայ, միլիտանտէր կ'ըլլայ:
Եւ կուզէ, որ Թալասի մէջ իր անունով եկեղեցի մը կառուցուի:
«Ծառ գեղեցիկ եկեղեցի մը ըլլայ. ծախսուելիք դրամը կարելու չէ» ըսեր է:
Եւ շատ գեղեցիկ եկեղեցի մը կը կառուցանեն: Ծառ ամուր բարեր կը գործածեն: Եւ երկու բարը
իրարու վրայ դնել էտք, անոնց միջեւ կապար կը լեցնեն:
Այս եկեղեցին՝ բացառիկ գանգակ մը ունի եղեր, հնչած ատենը՝ գանգակին ծայրը կեսարիայէն կը
լսուի եղեր:
Ջանգակը՝ "Bronze" և ոսկիի խառնուրդ է եղեր:
Հիմա այս գանգակը "Erciyas"ի լեռը տարած են: [Կեսարիոյ մօտ 4000 ՄՏ. լեռ]: Որպէսզի
մշուշտ օրերուն, սահնակով սահողները՝ փոթորկալից օդերուն, գանգակին ծայրին գան, գտնան և
չկորսուին:
Այս եկեղեցիին նկարները գծագրող արուեստագէտը աշխատած օրերուն, 105 ոսկի-լիրայի գինի
խմեր է և շատ գեղեցիկ "Motif"ներ գծագրեր է...
Ծառ վերջը 1950-ներուն, կեսարիա Nazmi Toker անունով կուսակալ մը կու գայ:
«Հայկական ճուշարման պիտի չմնայ»-ըսելով, այս եկեղեցին ուժանակով փլցնել կու տայ:
Քարերուն մէջ կապար լեցուած ըլլալուն, բրիչներով փլցնել անկարելի կ'ըլլայ:
Եւ այժմ՝ պարտէզ ըլլալով կը գործածուի:
Ծառեր տնկուած են:
Հիմա այստեղ, եկեղեցիէն հետք մը, նոյնիսկ բար մ'անգամ չէ մնացած: Իրականութիւնը այս է:
Միայն, մեծ հայրս չմահացած, Կիւլպէնկեան ընտանիքին, վրան հայերէնով արծաճագրուած
տապաւաքարը կ'առնէ, տուն կը բերէ:
Այս եկեղեցիէն մնացած միակ յիշատակը՝
Կիւլպէնկեան ընտանիքին տապաւաքարն է:
(Շարունակելի)

ՊԱՏՄԱՆՇՄԱՐ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ԹԱԳՈՒՀԻՆ՝
CATERINA CORNARO

ՎԱԶԳԷՆ ԹԻԻԹԻՆՆՃԵԱՆ

Հայկական մանրանկարչության ծագումին ու զարգացման մասին դասախօսութիւններու շարքի մը հրաւերով մեկնեցայ Նիկոսիա: Գաղութին 1700-ամեակի Յանձնախումբին գործունէութիւններուն վերջին ձեռնարկն էր: Անկեղծօրէն խոստովանիմ, որ այս բարեղէպ առիթին երկար առեմնէ ի վեր կը սպասէի... անձամբ և տեղւոյն վրայ ուսումնասիրելու համար հարց մը, որ հետեւեալն էր. Իտալիոյ Հիւսիսը գտնուող Վենէթօ գաւառին Ազօօ անուն գիւղաքաղաքին մէջ, միջնադարեան դղեակ մը կայ, ուր արձանագրութիւն մը կ'ըսէ Caterina Cornaro Regina d'Armenia et Cyprium... ÆTATIS SUÆ... M...: Բնագղական մղումէ տարուած պրպտումներ կատարեցի ու նշմարեցի, որ Ալիշան, Զօպանեան, Տէր Ղազարեան սպաղած էին այս հարցով. սակայն մնացած էր հարց...: Իմ բազմաթիւ ճամբորդութիւններուս ընթացքին հայ թէ օտար աղբիւրներու ֆով, արխիւներու մէջ փնտոնեցի պատասխան մը. սակայն չգտայ: Ո՞վ էր այս Հայոց և Կիպրոսի թագուհին և ի՞նչ գործ ունէր Ազօօ, երբ իրմէ առաջ կար Վենետիկը, ուր բազմաթիւ են հայկական վկայութիւնները...: Ուղեւորութիւններուս ծիրին մէջ ինկաւ նաեւ Կիլիկիան: Բազմաթիւ յիշատակներէն գրպանիս մէկ անկիւնը մնացած էւրոն Բ.ի մը արծաթեայ շողը մնաց...: Ս. Յակոբեանց ձեռագրատան մէջ լուսահոգի Ն. Պօղարեան Սրբազանը ցոյց տուաւ անունը վարպետի մը մագաղաթեայ կէս էջ մը, ուր կը տեսնուէին այս վերջինին ֆով սպիտակ ու շքեղ շրջագծաստովը բազմած Մայր թագուհին Գորանդուխտը...: Պօղարեան Սրբազան, որ առաջին անգամ էր որ կը լսէր Cornaro անունը, յարմար տեսաւ որ խիզախ պատմաբան մը, այս անուններուն ճշդումն ու վերծանումները ընէ...:



Հայաստանի և Կիպրոսի թագուհի Caterina Cornaro-ի պալատը, մեծ ջրանցքի վրայ, Վենետիկ: Ճարտարապետ՝ Ն. Սանսօվինօ:

1204-էն 1453 թուականը Ադրիականի թագուհի հռչակուած վենետիկեան Հանրապետութիւնը իր բազմաազար մարտանաւերով տէրն ու տիրականն էր Միջերկրական ծովուն, որ գրաւելէ յետոյ տակաւ հալումաշ եղող Բիւզանդիոնի մէկ մասը, չորրորդ խաչակրութեան գլուխը անցած յաջորդաբար գրաւեց Կիլիկիան, Կիպրոսը, Պաղեստինն ու Երուսաղէմը և աչքերը ուղղեց դէպի Հնդկաստան:

★ ★ ★

Ռուբինեան-Հեթումեան հարստութիւնը Հայոց պատմութեան մէջ գերակայ դիրք մը ունի: ԺԱ-ԺԴ դարերու այս հարստութիւնը յաջողած էր հասնիլ մշակոյթի ու գեղարուեստի բարձրորակ մակարդակի մը ու բոլորել ծաղկումներու շրջաններ հակառակ պարբերական վերիվայրումներուն-նազմա-քաղաքական դժուարին կացութիւններուն...: Այս երեւոյթը կը բացատրուի ինքնանաճանաչման ու ազգային արժանապատու-

ՊԱՏՄԱՆՇՄԱՐ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ԹԱԳՈՒՀԻՆ՝
CATERINA CORNARO

ՎԱԶԳԷՆ ԹԻԻԹԻՒՆՃԵԱՆ

Բեան զգացումներու ոտնակոխումէն առաջ եկած զգացումէն, որ պարբերաբար կու գար մէկ կողմէն Սելուկ-Մոնկոլ տիրակալներէն և մեծամիտ և միշտ արհամարհող քիւզանդացիներէն և, վերջապէս, հասնելու համար յոռեգոյնին՝ Լատինական սողուկող հոգեբանութեան, արտաքին պերճանքի ու նիւթական գերակայութեան, որոնց ցանցին մէջ ինկան դժբախտ հայ թագաւորներ և այնքան դժբախտ հայրապետներ...:

Քաղաքական-կրօնական այս խառնիճադանջին մէջ Կիպրոս կ'ունենայ իր անկոչ թագաւորը՝ Կի Լուզինեան...: 1192-1489: Պալատական իրարյաջորդ սադրանքներուն ընթացքին, Կիլիկեան և Կիպրական արքունիքներուն միջև կը կնուին խնամիական կապեր: Կիպրոսի թագուհի Զապէլ կամ Իզապէլ իր զաւակներով կ'ապաստանի լատինասէր Լեւոն Ե ի արքունիքը: Ատր զաւակներէն մին Հայ ծէտով օծուելով հռչակուեցաւ Կոստանդին Գ. Տանն Կիլիկիոյ...: Հայոց իշխան Օշին տապալեց զայն և անոր տեղ գահ բարձրացուց իր՝ նոյնքան դժբախտ եղբայրը Լեւոն Զ. (1374-1375) -որ բողբով հայրենիքը օգնութիւն փնտրեց օտարներուն քով և պանդխտութեան մէջ ալ աչքերը փակեց Փարիզի մէջ...: Saint Denis արքաներու գերեզմանատան մէջ մի՛ փնտռէք Leon VI roi d'Arménie -ին... հետքն իսկ չկայ...:

★ ★ ★

Նիկոսիոյ պատմութեան թանգարանի հիւր Փրոֆ. Դոկտ. Եօրղօ Սօթիրես, մասնագէտ Միջին Արեւելքի երկիրներու ժողովուրդներու պատմութեան, դէպի Պէրուս վերադարձիս ճամբուն ընկերներ ենք: Աշխարհ պտտած ու տեսած այս անձը, միջազգային դէմք, մեծ գովեստով կը խօսի Հայ Կիլիկիոյ մասին և կու տայ «տեսակէտներ»։ Ինք այդպէս կը կոչէ... Գիտէ Զապէլ թագուհին, արքունական մտերմութիւնները, հետեւանքները ու կը յիշէ անոր աղջիկը՝ Կաթարինէն, որ Կիպրոսի գահին չնստած, հագիւ կը սրծի դաւադրական սադրանքէ մը և խաչակիր իշխան Տանքրէտի հովանիին տակ կը հասնի Վենետիկ, անկից՝ Ազօ: Տանքրէտեան միջնաբերդը...: «Եթէ կ'ուզէք ոչ պատմական, սակայն բաւական ճշգրիտ տեղեկութիւններ իմանալ կը թելադրեմ, որ կարդաք T. Tasso-ի Gerusalemme Liberata պատմավէպը, ուր կրնաք յաւելեալ մանրամասնութիւններու հանդիպիլ... որոնք բոլորն ալ խղճամտօրէն և լրջախոհութեամբ դատարարուած են...»:

Պէրուս, 10 Յուլիս, 2001

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՏԵՐ-ԶՕՐ -2001թ.... (Շար. էջ 9-էն)

Բերէ այս բոլոր գործունէութեան: Ան մեզի կու տայ հողը, կու տայ սերմը [նայած թէ ինչ քանակութեամբ պիտի ցանենք, և ոչ պակաս կարելոր՝ կու տայ արտերը հերկող ու հնձող մեծ մեքենաներ, կը հասցնէ մեզի ջուր պէտք եղած քանակով, իսկ մենք, մեր ընտանիքի բոլոր անդամներով, կ'աշխատինք:

- Ձեր վիճակը բարելաւուած է շնորհիւ այս բոլորին:
- Անշուշտ: Տարիէ տարի կը զգանք, որ մեր վիճակը կը բարելաւուի ամէն մարդի մէջ: Ամենէն կարելորը այն է, որ ապահովուած է մեր վաղուան հացը, բժշկական խնամքը, մեր զաւակներուն ուսումը, գործը, ընտանիք կազմելու միջոցը...
- Կառավարութեան վերաբերումը ձեր հանդէպ ինչպէ՞ս կը գտնէք:
- Կառավարութիւնը գոհ է մեր աշխատանքէն: Յաւերժ շնորհապարտ ենք հանգուցեալ նախագահ Հաֆէզ Ասատին: Աստուած լոյսերու մէջ պահէ իր հոգին: Ամէն ինչ ըրաւ ժողովուրդին կեանքը բարելաւելու, երկրին ազգային տնտեսութիւնը զարգացնելու համար: Ծիշո՞ք է, որ դժուար տարիներ ունեցանք: Մասամբ ալ՝ Իսրայէլի նախաշարժակումին պատճառով: Բայց տոկացիք: Մեր համբերութիւնը և աշխատանքը վարձատրուեցան: Առաջ, շատ ապրանքներ, դուրսէն կը ներածէինք: Հիմա, մենք կ'արտադրենք և ուրիշին կը դրկենք նոյն արտադրութիւնները:
- Հիմա, որ ինչ չկայ, կրնա՞ք բան մը փոխուիլ երկրին մէջ:
- Աստուած չընէ: Նախ. Հաֆէզ Ասատը չկայ, բայց կայ Նախ. Պաշար Ասա-

ՊԱՏՄԱՆՇՄԱՐ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ԹԱԳՈՒՀԻՆ՝
CATERINA CORNARO

ՎԱԶԳԷՆ ԹԻԻԹԻՒՆՃԵԱՆ

ՈՎԶԵՐ ԵՆ ԱՅՍ ԶԱՅԶԱՅՄԱՆ «ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ... (Ծար. էջ 2-էն)

գիտեն, թե Անթիլիասի Կաթողիկոսութիւնը 1956-ին, «Պաղ Պատերազմ»ի այդ շատ տխուր տարիներուն, Ամերիկացիներուն հրամանով և օգնութեամբ Հ.Յ.Դ.ի կողմէ գրաւուեցաւ և Կիլիկեան Աթոռի միաբանութեան մէջ տուեալ կուսակցութեան չյարող և «հայրենասէր» նկատուած բոլոր կրօնականները և ուսանողները բրտութեամբ փողոց նետուեցան:

Եւ այդ թուականէն ետք Անթիլիաս, Արեւմուտքի սայլին լծուած կուսակցութեան տեսակ մը «մասնաճիւղ»ին վերածուեցաւ:

Այսինքն՝ Ամերիկացիներուն Սովետներուն դէմ շղթայազերծած «Պաղ Պատերազմ»ին մէջ, Անթիլիասի միաբանները, անոնց մէկ մասը գոնէ, հայ կրօնականի տարագի ներքեւ, Ա.Մ.Ն.ի «հակահամայնավար» քաղաքականութեան ուղղութեան ծառայողները եղան կամայ - ակամայ:

Այստեղ կը հրատարակենք, Սովետական Հանրագիտարանին 1979-ին հրատարակուած հատորին մէջ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասին տրուած տեղեկութիւններուն վերջին մասը՝

«1956-ից ի վեր «Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ» Դաշնակցութեան ազդեցութեամբ վարում է Հայոց եկեղեցու պառակտման վնասակար գիծ. յաւակնում է դառնալ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հակաթող Սփիւռքում և ամէն կերպ ձգտում է իր հոգեւոր-վարչական իրաւասութեանը ենթարկել արտասահմանի հայ եկեղեցական թեմերը»:

Ինչպէս որ կը տեսնէք՝ Հայկական Սովետական Հանրագիտարանին մէջ 1956-էն ետքի և յաջորդ առնուազն տասը տարիներու Անթիլիասի մասին գրուածները իրականութիւն են: Անոնց մէջ որեւէ չափազանցութեան և քարոզչութեան միտում չկայ: Ըսուածները այսօր նորութիւն չեն ունէ մէկու համար: Կարելի է ըսել նոյնիսկ, որ բոլոր իրականութիւնները հոն չեն գրուած:

Հանրագիտարանին մէջ չէ նշուած օրինակի համար, որ Ամերիկացիներուն կողմէ Սովետներուն դէմ մղուած «Պաղ Պատերազմ»ին ռազմավարութեան մաս կը կազմէր՝ հայկական որոշ հատուածին կողմէ Հայկական եկեղեցին բաժնելու համար տարուած աշխատանքին զուգահեռ, Ս. Հայաստանը քանդելու միտումով եղած զրպարտիչ քարոզչութիւնը, որուն կեդրոնը Միւնիխ էր:

Եւ դժբախտաբար յաջողեցան հայավնաս ու հայրենաքանդ այս աշխատանքները:

* * *

Մենք, իբր սրտցաւ հայ մը, երբեք պիտի չներենք՝ Թուրք Սուլթանին հրամանով Պոլսոյ մէջ հայկական Պատրիարքարան հիմնող Յովակիմ Եպիսկոպոսը:

Ան, հայկականութեան ոգի չունենալուն, չհասկցաւ Թուրք Սուլթանին աղուէ-սայլին նպատակը, որ մէկ քարով, երկու թռչուն զարկաւ:

1.- Պոլսոյ մէջ յոյներուն դէմ իբր հակադիր ուժ տեղաւորեց հայերը:

2.- Եւ հայկական բնօրրանը պարպեց հայերէն, որ «Հայկական անկախ պետութիւն»ի վտանգը յաւիտեան մէջտեղէն վերանայ:

Նոյնպէս՝ մենք երբեք պիտի չներենք մեր օրերու Պոլսոյ Պատրիարքը՝ մեծամիտ և թրքասէր Մեսրոպ Մութաֆեանը, որ կ'ըսէ, թէ իր գլխաւոր պարտականութիւնը Պոլսոյ հայերը «քրիստոնէայ հայ» պահել է: Մինչդեռ, հակառակ իր յաւակնութեան՝ իրականութիւնը այն է, որ Օգոստոս 1999-ի իր զեկոյցին մէջ, իր իսկ ըսածին համաձայն՝

ՊԱՏՄԱՆՇՄԱՐ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ԹԱԳՈՒՀԻՆ՝
CATERINA CORNARO

ՎԱԶԳԵՆ ԹԻԻԹԻՆՆՃԵԱՆ

«Հայերու հարիւրին վաթսունը բուրժերուն հետ կ'ամուսնանան»

Եւ վերջին օրերուն մեր ստացած տեղեկութիւններուն համաձայն. Պոլսոյ մէջ «տարեցներէն զատ հայերէն խօսող գրեթէ չկայ»:

Եւ այս թուրք իշխանութեան հնազանդ պատրիարքը, իր համայնքին ողբերգական վիճակով զբաղելու տեղ, մէկ ականջն ալ միշտ ամերիկացիներուն տուած. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայկական հարցերուն մէջ դաս տալու կ'ելլէ: Եւ իր շնորհած դասերէն մէկն ալ, երկու օր յաջորդաբար. Փարիզի «Յառաջ» թերթին մէջ իբր հարցազրոյց հրատարակուեցաւ: Ծատ հաւանաբար քիչ մ'աւելի մեծամըտացած էր Անթիլիաս և ժընև իր այցերէն և ստացած «պատիւ»ներէն:

* * *

Մենք, իբր պարզ հայ մը, երբեք պիտի չներենք (ուրիշներ ազատ են դժգոհելու մեր այս խօսքէն) Մխիթար Սեբաստացին, որ իբր Հայ Առաքելական վարդապետ, հայկական եկեղեցիին ծառայելու համար իր կատարած ուխտը դրժեց և կաթողիկէ միաբանութեան ծառայութեան մէջ մտաւ:

Ան, գրեթէ 1400 տարիներ տեսող հայկական կրօնական միասնականութեան մէջ ճեղք գոյացուց դժբախտաբար:

Չենք ուրանար ու ժխտեր Աբբահօր հայ մշակոյթին կմատուցած ծառայութիւնը: Այս մէկը սակայն չի կրնար թեթեւցնել, հայկական կրօնական միասնականութեան իր հասցուցած վնասը՝ ուզելով կամ ոչ:

* * *

Եւ մենք, իբր պարզ, սրտցաւ ու հայրենասէր հայ մը երբեք պիտի չներենք. հայ ազգին այսօրուան ողբերգական վիճակին պատասխանատու հայ քաղաքական գործիչներուն, ներառեալ Հ.Յ.Դ.ին, իր 24 Ապրիլ 1915-ի հեղինակ Սիոնիստ Իթթիհատականներուն հետ ատեն մը ունեցած միամիտ գործակցութեան. հակա-սովետական անհիմաստ քաղաքականութեան՝ որ Արեւմտահայաստանի մէկ կարեւոր մասին կորուստին պատճառ եղաւ, 1700 տարուան հայկական եկեղեցին պառակտելու (1956 թ.) Արեւմտեան դաւի մէջ իր ունեցած մեղսակցութեան. Խ. Հայաստանի քայքայման բերած նպաստին... որ մեզ Հայաստանի ներկայ խղճալի վիճակին հասցուց, և դեռ որպէս «ազատարար ռահվիրայ» կը ներկայանայ... առանց իր անցեալը ինքնաքննադատութեան բովէն անցընելու:

Ծատ ցաւալի է մեզի համար այս իրականութիւնները կրկնելը:

Բայց իրականութիւնները չմոռնալն ու ըսելն ալ, մարդկային խղճմտութեան պարտականութիւն կը նկատենք:

տը: Աստուած զինք չար աչքերէ հեռու պահէ: Իսկ ամենէն կարեւորը՝ Նախ. Հաֆէզ Ասատի ընդհանուր քաղաքականութիւնը կը մնայ անփոփոխ: Կուսակցութիւնը, կառավարութիւնը և ժողովուրդը հաւատարիմ կը մնան իր գծին: Կրնամ վստահ ըսել, որ եթէ չըլլար Իսրայէլի բռնագրաւումը և սպառնալիքը, մեր վիճակը շատ աւելի լաւ կ'ըլլար այսօր:

Մեր գրոյցին հետեւող երիտասարդներէն մէկուն դառնալով ըսի.

– Դուն, շատ ուշադիր ես մեր խօսակցութեան... Լիբանան եկա՞ծ ես...:

– Բովիմը իր տեղը պատասխանեց.

– Այս տղան գիտէն դուրս չէ ելած: Տէր-Զօր անգամ չէ գացած: Եթէ պատահի, որ մէկը առաջարկէ իրեն իր ինքնաշարժով զինք Հալէպ տանիլ՝ չ'երթար:

Մինչ այդ՝ լուկեաց տղան պատասխանեց.

– Ես շատ կը սիրեմ իմ գիտըս, հողս, երկիրս: Կը վախճամ որ կը կարօտնամ...:

Բոլորս խնդացինք:

Իր ընկերը միջամտեց.

– Վաղը, եթէ բանակ երթայ, զինուորական ծառայութեան, այն ատեն պետութիւնը կը պարտադրէ, որ դուրս գայ իր կղզիացած վիճակէն:

Ուրիշ մըն ալ ըսաւ, որ ինք մէկ տարի աշխատած է Լիբանանի մէջ: Հիմա, գոհ է, որ վերադարձած է :

(Շար. 2)

**ԱԾԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ԱԶԴԵՅԻԿ ԵՒ
ԱՆԽԱՓԱՆԵԼԻ ԶԷՆՔԸ՝**
 ԻՐԵՆՑ ԱԶԳԻՆ ՀԱԴԷՊ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՆԻՐԱԽՈՒԹԵԱՆ
 ԴԷՄ ԸՆԴԿԶԵԼՈՎ, ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐՈՒՆ
 ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԵԱՄԲ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱՍՊԱՆԱԿԱՆ
 ՎՐԻԺԱՌՈՒ ԵՂԵՌՆԱՓՈՐՁԵՐՆ ԵՆ

ԱԾԽԱՐՀԻ ՆՈՐ ՏԵՐԵՐԸ ԸԼԼԱԼ ՅԱԽԱԿՆՈՂ ՄԻՈՆԻՏԱՑ ԱՍԵՐԻԿԱԾԻՆԵՐ. ԱՅՆԵՍ ԾԱՏ
 ՄԻ ՎՍՏԱՀԻԶ ՉԵՐ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ. ՉԵՐ ԱՐԴԻԱԿԱՆ ԶԷՆՔԵՐՈՒՆ:
 ԱՅԼ՝ ՍՈՍԿԱԾԷՔ:
 ԱՆԻՐԱԽՈՒԹԵԱՆ ԴԷՄ. ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄՈՎ ԶԻՆՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԸ.
 ՉԵՐ ԱՆԱՌԻԿ ԱԾՏԱՐԱԿՆԵՐԸ ԿՐՆԱՆ ՓԼՅԵԼ:

«ԻՆՉ ԿՐՆԷՒ ԵՐԲ ԱԶԳ ՄԸ ՄԸՆԱՅ ՆՕԹԻ.
 ԶԵՌ-ՔԷՆ ԲԱՀ ՈՒ ԲՐԻՉ ԿԸ ՆԵՏԷ ՄԷԿԳԻ,
 Կ՛ԵՐԹԱՅ ՀԱՂՈՐԳՈՒԻԼ ՄԱՏՈՒՌ Մ՛ԱՆԽԸՐՈՎ,
 ԿԸ ԶԻՆՈՒԻ ՏԷԳՈՎ, ԿԸ ԶԻՆՈՒԻ ՍՈՒՐՈՎ,
 ՈՒ Կ՛ԵՐԹԱՅ ԱՄԷՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՎԱՏ
 ԱԶԳԻ ՄԸ ԿԸՌԻԻ ՄՂԵԼ ՅՈՒՍԱՀԱՏ...»:
 «ԱՅՍ ԴԱՆԱԿԸ» ՀԱՏՈՒԱԾ-1909- ԹՈՒՔԷՆ ՍԵԻԱԿ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ՎՐԷԺ ՈՒՌԲԷՆԵԱՆ]

Անիրաւուած ազգերուն մղած յուսահատ պայքարը նկարագրող Ռուբէն Սեւակին հարիւր տարիներ առաջ գրած այս տողերը, կը հաւատանք, թէ այսօրւան անարդար աշխարհին մէջ կատարուած դէպքերուն մարմնացումն են:

Մտածեցէք՝ հերոս Սերպ ազգին, իրենց միութիւնը պաշտպանելու համար տարած անյոյս պայքարը որ, մինչեւ այսօր, Մակեդոնիոյ մէջ, Արեւմտեան պետութիւններուն սադրանքներուն դէմ կը շարունակուի:

Մտածեցէք՝ Հայաստանի ժողովուրդին ներկայիս ենթարկուած ողբալի կացութիւնը, որ ժայթքելու պատրաստ հրաբուխի մը կը նմանի:

Եւ մանաւանդ մտածեցէք՝ Պաղեստինեան ժողովուրդին 1945-թ.ներէն ի վեր ենթարկուած անվերջանալի ողբերգութիւններուն դէմ ընդվզելով, երիտասարդներուն յուսահատութենէ մղուելով տարած ինքնասպանական եղեռնափորձերով պայքարը:

* * *

Այստեղ կը հրատարակենք նկարը մէկ քանի մը օր առաջ [8 Օգոստոս 2001-ին], Անգարայի մէջ, իրարու հետ տեսակցած երկու ճիւղներուն՝ Թուրքիոյ վարչապետ Պիլվէնտ Էճեմիթի և Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարօնի, ուր կը տեսնուին անոնց ձեռք ձեռքի տուած:

Եւ մեր մեծապատիւ պատմագետները և Հայաստանի այսօրուան "շատ հայրենասէր" քաղաքական ղեկավարները թո՛ղ նային այս նկարին և քիչ մը մտածեն: Թերեւս հասկնան իրականութիւնը:

Այն իրականութիւնը, որ 1985-թ.ներէն ի վեր կ'աղաղակենք, թէ՛ «Թուրքիա և Իսրայէլ նոյն պետութիւնն են: Եւ 24 Ապրիլ 1915-ին հայ ազգին դէմ կատարուած եղեռնը ծրագրող և գործադրողները, Հրեայ Սիոնիստները և Թուրք Իթթիհատականները եղած են»:

**ԱԾԽԱՐՀԻ ԱՄԵՆ
ԱՆԽԱՓԱՆԵ**
 ԻՐԵՆՑ ԱԶԳԻՆ ՀԱԴԷՊ ԿԱՏ
 ԴԷՄ ԸՆԴԿԶԵԼՈՎ, ՀԻ
 ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԵԱՄԲ ԿԱՏ
 ՎՐԻԺԱՌՈՒ ԵՂԵՐ

ԱԾԽԱՐՀԻ ՆՈՐ ՏԵՐԵՐԸ ԸԼԼԱԼ ՅԱԽԱԿՆՈՂ ՄԻ ՎՍՏԱՀԻԶ ՉԵՐ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒՉ
 ԱՅԼ՝ ՍՈՒ
 ԱՆԻՐԱԽՈՒԹԵԱՆ ԴԷՄ. ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ
 ՉԵՐ ԱՆԱՌԻԿ ԱԾՏԱՐԱՎ

«ԻՆՉ ԿՐՆԷՒ ԵՐԲ ԱԶԳ ՄԸ ՄԸՆԱՅ ՆՕ,
 ԶԵՌ-ՔԷՆ ԲԱՀ ՈՒ ԲՐԻՉ ԿԸ ՆԵՏԷ ՄԷԿԳ
 Կ՛ԵՐԹԱՅ ՀԱՂՈՐԳՈՒԻԼ Մ
 ԿԸ ԶԻՆՈՒԻ ՏԷԳՈՎ, ԿԸ Զ
 ՈՒ Կ՛ԵՐ
 ԱԶԳԻ Մ
 «ԱՅԻ



Ecevit ve Şaron korumo ordusuyula fotoğraflara böyle poz vermisti

Մինչեւ այն օրը, որ Հայաստանի պետութեան պատասխանատուները չդադրեցնեն իրենց երկդիմի և տարտամ քաղաքականութիւնը, և իրականութեան լոյսին տակ իրատես և խիզախ քաղաքականութիւն մը չորդեգրեն, հայ ազգը պիտի շարունակէ նորանոր ողբերգութիւններու նշաւակ դառնալ:

Սովետական Հայաստանի Ա.Գ. նախարար Ճօն Կիրակոսեան, այս խիզախ քաղաքականութեան ռահվիրան եղած էր:

Դժբախտաբար, հայ ազգը շատ բան կորսնցուց մեծ պատմաբանին կանխահաս մահով:

* * *
«ԱՉՔԻ ԴԷՄ ԱՉՔ»

9 Օգոստոս 2001-ի Հինգշաբթի օրը, ցերեկուան ժամերուն, հրեաներուն գրաման տակ գտնուող Երուսաղէմի արեւմտեան մասի "Pizzeria"ի մը մէջ, ահռելի ռումբ մը կը պայթի:

Ռումբը պայթեցնողը՝ ռումբը իր վրայ կրող Պաղեստինցի Իզզետին Ալ-Մասրի անունով 23 տարեկան երիտասարդ մըն էր:

Անոր կատարած ինքնասպանական եղեոնափորձին հետեւանքով կը սպաննուին 18 հոգի և կը վիրաւորուին 90 հոգիներ:

Սարսափելի ջարդ մըն է կատարուածը: Անմեղ պատանիներ, երիտասարդներ, մայրեր և հայրեր կը մահանան:

Բոլոր երոպական և ամերիկեան լրատու կայանները անմիջապէս տեղեկացուցին այս դաժան եղելութիւնը: Եւ մահափորձը որակեցին՝ «Պաղեստինցի տեռորիստներուն կողմէ կատարուած վայրագութեան նոր արարք մը»:

Հետեւեալ օրը, երոպական բոլոր թերթերուն առաջին էջերուն վրայ, մեծ նկարներով նկարագրուած էր այս սարսափելի մահափորձին մանրամասնութիւնները:

Նկարներուն մէջ կը տեսնուէին վիրաւոր հրեաներուն արիւնով ծածկուած մարմինները: Ծատ սրտաճմլիկ երեւոյթներ էին, որոնց նայիլն անգամ վրդով կը պատճառէր:

Եւ գրեթէ բոլոր թերթերը հարց կու տային, թէ հրեաները ինչպէ՞ս պիտի փոխադարձեն այս «տեռորիստական» արարքին և ինչպէ՞ս պիտի պատժեն անօրէն պաղեստինցիները:

Չէ՞ որ, հրեական կրօնքին վրէժխնդիր օրէնքը կ'ըսէ՝ «Ատամի դէմ ատամ, աչքի դէմ աչք»

* * *

Երոպական թերթերուն մեծ մասը, անձնասպանական եղեոնափորձը կատարող Պաղեստինցի երիտասարդը իր այս արարքը գործելու մղող պատճառին ինչո՞ւ (գրեթէ) չանդրադարձան:

Թերթերը չուզեցին Պաղեստինեան ողբերգութեան արմատները իջնել:

Մինչդեռ Պաղեստինեան "Hamas" կազմակերպութիւնը զեկոյցով մը տեղեկացուցած էր, թէ այս եղեոնափորձը կատարուած էր շաբաթ մը առաջ հրեաներուն սպաննած ութը պաղեստինցիներուն իբր փոխադարձութիւն:

Այս սպաննուած ութը պաղեստինցիներէն երկուքը, «Համաս» ի ղեկավարներ էին, իսկ մնացեալ վեցը՝ պատանիներ, մայրեր և հայրեր...:

Հրեաներուն պաղեստինցիներուն դէմ հալածանքը 1945-թ.ներուն սկսաւ:

«ԻՆՉՊԷՍ ՉՀԻԱՆԱԼ ԵՒ ՉՆԱԽԱՆՉԻԼ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ԶԱՐԵՐՈՎ ԿԸ ՊԱՅՁԱՐԻՆ ՈՒ ԿԸ ՄԵՌՆԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՍԱՐ»
Փարիզ - Նոյեմբեր 1989 - Յ. Չ.

Այդ թուականներէն յետոյ, միլիոնաւոր պաղեստինցիներէն մաս մը, հրեաներուն անոնց դէմ մղած պայքարին ընթացքին սպաննուեցան: Միւս մասն ալ իրենց հայրենի հողերէն արտուոյցուեցան հրեաներուն կողմէ, որ 1948-ին Իսրայէլի պետութիւնը կարենայ հիմնուիլ:

1945-էն յետոյ, մինչեւ այսօր, Պաղեստինի ժողովուրդին պատմութիւնը անլերջանալի պատերազմներու, տառապանքներու և պայքարներու շարք մըն է: Բայց Պաղեստինցի ժողովուրդէն հատած մըն ալ, հակառակ ջարդերուն, կռիւնէն մնացին իրենց հողերուն: Ասոնք դիմադրեցին հրեաներուն բոլոր հալածանքներուն: Դիմադրեցին՝ հրեաներուն յարտադրած բոլոր զրկանքներուն և կեանքի անտանելի պայմաններուն:

Պաղեստինցիներուն իրենց հայրենի հողերուն այսքա՛ն հայրենասիրական ոգիով փարիլը, բացառիկ երեւոյթ է:

[Եւ այս մէկը մանաւանդ, շատ օրինակելի կեցուածք մ'ըլլալու է հայ ազգին համար, որ փոքր դժուարութիւններու առջեւ ընկրկելով, զանգուածաբար կը ինձանայ իր հայրենիքէն, աւելի լաւ պայմաններու մէջ ապրելու յոյսով]:

Բայց ամենէն կարեւորը՝ հրեաներն ալ բնաւ չէին սպասեր Պաղեստինի ժողովուրդէն այսքան մեծ, վճռական ու յամառ հայրենասիրական դիմադրութիւն:

Այս դիմադրութիւնը իրենց ծրագիրներուն մէջ չէին նախատեսած: Այդ պատճառաւ հրեաները, ստիպուած եղան, նոր միջոցներու դիմելու: Եւ 1982-ին, իբր թէ Պաղեստինեան ահաբեկիչներուն կազմակերպութիւնը քանդելու համար, հրեաները գրաւեցին Լիբանանը:

Եւ 1982-ին «Sabra» և «Chatila»-ի «Camp»-ը ապաստանած Պաղեստինցի գաղթականները, հրեաներուն և իրենց խամաճիկներուն ձեռամբ, ջարդի ենթարկուեցան:

Այս ջարդերու կատարման հրամանը տուողը, Իսրայէլի այսօրուան վարչապետը եղող՝ Ariel Sharon-ն էր:

[Այս ջարդերէն գրեթէ քսան տարիներ ետք վերջապէս, մերօրեայ Պելճիքական դատարան մը, Արիէլ Շարօնին դէմ ամբաստանագիր հրատարակեց, ջարդարարութեան յանցանքով: Բայց Շարօնին կոնակը շատ զօրաւոր է: Ամերիկացիները, ոչ մէկ ատեն չեն թոյլատրեր, որ Իսրայէլը վտանգի ենթարկուի]:

1982-ին Սապրա-Շաթիլայի մէջ կատարուած ջարդերէն յետոյ, պաղեստինցիներուն դիմադրութիւնը հրեաներուն դէմ աւելի զօրացաւ, «Գրաւեալ հողեր» կոչուած Այսր-Յորանանի ու Կազայի մէջ:

Եւ 1987-ին հրեաները, այս անգամ ալ շատ սատանայական հնարք մը կիրարկել սկսան: Այսր-Յորդանանի ու Կազայի մէջ, պաղեստինցիներուն ապրած հողերուն վրայ, «Colon» կոչուող մոլեռանդ Հրեայ համայնքներով բնակուած «բերդաքաղաքներ» հիմնել սկսան, որ պաղեստինցիները բոլորովին իրարմէ անջատուին և չէզոքացուին:

Ասիկա Պաղեստինցիներուն վերջնական բնաջնջումը ըսել էր: Եւ այս «Քոլոն»ներէն յետոյ, "Intifada" կոչուող պաղեստինեան շարժումը սկսաւ: Իսրայէլեան զինուորներուն դէմ, Պաղեստինցի երիտասարդներուն քարերով մղուող պայքարն էր «Ինթիֆատա»ն:

Ասկէ ամենէն շատ մտահոգուողները ամերիկացիները եղան: Ասոնք վախը ունէին, որ արաբական ամբողջ աշխարհը ամերիկացիներուն դէմ կ'ելլէ: Եւ անոնք հրեաներուն ստիպեցին, որ Այսր-Յորդանանի և Կազայի մէջ, ինքնավար Պաղեստինեան վարչութեան մը կազմութիւնը ընդունին:

Եւ 1993-ին Ուաշինկթընի մէջ, մեծ շուքով, ամերիկացիներուն հովանաւորութեամբ, Իսրայէլ-Պաղեստինեան համաձայնութիւնը ստորագրուեցաւ:

Բայց սիոնական Հրեան միշտ Հրեայ կը մնայ: Ութը տարիներ տեւողութեամբ հրեաները, ինքնավարութեան խոստումներով, օրօրեցին Պաղեստինցիները:

Մինչ այդ՝ հրեաները, իրենց «Քոլոն» կոչուող բերդաքաղաքներով շրջապատեցին Այսր-Յորդանանի և Կազայի պաղեստինեան հողերը, որ պաղեստինցիները բոլորովին իրենց հակակշռին տակ կարենան պահել:

Ասիկա Պաղեստինեան անկախ պետութեան հիմնադրման երազին վերջ տալ ըսել էր:

Եւ 2000-ի վերջին ամիսներուն էր որ չարաշուք Ուրբաթ օր մը, Արիէլ Շարօն գիտակցաբար և պաղեստինցիները գրգռելու նպատակաւ, անոնց աղօթատեղիին մօտը գնաց... Այս ձեւով սկսաւ երկրորդ «Ինթիֆատան», որ իրենց դատի յաջողութիւնը խաղաղ օրինական ճամբով ունենալու մէջ յուսահատած Պաղեստինցիները կը մղէր գերագոյն զոհաբերութեան՝ ինքնասպանական հերոսական նուիրումով յառաջ մղել իրենց պահանջատիրական պայքարը, որ տասը ամիսներէ ի վեր կը շարունակուի, շատ ցաւալի ու արիւնոտ դէպքերով:

* * *

Արիէլ Շարօն ինչո՞ւ գիտակցաբար գրգռեց Պաղեստինցիները, ինչո՞ւ այս ձեւով, երկրորդ «Ինթիֆատա»յին պատճառ եղաւ:

Ինք զինուորական մըն է, և շատ մը զինուորականներուն նման, մանաւանդ Հրեայ մը ըլլալով՝ ուժին և զէնքին գերիշխանութեան կը հաւատայ:

Ան ուզեց, որ զէնքի ուժով կարգադրէ Պաղեստինեան հարցը:

Եւ այս պատճառաւ գրգռեց Պաղեստինցիները, որ «Ինթիֆատա»յով իրեն առիթ մը տան պաղեստինցիներուն վրայ յարձակելու: Եւ ան, իբր Հրեայ ղեկավար, շատ լաւատեղեակ էր, որ բոլոր աղքատ ժողովուրդներուն մէջ եղածին նման, Պաղեստինցիներուն ծինական աճի համեմատութիւնը շատ աւելի բարձր էր, հրեաներուն հետ բաղդատաբար:

Այս պատճառաւ ժամանակը պաղեստինցիներուն ի նպաստ կ'աշխատէր: Մանաւանդ Պաղեստինեան ինքնավար շրջաններուն մէջ, այս բազմաձևութիւնը աւելի շեշտուած էր:

Ա. Շարօն այս մտածումներով գրգռեց Պաղեստինցիները, որ ասոնք ապրտամբին և ինք իրաւունք ունենայ Պաղեստինեան ղեկավար դասակարգը "Terroriste" են ըսելով սպաննելու:

Այս եղանակով պաղեստինեան ժողովուրդը առանց ղեկավարի, (Շարք՝ էջ 4):

ԹԻԸ 154

ԱՇՆԱՐՀԻ ԱՍԵՆԷՆ ԱԶԴԵԾԻԿ ԵՒ ԱՆԽԱՓԱՆԵԼԻ ... (Շար. էջ 2-էն)

այսինքն առանց «գլուխի» պիտի մնար:

Եւ մինչեւ նոր ղեկավար սերունդի մը հասնիլը, նուազագոյնը երեսուն տարի կ'ուզէր: Մինչ այդ, իրենց դաւերով, պաղեստինեան ժողովուրդին «հաշիւը կը տեսնէին»:

Շատ հետաքրքրական է, Իսրայէլի մեծ Ռաբբունապետին այս մասին տուած յայտարարութիւնը:

Իսրայէլի «Մաարիւ» օրաթերթը, 27 Յուլիս 2001-ի թիւին մէջ կը հաղորդէ, թէ «Իսրայէլի պետութեան Askenaze մեծ Ռաբբունապետը, իր երաշխաւոր համաձայնութիւնը կու տայ Իսրայէլի կառավարութեան, որ սպաննուին Պաղեստինեան ճշդուած ահաբեկիչները»:

Այս որոշումին իմաստը հետեւեալն է. «Պաղեստինեան բոլոր ղեկավարներուն համար, ներառեալ Արաֆաթը, սպաննելու որոշում տրուած է»:

Մեր ընթերցողներն ալ նկատեցին, որ նոյն ռազմավարութեամբ, 24 Ապրիլ 1915-ին, Հայ Ազգին ղեկավարները սպաննուեցան սիոնիստ իթթիհատականներուն կողմէ:

Ա. Շարօն, Նոյեմբեր 2000-էն ի վեր (երկրորդ INTIFADA-ին սկզբնաւորութեան թուականէն), շուրջ քառասուն պաղեստինեան ղեկավարներ սպաննել տուաւ:

Եւ նոյնիսկ, Անգարա մեկնելէն քանի մը օր առաջ, երկու պաղեստինեան «Համաս»ի ղեկավարներ սպաննուեցան, և ասոնց կողքին՝ վեց հոգի՝ պատանիներ, մայրեր և հայրեր:

Շարօն պաղեստինցի ղեկավարներուն սպաննութիւնները կատարել կու տայ պաղեստինցիներու մէջ գտնուող իր լրտեսներուն տուած տեղեկութիւններուն օգնութեամբ:

Եւ Շարօն կը հաւատար, որ պաղեստինեան խնդիրը, այս պաղեստինցի ղեկավարներուն սպաննութեամբ, այլևս «գործը կարգի» դրած էր, և բոլոր «վտանգաւոր ղեկավարները», մօտ ատենուան մէջ, պիտի անհետանային: Եւ այս մօտալուտ յաջողութեան ուրախութեամբ մեկնեցաւ Իսրայէլի մեծ զինակիցը, դաշնակիցը եղող Թուրքիա, հոն տեսակցելու համար Պիլենտ Էճեւիթի հետ, որ իրեն պէս ճիւղ մըն է:

Ո՞վ գիտէ, թէ այս երկուքը, սատանայական ի՞նչ որոշումներ առին Անգարայի մէջ:

Եւ տեսնենք, թէ Թուրք-Իսրայէլական այս խորհրդաւոր տեսակցութենէն յետոյ,

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİĞİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

OLAY - 3

BABASI SIVASLI OLAN BİR ERMENİ GENCİNİN ANLATTIKLARI

BEN, İSTANBULDA DOĞDUM. ANNEM İSTANBUL DOĞUMLUDUR.

BABAM İSE 1904-TE SIVASTA DOĞMUS.

BEN LİSEYİ 1948 SENESİNDE BİTİRDİM.

O SENELERDE BASIMIZDA MİLLİ SEF İSMET İNÖNÜ VARDI.

1948 SENESİNDE, BİRDEN KIRK YILLIK DİKTATOR MİLLİ SEF İSMET İNÖNÜ, DEMOKRAT OLUVERDİ.

NASIL MI? İNGİLİZ ÇÖRÇİL SAYESİNDE. İSMET İNÖNÜ, 1939 DAN 1943-E KADAR ALMANLARLA ÇOK "FLÖRT" ETTİ. EGER STALINGRAD ALMANLARIN ELİNE DÜŞSEYDİ, ALMANLARLA BİRLİŞİP ERMENİSTAN ÜZERİNDEN RUSYAYA HÜCÜM EDİCEKTİ.

FAKAT HAVESİ KURSAGINDA KALDI MİLLİ SEFIN. STALINGRAD DÜŞMEDİ, VE AKSİNE ALMANLAR YENİLM-EYE BAŞLADILAR.

VE MİLLİ SEF MECBUREN İNGİLİZLERE DÖNDÜ.

VE ÇÖRÇİLİN EMİRLERİNİ HARFİYEN TATBİK ETMİYE BAŞLADI ÇUNKÜ ÇÖRÇİLİN DERDİ İMANI TÜRKİYENİN RUSLARIN ELİNE GEÇMESİNE MANİ OLMAKTI.

İNÖNÜ, ÇÖRÇİLİN İLK EMRİ OLARAK ALMANYAYA HARB İLÂN ETTİ. AMA NE BİCİM HARB BU? ALMAN-LAR UZUN ZAMANDAN BERİ BALKANLARDAN ÇEKİLMİŞLER, NERDE İSE ALMANYAYA DÖNECEKLERDİ.

FAKAT ÇÖRÇİL İÇİN MÜHİM OLANI, TÜRKİYENİN MÜTTEFİKLER SAFINDA GÖRÜNMEYİDİ.

SONRA ÇÖRÇİL İSMET İNÖNÜYE "DEMOKRAT OLUCAKSIN" EMRİNİ VERDİ. VE MİLLİ SEF İNÖNÜ DEMOK-RAT İNÖNÜ OLUVERDİ.

BUNEBİÇİM İS? DEVLET Mİ İDARE EDİYORSUNUZ? TİYATRO MU OYNUYORSUNUZ?

SEN ONA BAKMA. TİYATRO, MİYATRO, ÇÖRÇİL TÜRKİYİYİ MÜTTEFİK VE DEMOKRAT DEVLET OLARAK BÜTÜN DÜNYAYA YUTTURDU YA. ONA BAK.

VE RUSLAR BU İSTE AVUCUNU YALADI.

FAKAT GEL BAK KI BU DEMOKRAT OYUNU İSTANBUL GAYRİ-MÜSLÜMLERİNE DE YARADI.

1948'E KADAR GAYRİ-MÜSLÜMLER ÇÖPLÜ BİLE OLAMAZKEN, SÖZÜM ONA DEMOKRAT İNÖNÜ, LİSE BİTİREN GAYRİ MÜSLÜMLERE DE YEDEK SUBAY OLMA HAKKI VERDİ.

VE BEN 1949 SENESİNDE YEDEK SUBAY OLDUM. VE 1949 SENESİNİN SONBAHARINDA BABAMIN DOĞDU GU SEHIR OLAN SIVASTA YEDEK SUBAY OLARAK VAZİFEEYE BAŞLADIM.

SIVASTA İLK İS OLARAK BABAMIN BANA ÇOK METHETTİĞİ SIVASIN BÜYÜK ERMENİ KİLİSESİNİ ZİYARET ETTİM.

KİLİSEYİ MALZEME DEPOSU YAPMISLARDI.

FAKAT O VAZİYETTE BİLE KİLİSE YİNE ÇOK İHTİSAMLİ İDİ. DÜŞÜNÜN, İSTANBULUN EN BÜYÜK ERMENİ KİLİSESİ OLAN GALATASARAYDAKI ÜÇ HORAN KİLİSESİNDEN DAHA BÜYÜK BİR KİLİSEYİ MALZEME DEPOSU YAPMISLAR.

SİKINTIMDAN KİLİSENİN KARŞISINDAKİ KAHVEHANEEYE GİTTİM OTURDUM. BİR KAHVE İÇTİM.

BİR MÜDDET SONRA NE GÖREYİM? BİR BÖLÜK ASKER BAŞLARINDA BİR AST ÇAVUSLA GELDİLER ELLERİNDE KAZMA KÜREKLER KİLİSEYE YÖNELDİLER. KİLİSENİN İÇİNDE BULUNAN MALZEMİYİ DISARI TASIDIKTAN SONRA, ANLADIM KI KİLİSEYİ YIKMAYA ÇALISIYOLRAR.

ARTIK ORDA DURAMAZDIM... FAKAT BİR HAFTA SONRA MERAK ETTİM VE KİLİSEYİ NE YAPTIKLAR DİYE BAKMIYA GİTTİM.

BİR BÖLÜK ASKER KAZMA KÜREKLERLE ÇALISIYORLARI GENE. FAKAT KİLİSE OLDUĞU GİBİ YERİNDE DURUYORDU. BİR BÖLÜK ASKER KİLİSENİN BİR TEK TASINI BİLE SÖKEMEMİŞLERDİ.

ÜZERİMDE SUBAY ELBİSELERİ VARDI. VE ASKERLERİN KOMUTANI OLAN AST ÇAVUSUN YANINA GİTTİM, VE ONA SORDUM.

NEDEN YIKIYORSUNUZ BU KİLİSEYİ?

AST ÇAVUS SU CEVABI VERDİ: "KİLİSENİN YIKILMA TEHLİKESİ VAR"

VE BU CEVAP ÜZERİNE ARTIK DAYANAMADIM VE DEDİM KI: "UTANMAZ HERİFLER. BİR HAFTADAN BERİ, SİZİ SEYREDİYORUM. BİR BÖLÜK ASKER KAZMA KÜREKLERLE ÇALISTINIZ. FAKAT BİR HAFTADIR KİLİSENİN BİR TASINI BİLE SÖKEMEDİNİZ. VE BİR DE KALKIYORSUNUZ KİLİSENİN YIKILMA TEHLİKESİ VAR DİYORSUNUZ.

ALLAHTAN KORKUNUZ. YALANCILAR"

BU SÖZLERİ SÖYLEDİKTEN SONRA AYRILDIM KİLİSENİN YANINDAN.

VE ASKERLİĞİM BİTİNCEYE KADAR, BİR DAHA GİTMEYİ KİLİSENİN YANINA.

VE SENELER SONRA BİR MÜŞTERİMDEN ÖĞRENDİM KI, SIVASIN O MUHTESEM ERMENİ KİLİSESİNİ 1950 SENESİNİN NİSAN AYINDA DİNAMİTLE YIKMIŞLAR.

B. Q.

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ... ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ՍԿՍԻ ... (Ծար. էջ 1-էն)

նաև թուրք մտաւորականը, և իմ ու անոր Ելոյթները համահունչ էին: Թուրք մտաւորականը թէ՛ կ'ընդունէր որ թուրքերու կողմէ հայերու դէմ ցեղասպանութիւն իրականացուած է, թէ՛ Թուրքիոյ կոչ կ'ընէր որ ճանչնայ հայոց ցեղասպանութիւնը: Եւ այդ նպատակով ան արդէն նախաձեռնած ու Եւրոպա ապրող թուրքերէն հաւաքած էր շուրջ 11 հազար ստորագրութիւն: Այս ոգիով ընթանալու են բանակցութիւնները:

...Հաշտութեան գործընթացին սկիզբը պէտք է դրուի այն ժամանակ, երբ Թուրքիան կ'ընդունի Հայոց Ցեղասպանութեան փաստը»:

Իր կողմէ հայրենի գրող և հրապարակագիր Զօրի Բալայեան «...Արժանապատուութեան ոտնահարում», «դաւաճանութիւն» և «վտանգաւոր լկտիութիւն» կը կոչէ «հաշտութեան ձեռնարկը»:

որո՞ւ գլխուն փորձանք պիտի գայ՝ Սուրիո՞ւ, Իրաքի՞, թէ՞ Հայաստանի գլխուն: Ժամանակը պիտի ցուցնէ...

...Իբր թէ Պիլէնտ Էճեփ և Արիէլ Ծարօն, Անգարայի մէջ, պաղեստինեան հարցին պատճառաւ վիճաբաներ են:

Ո՞ր տեսնուած է, երկու վարչապետներու թելեվիզիոնի կամ միգրոֆոնի առջև վիճաբանիլը:

Այս երկու վատահամբաւներուն կատարածը՝ իսկական «թատրոն» մըն է, արաբներու «աչքին փոշի փչելու» համար: Այս տեսակի բեմադրութիւններուն և սուտերուն վրայ ագռաւներն անգամ կը խնդան:

* * *

Բայց Ծարօնի ուրախութիւնը շատ չտեսեց:

Անոր Անգարայէն վերադառնալէն քանի մը ժամ յետոյ, պաղեստինցի երիտասարդ մը, ինքնասպանական եղանակով եղեռնափորձ մը կատարեց, որուն հետեւանքով ամբողջ Իսրայէլի ժողովուրդը սուգի մատնուեցաւ:

Այս ցաւալի վրիժառութիւնը ապացոյց մըն է, թէ անհրաւուած և յուսահատած հոգիները ի՞նչ ողբերգութիւններ կրնան կատարել, որքան ալ թշնամի՞ն շատ արդիական և սարսափազդու զէնքեր ունենայ ու զրահապատ աշտարակներու մէջ գտնուի:

Ծարօնին «հաշիւները» սխալ դուրս ելան:

Ան կարծեց, թէ թուրքերուն 24 Ապրիլ 1915-ին հայերուն «գլուխ»ները կտրելուն նման, Պաղեստինցիներուն ալ «գլուխները» կտրելով, պաղեստինեան հարցը պիտի կրնայ լուծել:

Թուրքերը Հայ Ազգին «գլուխները» կտրելէ յետոյ, Ազգը շատ դիրուքեամբ ցեղասպանութեան ենթարկեցին: Ծարօնն ալ, ղեկավարներուն գլուխները կտրելէ յետոյ, պիտի կարենա՞յ պաղեստինցի ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկել: Թէ ոչ, անհրաւուած պաղեստինցի ժողովուրդին երիտասարդ սերունդը, մինչև «Արդարութեան ժամ»-ին հնչելը, իսրայէլացիներուն գլխուն, Դամոկլեան սուրերու նման, կախուած պիտի մնան:

Որովհետև պաղեստինցի երիտասարդները այլևս սորվեցան, թէ՛ «ՀԱՅՐԵՆԻԹԻ ՀԱՄԱՐ ԶՈՂՈՒԻԼԸ՝ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է»:

**ՀՐԱՎԻ ԹՐԻԲՈՒՆԸ ԲՆԱԳՐԻՆ ԷԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԵԲՐՈՒՆ (ԻԲՐ ԹԷ) ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԴԷՊՔ - Գ.**

ՀԱՅՐԸ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԵՂՈՂ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

Ես Պոլիս ճնած եմ. մայրս ալ ծնունդով Պոլսեցի է. Մինչդեռ հայրս՝ 1904ին Սեբաստիա ծներ է: Ես Լիսէն 1948-ին աւարտեցի. այն տարիները, գլխերսուս վրայ «Milli Sef» [Ազգային ղեկավար] İsmet İnönü-ն կար:

1948-ին քառասուն տարուան մեծատէր ղեկավար İsmet İnönü-ն մէկէն ժողովրդավարի վերածուեցաւ:

Կը հարցնէք, թէ ինչպէ՞ս եղաւ: Անգլիացի Չէօրչիլին շնորհիւ:

Իսմէթ Ինէօնիւ-ն, 1939-էն մինչև 1943 թուականը, գերմանացիներուն հետ շատ սիրաբանեցաւ: Եւ եթէ Միջախնկրատը գերմանացիներուն ձեռքը իյնար, գերմանացիներուն հետ միասին, չայստանի վրայէն, դէպի Ռուսիա պիտի յարձակէր:

Բայց «փափաքը փորը մնաց» Ազգային ղեկավարին:

Միջախնկրատը չի նկատու. ընդհակառակը՝ գերմանացիները պարտուիլ սկսան:

Եւ Ազգային ղեկավարը, ստիպողաբար, Անգլիացիներուն դարձաւ:

Եւ Չէօրչիլին հրահանգները, բառ առ բառ, գործադրել սկսաւ:

Որովհետև Չէօրչիլին ամբողջ «տերտ»ը թուրքերուն ուսերուն ձեռքը իյնալուն արգելք ըլլալ էր: Ինէօնիւն՝ Չէօրչիլին առաջին հրամանին վրայ՝ գերմանացիներուն դէմ պատերազմ հռչակեց:

Բայց այս ի՞նչ տեսակ պատերազմ է:

Գերմանացիները, երկար ժամանակէ ի վեր, Պալքաններէն քաշուած էին, և ուր որ է՝ Գերմանիա պիտի վերադառնային:

Բայց Չէօրչիլին համար կարեւորը Թուրքիոյ՝ Դաշակիցներուն կողքին երեւալն էր:

Յետոյ Չէօրչիլ՝ Իսմէթ Ինէօնիւ-ին «ժողովրդավար պիտի ըլլաս» հրամանը տուաւ: Եւ Ազգային ղեկավար Ինէօնիւ ժողովրդավար Ինէօնիւ-ի վերածուեցաւ:

Այս ի՞նչ տեսակ գործ է:

Պետութիւն կը կառավարէք, թէ՞ թատրոն կը խաղաքք:

Դուն այդ բանին մի նայիր: Թատրոն, մատրոն... Չէօրչիլը, Թուրքիան դաշակից և ժողովրդավար պետութիւն մըն է ըսելով, ամբողջ աշխարհին կլլեցուց. դուն անոր նայէ:

Եւ ուսերը, այս գործին մէջ, «ափերնին լցնցին»:

Բայց եկէք, նայեցէք, որ ժողովրդավարութեան խաղը Պոլսոյ ոչ-իսլամներուն օգտակար եղաւ: Մինչև 1948 ոչ-իսլամները, որ աղքատաւաք անգամ չէին կրնար ըլլալ, ժողովրդավար Ինէօնիւն Լիսէն աւարտող ոչ-իսլամներուն ալ պահեստի սպայ ըլլալու իրաւունքը տուաւ:

Եւ ես 1949-ին պահեստի սպայ եղայ, և 1949-ի աշնան, հօրս ճնած քաղաքը եղող Սեբաստիոյ մէջ, իբր պահեստի սպայ ըլլալով պաշտօնի սկսայ:

Սեբաստիոյ մէջ, առաջին գործ ըլլալով, հօրս շատ գոված Սեբաստիոյ հայկական մեծ եկեղեցին այցելեցի:

Եկեղեցին մթերանոցի վերածած էին: Բայց այդ վիճակին մէջ Նոյնիսկ, եկեղեցին Նորէն շատ շքեղ էր: Երեւակայեցէք՝ Պոլսոյ ամենամեծ եկեղեցին եղող Կալթասարայի Սուրբ Երրորդութեան եկեղեցիէն ալ աւելի մեծ եկեղեցին՝ մթերանոց ըրած էին:

Նեղութենէս եկեղեցւոյ դիմացը գտնուող սրճարանը գացի նստայ, սուրճ մը խմեցի:

Քիչ յետոյ, ի՞նչ տեսնեմ— զօրախումբի մը զինուորները, ենթասպայի մը ղեկավարութեամբ, բաի ու բրիչներով եկան և դէպի եկեղեցին ուղղուեցան: Յետոյ տեսայ, թէ եկեղեցիին մէջ գտնուող ապրանքները դուրս հանել սկսան, և նկատեցի, թէ եկեղեցին փլցնելու կը պատրաստուին:

Այլևս հոն չէի կրնար մնալ:

Յետոյ, շաբաթ մը վերջ հետաքրքրուեցայ, և եկեղեցին ի՞նչ ըրին ըսելով նայելու գացի:

Ձիւտուրները դեռ հոն էին և բաի ու բրիչներով կ'աշխատէին, բայց եկեղեցին կանգուն վիճակով իր տեղը կեցած էր:

Եւ զօրախումբ մը զինուոր, եկեղեցիին մէկ քարն անգամ տեղէն չէին կրցած հանել:

Սպայի հագուստովս էի, և զինուորներուն ղեկավարը եղող ենթասպային քով գացի և իրեն հարցուցի.

«Ինչո՞ւ կը փլցնէք այս եկեղեցին»:

Ենթասպան ինձի սա պատասխանը տուաւ.

«Եկեղեցիին փլչելու վտանգը կայ»:

Այս պատասխանէն յետոյ, այլևս չկրցայ հանդուրժել և ենթասպային ըսի.

Վերադարձայ տարիներ ետ՝ վեց եօթ... և աւելի: Համաշխարհային չափանիշով վերիվայրումներ էին... Փոքր տարիքէս եղած եմ գաղափարի մարդ, տեսիլք ու հաւատք ունեցող: Ցաւով ականատես եղայ ընկերվարական համակարգի փլուզման, Խ. Միութեան տարբադարումին: Իրմով աշխարհայեացք մը, փիլիսոփայութիւն ու ընկերային դրութիւն մը կը կէր, մեղքովը միջազգային յետադիմութեան, ներքին գործակալներու, մասամբ ալ սխալներուն, բայց ոչ մէկ պարագային մեղքովը Գաղափարախօսութեան մը որ, իմ անձնական համոզումով, եղած է ու կը մնայ ամենանահիշդն ու արդարը:

Այս փոփոխութիւնները սարսեցին աշխարհը: Մեծ էր Ընկերվարութեան բշտամիներուն հրեռանքը: Իրենք եւս այդքան դիրին և արագ չէին պատկերացներ այս վերիվայրումը որ աշխարհը կը դարձնէր միաբեւեռ, զինք կ'առնէր սիոնա-ամերիկեան կըրունկին տակ, նաեւ անսահման յուսարեկութիւն ու վիշտ պատճառելով աշխարհի ժողովուրդներուն, որոնց համար Ընկերվարական համակարգը պատուարն էր Արդարութեան, զիրենք պաշտպանող Զարիքի ու ժերուն և ազգային ու ընկերային շահագործումին դէմ:

Ուրեմն մեքեմ եւս, Լիբանանի մէջ, հայկական իրականութեան ներս, յառաջդիմական ու ճախակողմեան հակում ունեցող ընկերվարական գաղափարախօսութեան հաւատացող մարդիկ, միջոց մը ունեցանք հիասրափութիւններ: Բայց շուտով որոշեցինք հակազդել նահանջի ու յոռետեսութեան ալիքին, որ կը ստեղծուէր Ամերիկեան և ընդհանրապէս Արեւմտեան ծանօթ Սպասարկութեան շրջանակներուն ու ասոնց մունետիկներուն կողմէ որ խուճապ, «բանիք» ստեղծեն: Յետընթացը նուազագոյնի պէտք էր հասցնել:

ԲԱՅ ՆԱՄԱԿ «ՆԱՅԻՐԻ»-Ի ՄՆԱՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻՆ [ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Մարդկութեան պատմութեան մէջ, ժողովրդային յեղափոխական ուժերուն փորձառութիւնը այդպիսի անկում-նահանջի ծագօք է: Պատահած է անցեալին ևս: Այդ պատմական տեղատուութիւնները տեղի ունեցած են ճնշուած մարդոց կողմէ բնութեան և մարդկային ընկերութեան զարգացման հիմնական օրէնքներուն իրենց անծանօթ ըլլալուն պատճառով: Անկումայնութիւն կը տիրէ ընկերային լուրջ տուեալներուն անտեղեակ ըլլալու և զանոնք գիտականօրէն չմեկնաբանելու հետեւանով: Այսպէս կ'ըսեմ որովհետեւ համոզուած եմ, որ ներքին պատճառները կը մնան հիմնական որոշիչ կողմ, իսկ արտաքինները՝ երկրորդական:

Պէտք էր հակազդել անկումայնութեան, հոգե-բարոյական նահանջին, և դիրքերը ջգել: Այս մէկը կրնային ընել հայ յառաջադէմ, ազգային և ընկերային հարցեր գիտականօրէն վերլուծելու կարող, ընկերութեան հանդէպ պատասխանատուութիւն ունեցող մարդիկ, որ բանաձեւէին տեսակէտ և բանային նոր յառաջընթացի ուղի ժողովուրդին առջեւ, զինք լաւատեսութեամբ սոգորել:

«ՆԱՅԻՐԻ»-ի ծնունդը այս անհրաժեշտութեան մէկ արդիւնքը կը նկատեմ: Ան կոչուած էր պատասխանատու դերակատարութեան հայ իրականութենէն ներս՝ Սփիւռք և Հայրենիք միասին վեր առած:

Ինքնա եղած եմ, 1995-էն սկսեալ մանաւանդ, Դիմադրութեան կողմնակիցներէն, մերժելով ամէն նահանջ, վերատեսչականութիւն և ուրացում: Իմ տեղը ընկրկում չհանդուրժող գաղափարակիցներուս փաղանգն էր: «Նայիրի»-ն ընտրեցի:

Այդ օրերուն հայկ. մամուլին մեծ մասը ոգեւորուած էր Խորհրդային իշխանութեան կազմալուծումով, նաեւ Հայաստանի մէջ: «Անկախութիւն»ը զինովցուցած էր շատերուն, հաշիշի պէս: Բայց թէ ինչ էր իմաստը և նպատակը անկախութեան՝ շատ քիչեր զայն գիտէին: Եւ այնինչ, որ կը փառաբանուէր, չէր այն իրաւանկախութիւնը որուն կը կարօտէր Հայաստանը այդ օրերուն: Ո՛չ ալ հիմա:

Այսօր, տասը տարի ետք, նոր հիասթափութիւն կը տիրէ: Կարծես, թէ անկախութիւնը իրմէ սպասուածին հակառակ արդիւնքը տուաւ: Եւ սակայն, մեղաւորը Անկախութիւնը չէր, այլ անոր սխալ ըմբռնումը և կիրարկումը մանաւանդ: Երկիրը թշուառացուցած, հայութենէ պարպած, մշակոյթ ու գիտութիւն ամլացուցած, յոռետեսութիւն ներշնչող անկախութիւն մը կը նմանի ամէն

ԲԱՅ ՆԱՄԱԿ «ՆԱՅԻՐԻ»Ի ՄՆԱՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԼԻՆԿԻՐԵԱՆԻՆ [ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

ինչի, բացի ճշմարիտ ինֆնիշխանութենէ:

Այսուհանդերձ, խարուսիկ երազէ տարուածները քիչ թիւ չեն կազմեր ներկայիս ալ: Բայց լաւ է, որ մարդիկ երբայով ուշքի կու գան, կը գիտակցին և կը վերադառնան ճիշդ գծին: Կը գիտնան ընտրութիւն կատարել հայկ. մամուլի օրկաններուն միջեւ, գնահատել զանոնք, հետեւիլ անո՛ր, որ ճիշդ ուղղութեամբ կ'առաջնորդէ հասարակութիւնը:

Ես և իմ գաղափարակիցներս, ինծի պէս մտածող, կատարած ենք մեր ընտրութիւնը:

Հանելի է ինծի համար հաստատել, որ «ՆԱՅԻՐԻ»ն մեր ուղեցոյցն է, իմ և ինծի պէս մտածողներուն համար: Մենք ստեպ կը մէկտեղուինք, իմ մանկութեան ընկերներէս (որ յետագային գաղափարակից ալ դարձաւ) մէկուն բնակարանը: Կը կարդանք թերթին յօդուածները մէկ առ մէկ և կը կողմնորոշուինք:

Նոյնքան հանելի է ինծի համար վկայելը, որ Յովհաննէս Չիլինկիրեանի յօդուածները լաւագոյններէն կը դատուին: Բարեկամիս տիկինը որ բանիմաց հայուհի է, կ'ըսէ. «Նս շատ կը հաւնիմ Չիլինկիրեանի գրութիւնները»: Պէտք է խոստովանիմ նաեւ, որ դեռ յարած չէի «ՆԱՅԻՐԻ»ին, մեր միջեւ կապ չկար, երբ առաջին անգամ Յ. Չիլինկիրեանի անուան ու գրութիւններուն մասին լսեցի ընկերոջս ընտանեկան յարկի տակ: Իր տիկինը կը կարդար թերթը և մեզ հաղորդակից կը դարձնէր բովանդակութեան: Ինք եղաւ զիս «ՆԱՅԻՐԻ»ին եւ... Չիլինկիրեանին մօտեցընողը, որուն համար շատ ուրախ եմ:

Յարգելի Պրն. Յ. Չիլինկիրեան.

Մենք, այս օրերուն, պէտք ունինք համարձակ, ճշմարտախօս ու անկեղծ գրիչներու: Յառաջադէմ, պարկեշտ և յանդուգն լեզուները անբաղձալի են հիմա ծանօթ կողմին համար...: Ձեզի պէսները մատի վրայ կը հաշուուին այսօր: Շատեր, որոնք անդրդուելի հայրենասէր ու գաղափարական մարդ կը ճանչցուէին դեռ վերջերս, այսօր գոյն ու տեսակէտ փոխած են: Դարձեր են պնակալէզ, ծառայող սա կամ նա Սպասարկութեան: Բարեացակամութիւն կը խնդրեն իրենց երէկի հակառակորդէն: Կը մրոտեն ինչ որ փառաբանած էին երէկ: Կ'անգոսնեն Խորհրդային իշխանութիւնը որուն առջեւ երդում-պատառ կ'ըլլային մօտ անցեալին, կը ծնէին ատեն մը, կը պարգեւատրուէին ալ: Ինքզինքնին բարեկամ ցոյց կու տային անոր: Այժմ ալ, «լաւ մարդ երեւնալու համար» բերաննին կը բանան որ նախ քան մը նետեն «բռնատիրական անցեալ»ին վրայ, խաչ մը հանելու պէս...:

Ձեր յօդուածները, Պրն. Չիլինկիրեան, ինքնապաշտպանութեան լաւագոյն զէնքեր են յառաջադէմ հայութեան համար:

Ժողովուրդներու մօտ հերոսները կը մկրտուէին պայքարի դաշտին վրայ: Նուիրեալ քաջամարտիկներուն վերջին հոգը եղած է իրենց կեանքի փրկութիւնը: Մենք ունեցած ենք և ունինք այդպիսի հարիւրաւոր հերոսներ: Հայ ժողովուրդի արդի պատմութեան մէջ կ'անմահանան ցեղասպանութեան զոհեր՝ Փարամազ և իր ընկերները, Ռուբէն Սեւակ և ուրիշ մտաւորականներ, ու... Շատ քան ինքնին...

ԲԱՑ ՆԱՄԱԿ «ՆԱՅԻՐԻ»Ի ՄՆԱՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻՆ [ՎՐԷԺ ԲՈՒԲԷՆԵԱՆ]

Ստ. Շահումեան ու շատ յեղափոխականներ, իսկ աւելի ուշ՝ Սարգիս Տիրունի, Միհրան Աղազարեան, Մանուշեան -որոնք նախընտրեցին նահատակուիլ պատնէշի վրայ, քան թէ մասնիկ մը նահանջել իրենց վեհ համոզումներէն, Ազգի ու Հայրենիքի շահերու պաշտպանութեան սրբազան դատէն:

Յարգելի Յ. Զիլինկիրեան՝ ձեր Յ Յուլիս 2001 թ. յօդուածը, լոյս տեսած «ՆԱՅԻՐԻ»ի մէջ, Եուկոսլաւիոյ մէջ կատարուող ողբերգութեան շուրջ, որքան դաստիարակիչ, նոյնքան խորաբան փանց տեսութիւն էր, որ պատասխանատուութեան տակ կ'ատնէ Նոր Գաղութատիրութիւնը որ, Օսմանեան կայսրութեան ու Սիոնիզմի հետեւորդ կ'ընթանայ:

Դուք իրաւացի էք. Սլաւ-Սերպ ժողովուրդները և Հայութիւնը եղբայրացած են նոյն ճակատագրին մէջ: Կը մնան իրարու բախտակից նաև այսօր, ենթակայ Արեւմտեան պետութիւններու դաւադրութիւններուն:

Եւրոպական պետութիւնները, որպէս լծակից Ամերիկեան ֆառաքականութեան, ինքզինքնուն տուած են «Խնամակալ»ի դեր, որ կը ձգտի մարդկութիւնը դարձնել գերին իրենց դրամին, զէնքին ու իշխանութեան: Իրենց գաղափարախօսութեան հիմքը կը մնայ Սիոնիզմը: Իսկ լաւագոյն դաստիարակը ժողովուրդներուն համար, իրենց վերջին հինգ դարերու ազատագրական պայքարներու փորձառութիւնն է, Օսմանեան-Սիոնական և Արեւմտեան Կայսերապաշտութեան ու Գաղութատիրութեան դէմ մղուած մարտընչումներուն ընթացքին շահուած:

Մեծայարգ Պրն. Յ. Զիլինկիրեան, ձեր գրութիւնները ինչպէս լուսարձակ, կը լուսաւորեն մեր ժողովուրդի դէպի ապագայ տանող մութ ուղին:

Յատկապէս Սփիւռքի յառաջադէմ հայերուն իմացական փարոսներէն մէկն կը հանդիսանաւ, ամբողջ արտասահմանի տարածքին և նաեւ, ինչո՞ւ չէ՝ Հայաստանի ալ, ուր լսած եմ, որ կը կարդան ձեզ:

Ժողովուրդ մը որ ունի ձեզի պէս ազատ մտքի ու հատու գրիչի տէր և ուղեցոյց առաջնորդներ, համոզուած ենք, որ իր ազգային և ընկերային արդար վրէժխնդրութեամբ, անպայման կը յաղթանակէ:

Թո՛ղ մշտադալար և ազդու մնայ ձեր գրիչը: Ընդունեցէք լաւագոյն բարեմաղթութիւններս որոնք, վատահ եմ, իրենց մէջ կը խտացնեն նաեւ, ինծի պէս մտածողներուն զգացումները: Թո՛ղ կանգուն մնայ «Նայիրի»ն, մեր միջնաբերդը և պատգամախօսը:

Ձեր գրութիւններուն չյագեցող ծարաւով՝
ԱՐՏԱՇԷՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՈՓԻՆ ԱՐԱՐԱՏ ԿՈՅՍԻՆ
ԲԻԻՋԱՆԴ ԽԱԽԱՄԵԱՆ

Գարնան երեկոյ, գեփիւրը մեղմի՛կ,
 Ուրուակա՞ն թէ տեսիլք...
 Կարծես՝ մի ոգի՞, կո՞յս սպիտակ հագած,
 Շրջում էր մտայոյ՛գ, շուարած:

Դէպի վեր և դէպի վար սրտայոյգ
 Նայում էր նա ազաչանեով,
 Ի՞նչ կար վերը և վարը ո՞վ,
 Վերը երկինք և վարը ճամբան ուղեցոյց:

Ես հեռուից, ծառի մը տակ պահուրտած,
 Զգացումէս մի քիչ յուզուած
 Փնտռում էի՝ նրա փնտռած
 Մէկ վեր՝ մէկ վարը՝, բա՛յց... անիմաստ:

Եղաւ մայրամուտ. տիրեց մթնշաղը...,
 Նշմարում էի նրա մորմոքը,
 Ես ալ զգացի՝ ի՛մ սրտի ցաւը.
 Դժուա՛ր էր գիտնալ կոյսին պահանջը:

Մութն էր արդէն լոյսին իշխում...
 Նաշխուն աստղեր պլպլալէն
 Լոյս երգերով շրջապատուած
 Խօսում էին ինձ հետ արդէն...
 Մնացի այդտեղ, չերթալ՝ բաժանուած,
 Ըսի..., չըլլա՞յ, կոյսը խելագարուա՛ծ:

Հանդարտ սիրտս՝ ինձ դէ՛մ բողոքեց՝,
 Գնա՛ մօտեցի՛ր, հասկըցիր գոչե՛ց...,
 Ան քու անցեալն է, և չէ ուրուական,
 Սրտակից էոյրն է, ամբողջ հայութեան:

Բառական էր՝ նա մօտեցել տեսնով
 ձիւնասպիտակ,

Ես ճայնով մը հարազատ ըսի յստակ,
 - Քոյր իմ բարև, ինչ բան ես կորցրած...:
 Ան՝ հիասթափ, վեհանձն ու վսեմ, գոչե՛ց.

«Փնտռում եմ՝ հարազատներն իմ կորսուած,
 Թիւրք խուժաններ խոշտանգեցի՛ն
 Ճամբաներուն վրայ այս ու այնտեղ նետեցի՛ն:
 Հարցնում եմ Տէր անմեղաց,
 Նահատակներն իմ ուր են քաղուած»:

Ան փոքորկուեց... կայծակնահար
 Վրէ՛ժ անէ՛ծք վեր ու վար,
 Պիտի կանգնեմ, կամֆի կամուրջը նպատակ,
 Դէպի Արագածը կակաչներով պսակ պսակ.
 Ամէն մի կակաչ պիտ՝ ծնանի մի նոր Հայկ:

Պիտի անցնիմ այդ լուսաւոր կամուրջէն՝
 Եկուր ինձ հետ եղբայր իմ հարազատ,
 Սպասեցիր... և հասկցար իմ ցաւէն՝,
 Ես ոգին եմ Հայութեան տանս մէջը՝
 Բռնարարուած ու քանտարկուած...
 Իշխանուի եմ ես, և անունս է ԱՐԱՐԱՏ:
 Պէյրուք 2001

ԾԻԾԵՆՆԱԿԱՐԵՐԴԻ... (Շար. էջ 1-էն)

Սրբութիւնը զլացաւ մեզի շնորհել և
 բաւականացաւ «Մեծ Եղեռն» բառը
 գործածելով, որ գուցէ միւսին հո-
 մանիշ նկատուի՛, սակայն վստահ, որ
 առաջինին չափ իմաստալից ու տա-
 րողունակ չէ, ո՛չ ալ բնորոշիչ:

Արդեօ՞ք այս վերապահութիւնը
 հետեւանք է «Պապին Հայաստան այ-
 ցէն առաջ Անգարայի կողմէ Վատի-
 կան դրկուած նամակին զգուշացը-
 նող, որ Ս. Պապը խուսափի արտա-
 սանել «ցեղասպանութիւն» բառը,
 որ կրնայ լարել շրջանի երկիրներուն
 միջեւ յարաբերութիւնները»-ինչպէս
 գրած է բրիտանացի «Միլիթեր» բերբը:

«Յարաբերութիւնները չարել»ու
 պատրուակով արդեօ՞ք պէտք էր
 ճշմարտախօսութիւնը գոհաբերել:

Ակնդէ՛տ կը սպասուէր, տարիներ
 ի վեր, Ծիծեռնակաբերդի Անմար
 Կրակին առջեւ [մանաւանդ այստեղ,
 ա՛յո] արտասանուելիք «մոզական
 բառ»ին որ, ցաւ ի սիրտ հաստա-
 տենք՝ չսուեցա՛ւ:

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2001-ԻՆ,
 ԹՈՒԼՈՆԻ «ԱՊՐԻՍ» ԱԿՈՒՄԲԻՆ ԱՅՅԸ...
 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ

7 Հոկտեմբեր 2001, Կիրակի օր, հանոյ՛ք ունեցանք Ռուբէն Սեւակի անուան Յիշատակի Տան մէջ ընդունելու այցելութիւնը Թուլոնի «Ապրիս» ակումբին անդամներուն, ի ներկայութեան Շամիրամ Սեւակի:

Այս այցելութիւնը, իր տեսակին մէջ, առաջինն էր:



«Ապրիս»ի անդամներու խմբանկար, լուսանկարուած Ռ. Սեւակի «Յիշատակի Տուն»ի մէջ, ընկերակցութեամբ Շամիրամ Սեւակի (նստածներու շարքին աջէն դէպի ձախ՝ երկրորդը) և Յովհաննէս Զիլինկիրեանի (կանգնածներուն աջէն ձախ շարքին առաջինը) հետ: Նստածներու շարքին ձախէն աջ առաջինը՝ «Ապրիս»ի նախագահուհի Տիկ. Մարիս Կրիկորեան:

Թէեւ, 1986-էն ի վեր շատ մը ծանօթ անձնաւորութիւններ այցելած էին Ռ. Սեւակի Յիշատակի Տունը, ինչպէս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ., Երուսաղէմի Պատրիարք՝ Թորգոմ Արքեպս. Մանուկեան, նաեւ մեծ բիւով կրօնական և աշխարհական ծանօթ հայ անձնաւորութիւններ:

Բայց առաջին անգամն էր, որ ֆրանսահայ կազմակերպու-

թիւն մը՝ Թուլոնի «Ապրիս» ակումբի անդամները, երկար և յոգնեցուցիչ ճամբորդութեան մը յանձնառու դառնալով, ձեւով մը «Ուխտագնացութիւն» կը կազմակերպէին՝ այցելելով Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը:

Սրտանց կը շնորհաւորենք այս այցելութիւնը կազմակերպող Թուլոնի «Ապրիս» ակումբին անդամները և իրենց ժրաշան ատենապետուհի՝ Տիկ. Մարիս Կրիկորեանը:

Անոնք լաւ հասկցած էին, որ հայութիւնը կրնայ «ապրիլ» միայն իր արմատներուն կառչելով, ինչպէս որ արդէն կը վկայէ Թուլոնի հայկական ակումբին անունը՝ «ԱՊՐԻՍ»:

Այս առիւ կ'ուզենք մեր շնորհակալութիւնը յայտնել Լիոն քաղաքի «Ֆրանս-Արմէնի» ամսաթերթին և բերթի աշխատակից էլիզ Ունանեանին, որ իրենց գրութիւններով ֆրանսահայ համայնքին աւելի մօտէն ծանօթացուցին Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը:

RENCONTRE AVEC LE MÉDECIN-POÈTE MARTYR ASSASSINÉ ROUPEN SÉVAG

Un article paru dans la Presse arménienne nous a mis "l'eau à la bouche". Entre l'envie de visiter la Fondation Roupen Sévag, rencontrer sa famille, et la réalisation de ce souhait... il a suffi d'un appel téléphonique à son neveu, Hovannès Tchilinguirian... et tout s'est arrangé pour la Saint-Serge [soit le 7 Octobre 2001].

Le mot "fondation" nous avait induit en erreur: j'imaginai, peut-être pas le Madénadaran, mais presque... Heureusement pour nos hôtes que nous sommes venus à douze ! Les quelques 250 oeuvres de Maîtres arméniens sont pieusement exposées et protégées: Aïvazovski, Alhazian, Carzou, Edgar Chahine, Zareh Moutafian...

Sans oublier les documents précieux et personnels de Roupen Sévag: ses photos, ses diplomes, ses manuscrits.

Depuis, nombreux sont ceux qui regrettent de n'avoir pu se joindre à notre groupe.

La fille du poète, Chamiram, nous a éblouis par le pétitement de son regard. Son élocution pleine de chaleur à l'évocation de son cher papa, dont le manque est encore brûlant: une lettre palpitante d'émotion, adressée à son père qui a disparu alors qu'elle avait 9 mois, a serré bien des gorges. Elle n'a réussi à l'écrire que 70 ans après la mort de celui-ci.

L'hérédité n'est pas un vain mot: Chamiram a les "réflexes" poétiques de son père, la force de sa mère, d'origine allemande, qui a renié son pays, ami des assassins de son mari. Aucun mot d'allemand n'a été prononcé depuis dans ce foyer orphelin. Par contre, les enfants, Lévon et Chamiram ont été élevés dans le souvenir de leur père, ont reçu la culture de leurs ancêtres arméniens.

La journée a trop vite passé en compagnie de Chamiram Sévag, Hovannès et Irma Tchilinguirian: nos amis.

Maryse Grigorian (Présidente)



ԻՄ ԱՆԿԻՒՆԷՍ՝ ԱԼԵՒՈՅԹ ԿԱՄՔՆ ԱՍՏՄՈՅ.

ԱԴԱՄԱԼՈՅՍԷՆ ԱՂԶԱՄՈՒՂԶ ԾԵՐՈՒԹԻՒՆ-ԽՈՐ ԱԼԵՒՈՐՈՒԹԻՒՆ


Հարազատներս ձգելով, ծով յուզումնալի բախճոտ,
Ողբերգական տառապանքով ապրեցայ անհպելի,
Այրող ընտանեկան հուրը, աւաղելի հիֆացեալ.
Վաղեմի շոյանքներով՝ սէ՛ր մատղաշուքեամբ:
Անցան բազմատեսակ տարիներ, կսկծագին խոցալից,
Բոլորն ալ անդարձ մեկնեցան, եղեմային դրախտին:
Կանթեղիս բոցը, օրէ օր, աւելի աղօտ կը նուաղի,
Կը կորսնցնեմ զօրութիւնը ոտքերուս, ուժ քալելու,
Ո՛վ իմ երկինք, ես յուսակտուր գաւազանովս վիատում,
Աչքուս լոյսը, եղո՛ւկ հետզհետէ կը դադրին տեսնել:
Ուժաբափ, անկայուն, մոռացկոտութիւնս նեղիչ,
Էութիւնս ողբագին է, տրտմագին մաղձոտութեամբ:
Ո՛վ իմ արֆայութիւն, անյեղուկ, անեղծ ու անվթար,

LA CATHÉDRALE St. GRÉGOIRE L'ILLUMINATEUR SOLENNELLEMENT INAUGURÉE À ERÉVAN LE 23 SEPTEMBRE 2001

La Capitale de l'Arménie aura enfin sa cathédrale dominant de sa haute et imposante stature le centre ville de Erévan.


L'événement est d'importance pour les Arméniens du pays et de toute la Diaspora. Huit millions d'Arméniens auront suivi avec fierté et une joie difficilement continue les péripéties de l'inauguration de ce lieu sacré devenu désormais un véritable lieu de pèlerinage pour les générations à venir.

La construction d'un tel édifice, grandiose par son apparence et imposant par son style hérité d'un glorieux passé, a su conserver sans faille les normes de l'architecture arménienne qui porte les empreintes des grands constructeurs comme Momig et Manuel pour ne citer que ces deux grands, de l'époque du Moyen-Âge.



Vue panoramique de la Cathédrale après son inauguration.

Nous savons tous qu'au cours de l'histoire, chaque peuple a créé des valeurs qui ont eu



une importance décisive dans sa carrière. ses valeurs ont orienté ses aspirations spirituelles, culturelles, ses idéaux. L'Arménien possède aussi ses valeurs décisives créé depuis la proclamation du christianisme comme religion d'Etat.

La construction de la cathédrale St. Grégoire l'Illuminateur constitue sans conteste une des valeurs du peuple arménien. Et c'est bien pour cela que tout le peuple a participé à la mise en chantier d'un tel projet, oeuvre de l'architecte Sétrak Gurkdjian. L'initiative d'un tel engagement solennel revient à S. Sainteté Vazken Ier. puis, la relève s'est trouvée assurée par S.S. Karékine Ier et actuellement par S.S. Karékine II.

Depuis notre séjour à Erévan, il ne se passait de jour dans les rues et certaines artères de la capitale fraîchement macadamisées à l'occasion dit on de la visite du Président Poutine ou les salons hupés de la ville, sans que l'attention de l'opinion publique ne s'oriente vers les tra-

Vue de l'autel la veille de l'inauguration de la Cathédrale

Malgré ces strictes directives lancées par le constructeur des lieux, Edward Balassanian, venu de New-York, pour diriger les travaux en voie de finition, les fidèles étaient curieux de savoir si vraiment le 23 septembre serait la date définitive pour tranquiliser les esprits.


Les trois derniers jours après la fête de l'indépendance de l'Arménie célébrée le 21 Septembre, une course contre la montre devenait visible sur le terrain où, aux ouvriers au nombre de plusieurs centaines se joignaient des écoliers volontairement venus à la rescousse, avant la réouverture des écoles. Il était difficile de voir comment tout pourrait rentrer dans l'ordre, à la vue d'un tel tohu bohu.

Mais la volonté de la population de voir sa Cathédrale livrée à la prière a eu raison, puisque comme prévu, le 23 Septembre, un Dimanche printanier, la circulation automobile devenait de plus en plus problématique dès les premières heures de la journée. L'esplanade entourant la Cathédrale était noire de monde.

A Suivre

A. A.

L'urne dans laquelle se trouve déposée la main de Grégoire St. Illuminateur.



Ես կառուցած եմ, պեծուփ, փոթորկաբեր, ամպամած,
 Կը տեսնեմ հարազատներս՝ եղբայր, ընկերներս, ժպտական,
 Շարֆ-շարֆի կանգնած, հորիզոնէն անդին վերակենդան,
 Կը յիշեմ անցեալի, անքիծ, ներմակ յուշերս սիրարկած,
 Զերմ համբոյրներ՝ շուրթ-շուրթի, խոստումներ տաճարաշէն:
 Հիմա որ, կը դիտեմ ինձզինքս ժանգոտած հայելիիս մէջ,
 Եւ խորհելով մահուանս մասին՝ արհաւիրով կ'արտասուեմ:
 Ասուսի պէս կ'անցնին, կեանքիս վերջին տարիները մթագոյն,
 Սակայն ունիմ մխիթարութիւն մը, անմահ ու անքառամ,
 Մի՛ գուցէ անունս յիշուի հայ մամուլին լոյս էջերուն մէջ,
 Ապագային... բէ հանի...

Փարիզ-Անթոնի

ԺԻՐԱՅԻ ԱՐԱՄ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

[Դերասանը]

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)

Մեր թրջերէն գրութիւններուն մէջ ջանացինք բացատրել, թէ ինչպէ՞ս բարբարոս թուրքերը, դարերու ընթացքին և մինչեւ վերջերս, հայկական պատմական յուշարձանները և եկեղեցիները, հայերէն հետք չմնայ ըսելով, ուժանակով քանդած են: Բայց այս բարբարոսութիւններուն են թարկուողները միայն հայերը չեն:

Նոյնպէս՝ հնադարեան (Antique) յունական և բիւզանդական յուշարձանները և եկեղեցիները զոհ գացած են թրջական բարբարոսութիւններուն: Այս թրջական քանդումին զոհ գացող վայրերէն մէկն է «Մարմարա» ծովուն վրայ Սիլիվրի բերդաքաղաքը, որ կը գտնուի Պոլսէն 65 քմ. դէպի արեւմուտք՝ երոպական Թրակիոյ հողամասին վրայ:

Նոյն ատեն Ռուբէն Սեւակի ծննդավայրը եղող Սիլիվրի բերդաքաղաքը, բուն անունով Սիլվերրիա, հին Բիւզանդական պատմական քաղաք մը եղած է:

Սիլիվրիի Բիւզանդական եկեղեցիները այնքան համբաւ ունին եղեր, որ մեր հօրեղբայրը՝ Զերովբէ Չիլիկլիրեանին մեզի պատմածին համաձայն, մինչեւ 1914 թուականը անգլիայէն բիւզանդագետներ մասնաւորապէս Սիլիվրի եկած են, որ Սիլիվրիի Բիւզանդական եկեղեցիներուն խճանկարները ուսումնասիրեն:

Այսօր, պատմական Սիլիվրի բերդաքաղաքէն ոչ մէկ բան մնացած է: Ոչ բերդ, ոչ յունական յուշարձան, ոչ բիւզանդական եկեղեցի և ոչ ալ բիւզանդական խճանկար:

Թուրքերը ամէն բան քանդած են: Եւ Սիլիվրին այսօր, անճոռնի, «պեթոն» կառոյցներով լեցուած, թրջական քաղաքի մը վերածուած է, և միացած է Պոլսոյ:

Սիլիվրի բերդաքաղաքը, որ մեր նախնիներուն բնակավայրը եղած է, մինչեւ 1921-թ.ները, մեծ մասամբ բնակուած է յոյներէ և հայերէ: Իսկ թուրքերը, Սիլիվրիի մէջ բերդաքաղաքէն դուրս՝ «Վարի թաղամասը» (Asagi mahalle) ըսուած շրջանը կը բնակին եղեր, գոյացնելով քանի մը տասնեակ թուրք ընտանիքներէ բաղկացած անցնշան փոքրամասնութիւն մը:

Սիլիվրին այն աստիճան յունական քաղաք մը եղած է, որ հոն բնակող հայերը եղած են լաւ յունախօս, ինչպէս որ մեր հայրը և մայրը սահուն յունարէն կը խօսէին:

Եւ այդ շրջանին Սիլիվրիի մէջ, նախակրթարան մը եղող «Աքանազեան» վարժարանէն զատ ու աւելի բարձր հայկական վարժարան մը չըլլալուն, Ռուբէն Սեւակ կը դրկուի Պարտիզակի Ամերիկեան Գոլէճը և յետոյ՝ Պոլսոյ Պերպերեան Վարժարանը, և 1905-ին ալ կը



Ռ. Սեւակի իւղաներկ նկարը գծուած իր մտերիմ ընկերոջ՝ գեղանկարիչ Լեւոն Ազնաւուրեանի կողմէ, 1911-ին, Լոզանի մէջ: Եղերաբախտ գրողը կը տեսնուի բժիշկի համազգեստով:
Այս նկարը այժմ կը գտնուի Երեւանի Գրականութեան և Արուեստի թանգարանին մէջ. «Նկուղային մեկուսացումէ» էտք, վերանորոգւած վիճակով:

և 1905-ին ալ կը

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ]

մեկնի Ջուլիցերիոյ Լոզան քաղաքը, ուսանելու տեղւոյն բժշկական համալսարանը:

Մինչդեռ Ռուբէն Սեւակին քրոջ աղջիկը՝ Ատրիճէ Յակոբովիչ, Սիլիվրիի հայկական վարժարանը աւարտելէ յետոյ, դեռ աղջնակ մ'ըլլալուն, Պոլսոյ մէկ հայկական վարժարանը չղրկուիր, և Սիլիվրիի յունական միջնակարգ վարժարանը կ'արձանագրուի:

Եւ Ատրիճէ յունական վարժարանին մէջ, շատ լաւ յունարէն գրել և կարդալ սորված ըլլալու ուրախութեամբ, իր մօրեղբօր՝ Ռուբէն Սեւակին 1910-ին, Լոզան, յունարէն լեզուով նամակ մը կ'ուղարկէ...

Եւ Ատրիճէն միջոց մը յետոյ, Ռուբէն Սեւակէն պատասխան նամակ մը կը ստանայ:

Այստեղ կը հրատարակենք Ռուբէն Սեւակի քրոջ աղջկան՝ Ատրիճէին գրած նամակը, որ մինչեւ այսօր անտիպ մնացած է [Այս նամակին պատճենը, 1980-թ. ներուն, Կիպրոսի մէջ, մեզի յանձնուեցաւ Ատրիճէին քրոջ՝ Սիրվարդ Գլըճեանի կողմէ, որուն բարի յիշատակին առջեւ յարգանքով կը խոնարհինք]:

Ահա այդ մտերմիկ ու փափկանկատ, բայց խրատական նամակ... բանաստեղծութիւնը:

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՅԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱԶԳ ՀԱՅՈՅ» - ԹԻԻ 2

«ՀԱՒԱՏԱՐՄ ՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ»

19-րդ դարուն սկիզբները, օսմանեան կայսրութիւն կոչուած, թալանի սիստեմի վրայ հիմնուած պետութեան օրերը համրուած էին:

Երոպացիները, այս պետութեան «չիւանդ մարդ» անունը տուած էին:

Բայց Արեւմտեան պետութիւնները այս «չիւանդ մարդ»ը առողջացնել ուզեցին՝ ուսերուն առաջացման արգելք ըլլան ըսելով:

1839-ին, Սուլթան Ապտիլ Մեժիտի ատենը, Արեւմտեան պետութիւններուն ծրագիրը գործարող եպարքոս Մուսթաֆա Ռեշիտ փաշան՝ «Կիլիանէ»ի կոնդակով "TANZIMAT" ըսուած բարեկարգումներու շրջանը բացաւ:

Այս կոնդակով «ոչ իսլամները՝ իսլամներուն հետ հաւասար իրաւունքներ պիտի ունենային»:

Այս «անուշ խօսքերուն» ամենէն շատ հայերը հաւատացին: Անոնք, դարեր տեւողութեամբ թուրքերէն տեսած «գեշութիւն»ները մոռցան և օսմանցիներէն աւելի՝ օսմանցի եղան:

Եւ օսմանեան պետութեան վերականգնումին համար մեծ խանդավառութեամբ աշխատիլ սկսան:

Բացէք պատմական վաւերագիրները և կարդացէք:

Բոլոր մարզերուն մէջ, իբր առաջնորդող ուժ ըլլալով, հայերը պիտի տեսնէք:

Առաջին վառօդի գործարանը հիմնողը՝ Տատեան, փողերանոցը արդիականացնողը՝ Պէզճեան, Պոլսոյ պալատները կառուցանողները՝ Պալեան ընտանիք, Գեղարուեստից վարժարանը և "ARCHEOLOGIE" թանգարանը հիմնողը՝ Երուանդ Ոսկան, Թատրոնը հիմնողը՝ Յակոբ Վարդովեան (GÜLLÜ YAKUP), Թղթատարութիւնը հիմնողը՝ Երուանդ Մարտիկեան, "HALKALI"ի երկրագործական վարժարանը հիմնողը՝ Հայ, Տպարանները հիմնողները՝ Հայեր, Մամուլը հիմնողները՝ Հայեր, ամէն տեսակի ճարտարարուեստը հիմնողները՝ Հայեր, ամէն տեսակի աշխատանքի մարզերը հիմնողները՝ Հայեր: Հայերը, նոր և ուժեղ օսմանեան պետութիւն մը ստեղծելու համար, միամտաբար և հաւատարմաբար աշխատեցան:

Եւ դուք թուրքեր՝ այս հաւատարիմ ազգին, իբր երախտագիտութիւն ի՞նչ ըրիք:

Միայն և միայն՝ ապերախտութիւն:

Եւ ամենամեծ ապերախտութիւնը՝ 24 Ապրիլ 1915-ին կատարեցիք:

24 Ապրիլ 1915 թուականը դուք մի մոռնաք: Դուք, այդ թուականին՝ Հայ Ազգը ցեղասպանութեան ենթարկել սկսաք:

Յ. Զ.

Յ. Զ. 10-Յ.Մ.Ա.Ր. — ԱԼԷ 1-20

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)

ՍԵՒԱԿԻ ՍՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)

Տեղից է Եկատելը, որ Ս. Կապուտիկ-
եանի «Խօսք Իմ Որդւոյս»-էն 50 տարի
առաջ Ռ. Սեւակի կողմէ գրուած այս
նամակ, հայապաշտ նահատակ բանաս-
տեղծին ներաշխարհը արտացոլող, մենք
կը հաւատանք, որ նախաեղեւնեան հայ
լուսամիտ մտաւորականութեան ազգային հո-

գեթանութիւնը վկայող և պատմական արժէք ունեցող գրութիւն մըն է:

Իմ սիրելի փոքր Ատրիկն,

Եթէ միջոցդ ներէ

Մոյլ մի ըլլար, ծոյրը անօրէն է.

Ինձմէ բարձր ես Յունաբէնէ.

Մեծ դպրոցներ գնա՛ Ատրիկն.

Դուն շատ գիտուն եղիր մեզմէ.

Բայց հօրդ, մօրդ էնուշ լեզուն

Բայց մայրենի անուշ լեզուդ

Բայց մայրենի և Սուրբ լեզուդ

Մի մոռնար որ հայերէն է:

Մի մոռնար որ հայերէն է:

Մի մոռնար որ հայերէն է:

Լոզան 1910 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ

**

Ատրիկն Յակոբովիչը, քանի մը տարի յետոյ, յունական Վարժարանը աւարտելէ
ետք, Ռուբէն Սեւակին յանձնարարութեամբ, Պոլսոյ հանրածանօթ ֆրանսական՝
"Notre Dame De Sion" վարժարանը կ'ուղարկուի:

Մենք, մեր երիտասարդ տարիքէ սկսեալ, շատ տպաւորուած ենք Ատրիկն Յակո-

բովիչին անձնաւորութենէն:

Բացառիկ տաղանդ մըն էր. բարձր մտաւորական ծիրքերով օժտուած:

Իր մասին շատ անգամ արտա-
յայտուած ենք մեր գրութիւննե-
րուն մէջ: Մանաւանդ՝ Ատրիկնէին
Ապրիլ 1915-ի օրերուն. Ռուբէն
Սեւակի մասին պատմածները
շատ զգայացունց են:

1985-ին հրատարակուած «Ռու-
բէն Սեւակ և Փրցուելիք Ուղեղ-
ներ» մեր գիրքին մէջ, այս մասին
գրած էինք: Այստեղ կ'ուզենք
կրկին նշել այս շատ տխուր եղե-
լութիւնը. «Պոլսոյ Հարպիյէ թա-
ղին մէջ, Հարպիյէ զօրանցիին
գունդերը, շաբթու վերջը, մեծ
հանդիսութեամբ, կը տողանցէին
մայր պողոտային վրայ: Ռուբէն
Սեւակ ալ իբր բժիշկ-հարիւրա-
պետ, ճերմակ ձի մը նստած, իր
գինուորներով կը մասնակցեր
այս տողանցքին:

Շաբթու վերջ մը, նոյն պողոտա-
յին դիմացի կողմը բնակող Մկըր-
տիչ Յակոբովիչ ընտանիքը՝ կը
հրաւիրէ, իրենց ազգական Սեւա-
կի քրոջ աղջիկը՝ Ատրիկնէն, որ
դիտէ իր մօրեղբայր-հարիւրա-
պետ Ռ. Սեւակը տողանցքի ատեն:

Ատրիկնէն Սիլիվրիէն Պոլիս
ուսանելու եկած է «Նօթր Ծամ Տը
Սիոն» վարժարանը, իբր գիշերօ-



Ռուբէն Սեւակի իւղաներկ պատտարին (հա-
րազատ) ընդօրինակութիւնը: Հարազատը կը
գտնուի Երեւանի Գրականութեան և Արուեստի
թանգարանը: Ան գծուած է 1911-ին Լոզանի մէջ
[ուր Ռուբէն բժշկութիւն ուսանած էր], Ռ. Սեւակի
նկարիչ ընկերոջ՝ Լեւոն Ազնաւուրեանի կողմէ:
Վերարտադրութիւնը կատարուած է 1967-ին, Ռ.
Սեւակի քրոջ աղջկան՝ գեղանկարիչ Զրիսթի
Սալեթիի կողմէ: Այս օրինակը ներկայիս կը
գտնուի Ռ. Սեւակի Յիշատակի Տան մէջ, Նիս
(GAGNES SUR MER):

թիկ աշակերտ:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)

Ատրիճե և տանտերերը պատշգամբ նստած. անհամբեր կը սպասեց Ռ. Սեւակին անցնելուն: Տողանցքը կը սկսի, զինուորները կ'անցնին, «Ահա» կ'ըսեց. տանտերերը. «Հիմա կու գան՝ Սեւակը և իր զինուորները». «Բայց այդ ի՞նչ է. զինուորներուն առջեւէն գացող ծիուն վրայ Սեւակը չկայ»: Չիճ՝ առանց Սեւակի կ'անցնի. քովը քալող զինուորի մը կողմէ առաջնորդուած»:

Եւ քանի մը օր յետոյ կ'իմանան. թէ Ռ. Սեւակ աքսորուած է Չանղըրը:

Առաջին անգամ՝ 1985-ին մեր գիրքին մէջ հրատարակուած Ռուբեն Սեւակի վերաբերեալ այս ողիսական եղելութիւնը արտագրուեցաւ հայրենի ծանօթ գրող Պերճ Ջէյթունցեանի 1989-ին Երեւանի մէջ հրատարակուած «Վերջին Արեւագալը» անունը կրող ստուար գիրքին 213-րդ էջին մէջ:

Նոյն գիրքին մէջ կարդացինք ուրիշ տողեր ալ. կրկին արտագրուած 1985-ի մեր գիրքէն: Բայց, ըստ «Հայկական սովորութեան», մեծապատիւ Պերճ Ջէյթունցեանը, այս տողերուն ուրկէ արտագրուած ըլլալուն մասին, ոչ մէկ բան գրած էր:

Անջատաբար այս մեր նկատողութիւններէն՝ մենք երախտապարտ ենք Պերճ Ջէյթունցեանին. որ 1985-ին Երեւանի մէջ հրատարակուած իր «Մեծ Լուսին» թատերգութեան մէջ, առաջին անգամ ըլլալով, Ռուբեն Սեւակին և Դանիէլ Վարուժանին եղեռնի ողբերգութիւնը ներկայացուցած է:

Այն տարիներուն, շատ մեծ յանդգնութիւն էր, այս մասին գրելը: Բայց Պերճ Ջէյթունցեանը, ի՞նչ պէտք ուներ, իր այս թատերգութեան մէջ. (Ծարձ՝ էջ 11)

TURKLERIN (SÖZDE) BILMEDIKLERI GERCEKLERI AÇIKLIYORUZ “MİLLETİ SADIKAYI ERMENİYE” N° 2 SADAKAT VE NANKÖRLÜK

19. YÜZ YILIN BAŞLARINDA, OSMANLI İMPARATORLUGU DENİLEN, YAGMACILIK SİSTEMİ ÜZERİNE KURULU DEVLETİN GÜNLERİ SAYILIYDI. AVRUPALILAR BU DEVLETE “HASTA ADAM” İSMİNİ VERMİŞLERİDİ.

FAKAT BATTI DEVLETLERİ BU “HASTA ADAMI” DIRİLTMEK İSTEDİLER. RUSLARIN İLERLEMESİNE MANİ OLSUNLAR DİYE.

1839-DA SULTAN ABDÜL MECİT ZAMANINDA, BATTI DEVLETLERİNİN PROGRAMINI TATBİK EDEN SADRAZAM MUSTAFA RESİT PASA “GÜLHANE HATTI HÜMAYUN” İLE TANZİMAT DEVRİNİ BAŞLATTI. BU KARARA GÖRE, BUNDAN BÖYLE GAYRİ MÜSLİMLER, MÜSLİMLER İLE ESİT OLACAKLARDI.

BU “TATLI SÖZLERE” EN ÇOK ERMENİLER İNANDI. ONLAR, ASIRLAR BOYUNCA TÜRKLERDEN ÇEKTİKLERİNİ UNUTTULAR VE OSMANLIDAN FAZLA OSMANLI OLDULAR.

VE OSMANLI DEVLETİNİN KALKINMASI İÇİN CANLA BAŞLA ÇALIŞMAYA BAŞLADILAR.

AÇIN TARİHİ BELGELERİ, VE OKUYUN HER SAHADA YARATICI KUVVET OLARAK ERMENİLERİ GÖRECEKSİNİZ.

İLK BARUT FABRİKASINI KURAN DADYAN, DARPHANEYİ MODERNİLEŞTİREN BEZCİYAN, İSTANBULUN SARAYLARINI İNŞA EDEN BAYAN AİLESİ, GÜZEİ, SANATLAR AKADEMİSİNİ VE ARKEOLOJİ MÜZESİNİ KURAN YERVANT OSKAN, TİYATROYU KURAN HAGOP VARTOYAN (GÜLLÜ YAKUP), “POSTA”YI KURAN YERVANT MARDIKYAN, HALKALI ZİRAAT OKULUNU KURAN ERMENİ, TİCARET OKULUNU KURAN, ERMENİ MATBAACILIĞI KURANLAR ERMENİLER, GAZETECİLİĞİ KURANLAR ERMENİLER, HER TÜRLÜ SANAYİİ KURANLAR ERMENİLER, HER TÜRLÜ İSYERLERİNİ KURANLAR, ERMENİLER.

ERMENİLER, YENİ VE KUVVETLİ BİR OSMANLI DEVLETİ YARATMAK İÇİN, SAHYANE VE SADIKANE ÇALIŞTILAR.

VE SİZ TÜRKLER, BU SADIK MİLLETE MİNNET BORCU OLARAK NE YAPTINIZ, YALNIZ VE YALNIZ NANKÖRLÜK, VE EN BÜYÜK NANKÖRLÜĞÜ, 24 NİSAN 1915-DE YAPTINIZ.

24 NİSAN 1915-TARİHİNİ UNUTMAYIN, SİZ, O TARİHTE, ERMENİ MİLLETİNİ SOYKIRIMINA UGRATMIYA BAŞLADINIZ.

B. O.

Handwritten signature or text at the bottom of the page.

Յ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ... (Ծար. էջ 2-էն)

այս աստիճան իրականութեան հետ կապ չունեցող բաներ գրելու:

«Մեծ Լուսին» թատրերգութեան մէջի Ռուբէն Սեւակի տիպարը, որեւէ կապ չունէր Չանղըրըի մէջ անոր ցուցաբերած հերոսական կեցուածքներուն հետ:

Մանաւանդ՝ ի՞նչ պէտք ունէր, Պերճ Զէյթունցեանը, այս թատրերգութեան մէջ ստեղծելու՝ «Երեւում» անունով տիպար մը, որ իրականութեան հետ կապ չունեցող խեղկատակութիւն մըն է:

Հայկական եղեռնի պատմութիւնը, մանաւանդ Ռուբէն Սեւակի Չանղըրըի մէջ ցուցաբերած հերոսական կեանքին իրական պատմութիւնը, իր բոլոր մանրամասնութիւններով, իսկական ողբերգադիւցագներգութիւն մըն է:

Եւ այս մասին գրուած, իրականութեան չհամապատասխանող ամէն մէկ տող՝ սրբապղծութեան համազօր է:

Ռուբէն Սեւակի 1915-ին նահատակութենէն յետոյ, իր կիցը՝ Ժաննի, սարսափի մատնուած երկու զաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին հետ, հապճեպով Պոլսէն Ջուիցերիա մեկնած էր:

Եւ Ռուբէն Սեւակի Պոլսոյ Սուրբ Յակոբ թաղամասին մէջ գտնուող բնակարանը բաւական ատեն անտէր մնաց:

Երկար միջոցէ ետք է, որ Ռուբէնի երէց եղբայրը՝ Զերովբէ Չիլիկցիբեան, կարողացաւ փրկել Ռուբէն Սեւակին անձնական իրերուն մէկ մասը:

Ատրիճէ Յակոբովիչն ալ, Նահատակին արխիւին մէկ մասին փրկութեան մէջ մեծ դեր ունեցած է:

Ան, Ռուբէն Սեւակին բանաստեղծութիւններուն բնագիրները [արտագրելէ ետք] Փարիզ՝ Ժաննի Սեւակին ուղարկած է:

Ժաննին ալ, իր կարգին, այս բնագիրները Փարիզ՝ «Նահատակ Գրողներու Բարեկամներ» հրատարակչութեան յանձնած է, որուն շնորհիւ, 1946-ին հրատարակուեցաւ Եղերաբախտ մտաւորականի գրութիւններուն մէկ մասը պարփակող գիրքը:

Մինչ այդ, Ատրիճէ Յակոբովիչին արտագրած ձեռագիրները, մեքն ալ 1946-ին, մեր կարգին, արտագրեցինք և Ռուբէն Սեւակին այս ձեռագիրներուն պատճենները 1983-ին յանձնեցինք Ալեքսանտր Թոփչեանին, որ ինքն ալ, այս ձեռագիրներով, ամբողջացուց Երեւանի մէջ Ռուբէն Սեւակի գրութիւնները, և 1985-ին յաջողեցաւ հրատարակել՝ «Ռուբէն Սեւակ -Երկեր» անուն հատորով նահատակ բանաստեղծին ամբողջական գործերը:

Ատրիճէ Յակոբովիչ իր մօտ պահած էր, իբր մասունք-յիշատակ՝ Ռուբէն Սեւակին իւղաներկ մէկ դիմանկարը:

Ռուբէն Սեւակին այս դիմանկարը գծուած էր 1911-ին, իր ընկերոջ՝ շնորհալի Գևարիչ Լեւոն Ազնաւուրեանի կողմէ, որ եգիպտահայ ընտանիքի մը զաւակն էր. Լոզան եկած, Գեղարուեստի վարժարանը ուսանելու: Եւ Լոզանի մէջ է, որ ծանօթացած էր Ռուբէն Սեւակին: Եւ երկուքը շատ մտերիմ բարեկամներ եղած են:

Ռ. Սեւակի բժիշկի տիտղոս ստանալէն ետք, Լ. Ազնաւուրեան նկարած էր իր մտերիմը բժշկական շապիկ հագած երեւոյթով և նուիրած զայն իր սիրելի ընկերոջ, իբր «յաւերժական նուէր»:

Եւ Ռուբէն Սեւակ այս դիմանկարը 1914-ին, ընտանեօջ Պոլիս վերադարձին, հետը բերած էր: Ատրիճէ Յակոբովիչ, Ռուբէնի նահատակութենէն յետոյ, մեծ գուրգուրանքով պահպանեց իր մօրեղբօր դիմանկարը... Եւ մահանալէ առաջ կտակեց, որ Ռուբէն Սեւակի այս դիմանկարը Հայաստանի Թանգարանը իբր նուէր ուղարկուի:

Մինչ այդ Ատրիճէին քոյրը, որ Պոլսոյ մէջ շատ ծանօթ նկարչուհի մըն է՝ Զրիստին Սալերի անունով, կը մտածէ, թէ առ ի զուշութիւն լաւ կ'ըլլայ. եթէ ընդօրինակէ այս պաստառը: Եւ իրապէս ալ, 1967-ին, շատ հարազատ ձեւով, կ'ընդօրինակէ: Եւ Ռուբէն Սեւակին բուն պաստառը 1970-ին, Հայաստանի հետ կապեր ունեցող բարեկամի մը կը յանձնուի, որ զայն Հայաստան դրկէ:

1977-ին Զրիստին Սալերին Հայաստան կ'այցելե և Երեւանի մէջ, Սփիւռքի հետ Մշակութային Կապի Կոմիտէի Նախագահ Վարդգէս Համազասպեանին կը ներկայանայ և կ'ըսէ. «Զանի մը տարի առաջ Ռուբէն Սեւակին իւղաներկ մէկ դիմանկարը, իբր նուէր, Հայաստանի Թանգարանին ուղարկեցինք: Կուզէի գիտնալ, թէ ի՞նչ եղած է այս դիմանկարը»:

Համազասպեան աջ ու ձախ կը հարցնէ: Եւ իրեն կ'ըսեն, թէ այդպիսի նկարի գոյութենէն տեղեակ չեն: Բայց, Զրիստին Սալերին շատ կը պնդէ, և բաւական փնտրոտուքէ վերջ, Գրականութեան և Արուեստի Թանգարանին մէկ նկուղին մէջ կը գտնեն ծրար մը, որուն վրայ գրուած է. «Ռուբէն Սեւակի իւղաներկ դիմանկարը»: Համազասպեանի և Զրիստին Սալերիի ներկայութեան ծրարը կը բանան, և ի՞նչ տեսնեն՝ իւղաներկ նկարը, տարիներէ ի վեր ոլորուած-մնացած ըլլալուն պատճառաւ. ճաթը տած է և իւղաներկերը կտոր, կտոր տարածուած են ծրարին մէջ:

Զրիստին Սալերին շատ կը նեղուի, և կը բացատրէ, թէ Ռուբէն Սեւակին այս դիմանկարը պատմական թանկագին նկար մըն է, և հոգեկան բացառիկ արժէք ունի մանաւա՛նդ Ռուբէն Սեւակի հարազատներուն համար:

Վարդգէս Համազասպեան շատ սրտնեղած՝ թանգարանի պատասխանատուներուն անհոգութեան պատճառաւ ստեղծուած այս կացութենէն, Զրիստին Սալերիին կ'ըսէ.

«Յառաջիկայ տարի, եթէ Հայաստան կրկին այցելէք, ձեզի կը խոստանամ, որ այս սպաստառը քոյր-րովին վերանորոգուած պիտի տեսնէք»:

Տարի մը ետք, Զրիստին Սալերին չկրցաւ այցելել Հայաստան:

Բայց 1978-ին, մենք այցելեցինք Հայաստան և տեսանք, Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի Թանգարանին մէջ, վերանորոգուած Ռուբէն Սեւակի իւղաներկ պաստառը:

Բայց, նկարին վրայ, կ'երեւէին՝ ճաթտուքներուն գիծերը:

Եւ մանաւա՛նդ այս պաստառը, շատ բան կորսնցուցած էր. Ռուբէն Սեւակի դիմանկարը ըլլալու հանգամանքէն:

Այդ օր, մեր ընկերը մեզ նկարեց թանգարանի սրահին մէջ, Ռ. Սեւակի վերանորոգուած դիմանկարին առջեւ: Եւ նաեւ առանձին նկարեց՝ «Ռուբէն Սեւակի դիմանկարը»:

Այս դիմանկարին լուսանկարը մեծցուցինք և կախեցինք Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ:

1990-ներուն էր. մեր հօրաքրոջ աղջիկը՝ Զրիստին Սալերին Նիս եկաւ մեզի այցելութեան: Եւ Ռուբէնի Յիշատակի Տան իբր նուէր բերաւ Ռուբէն Սեւակի իւղաներկ դիմանկարը, որ 1967-ին ինք ընդօրինակած էր բուն դիմանկարէն:

Եւ այսօր, Լեւոն Ազնաւուրեանի 1911-ին Լոզանի մէջ նկարած Ռուբէն Սեւակի իւղաներկ դիմանկարին օրինակը կը գտնուի Նիսի Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ: Իսկ բուն դիմանկարը՝ Երեւանի Գրականութեան և Արուեստի Թանգարանը:

Բայց այսօր, այս պաստառներէն ո՞րը աւելի իրական է. բո՞ւն պաստառը, թէ՞ ընդօրինակուած պաստառը:

Մենք կը հաւատանք, որ Զրիստին Սալերիին ընդօրինակած պաստառը՝ շատ աւելի հարազատ է. քան Երեւանի Թանգարանին մէջ գտնուող վերանորոգուած դիմանկարը:

**

25 Օգոստոս 2001-թ.ին, Շամիրամ Սեւակի հետ միասին, հաճոյքն ունեցանք Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ ընդունելու Երեւանի Գրականութեան և Արուեստի Թանգարանի Տնօրէն՝ Հենրիկ Բախչիճեանը:

Թիւ 153

15

ԱՄԷՆ ՈՔ ԻՐ ԱՀԱՔԵ... (Ծար. էջ 1-էն)

եղած են, կը մնան: Պաքուի ու Անգարայի օգնութեամբ անոնք անցած են Չեչնիա, Աբխազիա, Քոսովօ, Ռուսաստան և Պոսնիա որ ոմբահարեն հիմնարկներ ու գործեն մարդասպանութիւն:

Դեռ չյիշեցնենք, որ այն ահաբեկիչները որոնց դէմ սանձազերծուած է այսօր Ա.Մ.Ն.-ը, մինչեւ երէկ իր դրամով ու զէնքով մէջտեղ եկած ու գործած են, որ «վնարողին» ծառայեն:

Զօրավարը վստահ ըլլալու է, որ Ազերիին տրուած օգնութիւնը պիտի քաջալերէ անոր, որ պայքարի ո՛չ թէ «Պէն...»ի յելուզակներուն դէմ, այլ... Հայաստանի ու Արցախի... «ահաբեկիչներուն», գործակցութեամբը Պաքուին Օսմանցի «լեզուի ու կրօնի եղբայրներուն»: Որպէսզի հայ-ռուսական ազդեցութեան վերջ տան Կովկասի երկու մասերուն մէջ, մեղսակցութեամբը Վրաստանին:

Թիւ 907-յօդուածը ջնջել տալու նպատակն ալ այդ չէ՞ արդէն:

Ծատ գիտակից և հմուտ մտաւորական մըն էր, որ Յիշատակի տետրակին մէջ շատ դրուատալից տողեր գրեց՝ Ռուբէն Սեւակի և Նահատակի Յիշատակի Տան մասին:

Ծամիրամ Սեւակ քանի մը օր յետոյ Երեւան պիտի մեկնէր. ներկայ գտնուելու համար. 1 Սեպտեմբերին, Ռ. Սեւակի անուան դպրոցի վերամուտի հանդիսութիւններուն:

Եւ Ծամիրամ Սեւակ, Հենրիկ Բախչիցեանին հետ պայմանաւորուեցաւ. 12 Սեպտեմբեր 2001 թ.ին Երեւանի Գրականութեան և Արուեստի Թանգարանը այցելելու ծրագրով:

Եւ 87 տարեկան բայց միշտ երիտասարդ ոգիով Ծամիրամ Սեւակ, 30 Օգոստոսին մեկնեցաւ Երեւան: Եւ 14 Սեպտեմբերին վերադարձաւ հոգեկան շատ մեծ գոհունակութեամբ:

Ծամիրամը մեզի պատմեց իր Երեւան այցելութեան տպաւորութիւնները: 31-Օգոստոսին Ռ. Սեւակի անուան դպրոցին վերամուտի հանդիսութիւններուն ներկայ եղած էր: Խոր գոհունակութեամբ արտայայտուեցաւ դպրոցին, տնօրէնութեան և ուսուցիչներուն մասին: Եւ մանաւանդ՝ խօսեցաւ աշակերտներուն բարուք վիճակին մասին:

1 Սեպտեմբերին Երեւանի կրթական վերամուտի հանդիսութիւնները կատարուել են Մատենադարանին առջեւ. առ ի երախտագիտութիւն Սուրբ Մեսրոպ Մաշտոցին:

Եւ այս տարուան հանդիսութիւններուն, Երեւանի կրթական ընդհանուր հաստատութիւնները ներկայացուցեր է Ռուբէն Սեւակի անուան դպրոցը, իր երգչախումբով և իր աշակերտներով:

Ծամիրամ ըսաւ. թէ այս ներկայացուցչութիւնը մեծ պատիւ մըն էր Ռուբէն Սեւակի դպրոցին համար: Ծամիրամ 12 Սեպտեմբերին այցելել է Գրականութեան և Արուեստի Թանգարանը:

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Պրն. Շահէ Խպոյեանի և Օրդ. Թալին Թիւրքիւնեանի պսակադրութեան առթիւ, Տէր և Տիկ. Մելոն Սէֆէրեան կը շնորհաւորեն ամուսնացեալ զոյգը, կը խնդակցին իրենց ծնողաց, ի մասնաւորի դամակահայ նուիրեալ ազգային Տիար Արրահամ Խպոյեանին ինչպէս նաև Տիկնոջ, և փոխան ծաղկեփունջի 15,000լ.ո. կը նուիրեն «Նայիրի»ին:

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Պրն. Նազարէք Զարմինեանի և Օրդ. Արփիկ Տօնոյեանի նշանադրէֆի [Հալէպ, 26-8-2001] առթիւ, Քուէյթի Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը և Ս.Դ.Հ.Կ.ի Վարիչ Մարմինը ջերմօրէն կը շնորհաւորեն զիրենք, և կը խնդակցին իրենց ծնողաց և մերձաւորներուն:

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Պրն. Նագօ Զարդարեանի և Օրդ. Վերա Առաքելեանի պսակադրութեան [Հալէպ, 25-8-2001] առթիւ, Քուէյթի Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը և Ս.Դ.Հ.Կ.ի Վարիչ Մարմինը ջերմօրէն կը շնորհաւորեն զիրենք, և կը խնդակցին իրենց ծնողաց և մերձաւորներուն:

Թանգարանի տնօրէն Հենրիկ Բախչինեանը շատ սիրալիր ընդունելութիւն մը ցոյց տուած է Ծամիրամին: Անձամբ կը պատօցնէ թանգարանը և նոր սարքուած երկու սրահները, որոնց մէջ ցուցադրուած են եղեր հայ մշակոյթի «մեծերուն»- Ջօհրայի, Վարուժանի և Սիամանթոյի և *անոնց պէս մեծ նկատուածներուն* նկարները: Ծամիրամ Սեւակ կը նշմարէ, թէ Ռուբէն Սեւակի նկարը դրուած է շատ աննշան տեղ մը, ան ալ՝ ուրիշներուն կողքին. նեղ շրջանակի մը մէջ. Carte-Postale-ի մեծութեամբ նկար մը:

Ծամիրամ Սեւակ կը հարցնէ Լ. Բախչինեանին, թէ ինչո՞ւ Ռուբէն Սեւակէն բաց մը չեն ցուցադրած:

Բախչինեան կը պատասխանէ. «Շատ բան չունինք Ռուբէն Սեւակէն ցուցադրելիք»: Այս պատասխանին վրայ, Ծամիրամ Հենրիկ Բախչինեանին սա հարցումը կ'ուղղէ. «Բայց դուք ունիք Ռուբէն Սեւակի իւղաներկ մէկ դիմանկարը: Այդ մէկը ինչո՞ւ չէք ցուցադրած:

Այն ատեն Հենրիկ Բախչինեան սա պատասխանը կու տայ. «Պատերուն վրայ ցուցադրելու տեղ չունինք»:

Ծամիրամ Սեւակ զինք ոգեպնդած դպրոցական հանդիսութիւններէն յետոյ, Գրականութեան Թանգարանին մէջի այս երեսոյթէն մեծապէս ցաւ զգացեր է: Որովհետեւ ան ապշութեամբ նկատած էր, որ Ռուբէն Սեւակին իւղաներկ դիմանկարը՝ թանգարանին, մթերանոցներուն մէկուն մէջ, «անկարելոր» լուսանկարներուն հետ միասին, իրարու վրայ դիզուած էին:

Իրապէս ալ, մեզի համար անհասկնալի է, Գրականութեան և Արուեստի Թանգարանի յարգելի տնօրէնին վերաբերումը:

Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ այնքա՞ն հիացական տողեր արձանագրող մէկը ինչպէ՞ս Գրականութեան Թանգարանին մէջ, Սեւակին հանդէպ նոյն գնահատականը չէ ցուցաբերած:

Բայց, մեզի համար անելի անբացատրելի է այն պարագան, որ Լ. Բախչինեանի պէս հմուտ և գիտակից անձնաւորութիւն մը, Հայաստանի Թանգարանին նուիրուած Ռուբէն Սեւակի իւղաներկ դիմանկարին ազգային ու պատմա-բարոյական արժէքը չէ գնահատած:

1915-ի Եղեռնի Նահատակ բանաստեղծներէն ոչ մէկը, իր ապրած շրջանին, վաւերական նկարիչի մը կողմէ գծուած իւղաներկ դիմանկար ունի:

Այս տեսակէտով՝ Ռ. Սեւակին իր նկարիչ ընկերոջ՝ Լեւոն Ազնաւուրեանի կողմէ 1911-ին Լոզանի մէջ գծուած իւղաներկ դիմանկարը բացառիկ պաստառ մըն է՝ Հայկական Եղեռնի պատմութեան համար:

Երեւանի Պատմութեան և Արուեստի Թանգարանի պատասխանատուներ՝ դուք Ռուբէն Սեւակին դիմանկարին ներկայացուցած արժէքը ձեզի ուղարկուած առաջին օրէն մինչեւ այսօր գնահատել չգիտցաք:

Այդ պատճառաւ ձեռնէ պիտի խնդրենք, որ Ռուբէն Սեւակի հարազատներուն կողմէ Հայաստանի Թանգարանին նուիրուած ու սրբապատկերի համազօր իւղաներկ դիմանկարը՝ Նահատակի հարազատներուն վերադարձնէք:

Անոնք և նաեւ բիրաւոր հայեր, շատ լաւ գնահատել գիտեն, հերոսատիպ գրողի դիմանկարին արժէքը: Թէ գեղագիտական և թէ պատմա-բարոյական իմաստով:

ԹԻՇ 159

ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ԱՇԽԱՐՀՆԵՐ

ԿԵՑՑԷ՛ ԵՈՒԿՈՍԼԱԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ՝
ՄԻԼՈՍԵԻԻՉԸ, ՈՐ ՊԱՅՔԱՐԵՑԱԻ
ԱՐԵԻՄՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՓԼՑՆԵԼ ՈՒԶՈՂ
«ՏԵՌՈՐԻՍՏ» ՆԵՐՈՒՆ ԴԷՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)

29-10-2001-ին, Լա Հէյ-ի «Միջազգային անարդարութեան մանկլաւիկներու» դատարանին առջեւ, Միլոսեւիչը սապէս արտայայտուեցաւ՝

«ԱՄԲԱՍՏԱՆՈՒԱԾ ԵՄ, ՈՐՈՎՀԵՏԵԻ ՊԱՇՏՊԱՆԱԾ ԵՄ ԱԶԳՍ, ՕՐԻՆԱԻՈՐ ԿԵՐՊՈՎ, ԵՒ ԱՄԷՆ ԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԻՆ ՀԱՄԱԶԱՅՆ, ՈՃՐԱՅԻՆ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ:

ԵՍ, ՊԱՏԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՄ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ՝ ԱՀԱԲԵԿԶՈՒԹԵԱՆ ԴԷՄ:

ՄԻՆՉԴԵՌ ՔԼԻՆՔԸՆ-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ՝ ՍԵՐՏՕՐԷՆ (ETROITEMENT)

ԿԸ ԳՈՐԾԱԿՑԷՐ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ»:

ՄԵՆՔ ԿԱՄՈՂՈՒԱԾ ԵՆՔ, ՈՐ ԵՈՒԿՈՍԼԱԻՈՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԻՐՐ ԲՈՒՆ ԿԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԿԱՉՈՒԵՏՈՒՈՒԹԵԱՆ ԿԱՆՉՈՒԵԼՈՒ ԵՆ՝

- 1.- Հռովմի այժմու Գահակալը
- 2.- Գերմանիոյ Գախկին վարչապետ Հելմուտ Զոհլը
- 3.- Ամերիկայի Գախկին Գախազահ Պիլ Զլինթընը:

Արեւմտեան աշխարհին իբր թէ «ազատ մամուլ» կոչուած թերթերուն ազատութեան չափանիշը և արդարութեան սկզբունքը հասկնալու համար բաւարար է, որ 29-10-2001-ին, Լա Հէյ-ի «անարդարութեան» դատարանին առջեւ դատուող Եուկոսլաւիոյ նախագահ Միլոսեւիչի մասին նոյն թերթերուն մէջ գրուածները կարդալը՝

1.- «Ֆրանս-Սուար»ին մէջ, դատավարութեան լուրը քանի մը տողով տրուած էր: Բայց Միլոսեւիչին՝ Զլինթընի մասին ըսածը չկար:

2.- «Լիպերասիոն»-ին մէջ՝ նոյնպէս, քանի մը տող: Բայց Զլինթընի մասին՝ ոչինչ:

3.- «Նիս Մաթեն»-ին մէջ, Միլոսեւիչին նկարը դրուած էր, բայց ոչ՝ նախագահին խօսքերը: Բնական է, Զլինթընի մասին անոր ըսածն ալ չկար:

4.- «Լա Լիպրը Պելժիք»- քանի մը տողով միայն՝ Միլոսեւիչին ըսածներէն. բայց ո՛չ՝ Զլինթընի մասին ըսածը:

5.- «Ինթերնասիոնալ Հերըլտ Թրիպուն»ի մէջ՝ Միլոսեւիչին նկարը: Զանի մը տողով ակնարկութիւն Միլոսեւիչին ըսածներուն, և բաւական ընդարձակ՝ Միլոսեւիչի դէմ անարդար ամբաստանութիւններ: Բնական է՝ ոչ մէկ խօսք Զլինթընին վերաբերող:

6.- «Լը Մոնտ»ին մէջ, բաղդատաբար միւս թերթերուն, դատավարութիւնը անլի իրատես ձեւով տրուած էր: 100 տողոց այս գրութեան մէջ, գոնէ 7-ը տող յատկացուած էր Եուկոսլաւիոյ նախկին նախագահին ըսածներուն, թէ՛ իր հայրենիքը պաշտպանած է «ահաբեկիչներուն դէմ»:

Եւ միայն «Լը Մոնտ»ին մէջ կարդացիցք Միլոսեւիչին դատավարութեան ընթացքին ըսած հետեւեալ խօսքերը՝

«Սերպերը, որոնք Խրուաթներուն Եուկոսլաւական Միութենէն բաժնուելուն հետեւանքով, անոնց զոհերը եղան՝ այսօր կը ներկայացուին իբր յանցաւորներ»:

Բայց նոյն «Լը Մոնտ»ին մէջ ալ, Միլոսեւիչին Զլինթընի մասին ըսածը չէր գրուած:

Նոյնպէս՝ «Լը Մոնտ»էն տեղեկացանք նաեւ, թէ շատ «արդար» մէկը եղող դատաւորը, Միլոսեւիչին խօսակցութիւնը «միջրոֆոնը» գոցելով կ'ընդհատէ եղեր:

7.- «Ֆիկարօ»- Ֆրանսական թերթերէն միայն «Ֆիկարօ»ին մէջ կարդացիցք Միլոսեւիչին Զլինթընի դէմ ուղղած հետեւեալ ամբաստանութիւնը.

«ԵՍ, ՊԱՏԻԸ ՈՒՆԵԾԱԾ ԵՄ, ԺՈՂՈՎՈՒՐԴՍ ՊԱԾՏՊԱՆԵԼՈՒ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԷՄ: ՄԻՆՉԴԵՌ, ԶԼԻՆԹԸՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, ՍՐՏԱՆԾ [ETROITEMENT] ԿԸ ԳՈՐԾԱԿԾԷՐ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ»:

8.- SUD DEUTSCHE ZEITUNG- Միլոսեւիչի դատավարութեան մանրամասնութիւնները ամենէն ընդարձակ ձեւով ներկայացնող Միւնխի գերմանական թերթերէն մէկը եղած է:

Բայց, շատ հետաքրքրական է այն, որ այս թերթը, Զլինթընի դեմ կատարուած ամբաստանութիւնը թեպէտ նոյնութեամբ տուած է, բայց Միլոսեւիչի խրուաթներուն, Եուկոսլաւական Միութենէն բաժնուելնուն պատճառուած ողբերգութեան մասին ըսածները չէ գրած: Անշուշտ՝ շատ «հասկնալի» պատճառներով: Որովհետեւ խրուաթներուն բաժնուելնուն առաջնակարգ պատասխանատուներէն մէկը՝ Գերմանացիները եղած են:


9.- Բայց, մեզի համար, ամենէն ցաւալին, Փարիզի երկու հայկական օրաթերթերուն՝ Լ.Յ.Դ.ի «Կամք»ին և դաշնակցականամիտ «Յառաջ»ին այս անարդար դատավարութեան հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնն է:

Այս երկուքին մէջ ալ, դատավարութեան լուրը տրուած է՝ վերջին էջին մէջ, երկրորդական լուրերուն կարգին, քանի մը տողով միայն:

Եւ շատ զարմանալի է, որ ասոնք ալ, արեւմտեան թերթերէն շատերուն նման, Միլոսեւիչի Զլինթընի դեմ կատարած «Ահաբեկիչներուն հետ գործակցելու» ամբաստանութիւնը հրատարակելու համարձակութիւնը չեն ունեցած:

Բայց մեզի համար ամենէն կարելորդ, Անարդարութեան ենթարկուած Ազգի մը ներկայացուցիչները եղող այս հայկական թերթերը չեն հասկցած, որ մանաւանդ 11 Սեպտեմբեր 2001-ին, New York-ի մէջ կատարուած գազանային ահաբեկչական արարքներէն յետոյ, Լա Հէյի դատաւորները՝ անմեղ Զրիստոսը մահուան դատապարտող անգուր հրեայ կրօնաւորներուն դերին մէջ մտած են:

Այստեղ կը հրատարակենք իրարու բոլորովին հակապատկերը եղող, երկու «Աշխարհներ»ու ներկայացուցիչներուն նկարները.



1.- Առաջին նկարին մէջ կը տեսնենք չորս գեղունիներու տիպարները, որոնք այսօրուան Արեւմտեան Աշխարհին մէջ, Սիոնիստներու ծրագիրներուն գործադրութեամբ մէջտեղ եկած, կեանքը՝ միայն կենդանական բնագոյններով ապրելու մտայնութեան խորհրդանշանն են:

2.- Երկրորդ նկարին մէջ կը տեսնենք մարդկային երեւոյթներ, գլխէն մինչեւ ոտքերուն ծայրը բոլորովին ծածկուած՝ հաւանաբար կիներ, որոնք կը ներկայացնեն «մութ աշխարհ» մը, 1500 տարիներ առաջ անապատներու մէջ ապրած վաչկատուն ցեղախումբերու կեանքը:



Ահա, այս մութ աշխարհին ներկայացուցիչները եղող ահաբե-

ՌԻՏ - ՄԻՍ - ԿՐԵՒՄԱ - Լ

կիչները, ուղեղնից լուացուած խաւարամիտ գաղափարներով և դրախտ երթալու մարմաջով, կը յարձակին «Արեւմտեան քաղաքակրթութեան» վրայ, որ հոգեպէս տկարացած և հիւծած է՝ Սիոնիստներուն երկար տարիներէ ի վեր գործադրուող ծրագիրներուն հետեւանցով:

Այսօր, շատ մը քաղաքական մասնագէտներ կ'ընդունին, որ 11 Սեպտեմբեր 2001-ին, Նիւ Եորքի մէջ կատարուած անհաւատալի ահաբեկչութեան օրէն սկսեալ, աշխարհ բոլորովին նոր և տարբեր դարաշրջան մը թեւակոխած է: Արեւմտեան աշխարհը, դրամատիրական հեռանկարներով՝ իր կիրարկած ծայրայեղ ազատութեան՝ «Լիպերալ-տեմոքրատի» կոչուող ծանօթ քաղաքականութեան զոհը եղաւ:

Mondialisation կոչուող աշխարհահայեացքը, դրամատիրական կառոյցը ամբողջ աշխարհի տարածքին պարտադրելու քաղաքականութիւնն էր, կը մնայ, և իրենց համար, միայն դրամական շահը կարելոր է:

Եւ աշխարհի քանի մը տասնեակ միջազգային մեծ ընկերութիւնները (բնական է Սիոնիստներուն հակակշռին տակ) միայն դրամատիրական ահու հեռանկարներով կ'որոշէին «Աշխարհի Ճակատագիրը»: Եւ կառավարութիւնները այս միջազգային ընկերութիւններուն ցուցմունքներով աշխատող, գործակատարներ էին միայն:

Եւ այսօր, մահու և կենաց դրութիւն ստեղծուած է արեւմտեան աշխարհին համար:

Եւ եթէ արեւմտեան աշխարհը իր միջազգայնական, աւելի ճիշդը՝ «Մարդկային Իրաւունքներ»

